



Ա. Գ. Ի. Ն. Ժ. ՏԱՐԻ 1971 ՅՈՒՆԻՍԹ ԹԻԻ 7
digitised by A.R.A.R.@

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ս. ՓԱՆՈՍՅԱՆ	Եզերերգ
ԱՐՄԱՆՏ	Սիրտ իմ խելառ
»	Թմբիր
»	Այնքան մօտիկ ես ինձ
»	Անհաւասար մի կռիւ է
Պ. ԳՈՒԲԵԼՅԱՆ	Շունը շապիկ է հագեր
Խ. ԱՍՈՅԵԱՆ	Սարդը
Յ. ԶՈՐԵՏԻ	Հայկական ուղեւորավեց
Ս. ՍԱՐԳՍՅԱՆ	Յետ երկարատեւ հիւանդութեան
Պ. ՍԵՒԱԿ	Յանուն եւ ընդդէմ «ռեալիզմի նախահիմքեր»ի
Վ. ԹԵՔԵԱՆ	Գոյութեան ազատ փիլիսոփայութեան ներկայացումը
Ս. ԶԷՅԹԼՆԱՆ	Կնոջ մը կեանքը (Զ. Շապիան)
Մ. ԷՍԼԻ	Էօժէն Խոնքսֆօ
* * *	Նշմարներ — «Տէր ազգութեա՛...»

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ. ՏԱՐԻ, ԹԻԻ 7

Յ Ո Ւ Լ Ի Ս

1971

ԳԵՐՈՒԹ

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

Ե Ղ Ե Ր Ե Ր Գ...

Մ'առ էր՝ կրճաք ապրիլ մարգավարի՝
Եզալ ծակաչ, դարձաւ չար եւ կծծի.
Այժմ ծանրաց, աշխարհ կշռող...

Ա.

Ի սկզբանէ մարդու ճակտին դրոշմեց Աստուած անմիջական գիշերով.
— Հասա՛կ մը հող:

Եւ Մարգը գոյութիւն առաւ Աղամ — Եւս գործուած առաջին մեղքէն
յետոյ: Աղամ եւ Եւսն նոր էին վոնտուած եղեմէն: Լիցուած էին քինա-
խնդրութեամբ առ Աստուած, որ ներել չէր գիտցած անոնց առաջին անհա-
զանդութիւնը: Ու Աղամ, վոնտուածի մաղձոտութիւնն ու դառնութիւնը
թափեց Եւսյի մէջ, որ յղացաւ չար եւ բարի հոգեվիճակով եւ ծնաւ խառ-
նածին մը, որ մարդ պիտի կոչուէր: Հաւանաբար Աղամ եւ Եւսն մնային
անբիծ եւ անծին, եթէ դուրս չըլլուէին դրախտէն:

Սակայն, Եւսն եղաւ ցանկալարոյց: Մուտ էր արգիլեալ պտուղին ա-
ռասպելը: Աստուած դտաւ Եւսն սքանչելի եւ չհրապուրուելու համար անոր
չնորհներէն, յօրինեց սուտը... որովհետեւ Աղամ եղաւ խանդոտ կողակից
եւ Աստուած ուզեց պատժել զինք:

digitised by

A.R.A.R.@

Աղամին առաջին հանդիպումը Եւային, եղեմէն դուրս, շատ բուռն եղաւ. առաջին սէրն էր: Ինք դժբախտ էր Եւայի երեսէն. ամբողջ դրախտը կորսնցուցած էր. ուրեմն կարծեց, թէ կը լուծէր իր դժբախտութեան վրէժը Եւայէն:

Կայէն եւ Արէլ եղան բարիի եւ չարի խառնուրդ մը, որ ոճիրով սրբագործուեցաւ: Ու մարդը եկաւ աշխարհ մերկ. անօդնական: Ահա թէ ինչո՞ւ անոր մէջ անեցաւ ու զարգացաւ ծակալքութիւնը:

Կայ աւանդութիւնը, զոր պատճառ են բերնէ բերան, սերունդէ սերունդ զրուած բնեւորներ ժայռերու վրայ կամ ժաղաղաթեայ մատնաններու մէջ...

Բ.

Ու աւանդութիւնը կը պատմէ.

— Համաձայն Տէրոջ կամօքին, երբ բազմացան Ադամ — Եւայի սերունդները ծովի աւազներու շափ եւ լեցուցին աշխարհը, երկիրը գերած դարձաւ: Բնական մահ չկար. ծերութեան տուտը չէր տեսնուեր: Կը հսկայանար ամէն ինչ, շնչաւոր կամ անշունչ ահաւոր զօտեմարտի կը բռնուէին եւ կոյս անտառներու մէջ օրն ի րուն զազանութիւններ կը պատահէին. ուստի կը յօշոտէր, բղիկ-բղիկ կ'ընէր տկարը եւ տկարին ճիւղ կը բարձրանար երկնք: Աստուած զգաց, որ սխալ մը գործուած էր իրմէ: Կարգ ու սարք չկար այլեւս աշխարհի մէջ, ուր առաջին անգամ պատգամած էր.

— Աճեցէ՛ք եւ լեցուցէ՛ք ծովը, ցամաքն ու երկիրը կենդանով...

Ու բարձրացան բոցոքները մինչեւ եղեմ: Կենդանական անբարբառ աղաղակներ էին, որոնք ի մի խառնուած պղտոր, փոթորկային ոռոտ կը դառնային եւ այնպէս կը թուէր, թէ սաստը աստիճան առ աստիճան պիտի բարձրանար ու խախտէր երկնային թաղաւորութեան հիմքը:

Բարի էր առաջին պատգամը. սակայն, ե՞րբ չէ տեսնուած որ բարիքը չծնի չարիք ու պատուհաս, որովհետեւ Աստուած մոռցած էր ճշդէլ ապրելու կերպը: Լուսնայն կը հասկցուէր, թէ ապրելու համար մարդ ու անասուն պէտք էր իրարու միս ուտէին. ուրեմն միշտ բոկտելու, յօշոտելու կերքը կը շափազանցէր զոհերու թիւը, կ'օրինականացնէր անարդարութեան մեղքը աշխարհի վրայ: Տուժողները տկարներն էին եւ սակայն Աստուած հիմնած էր իր թաղաւորութիւնը տկարները պաշտպանելու համար: Այսպէս էր հնուց ըսուած խօսքը.

— Կայէն մեռցուց Արէլը եւ Աստուած անիծեց չարիքը...

Իսկ Աստուծոյ անէծքը միշտ ուժեղին հետ եղաւ ի դէմ տկարին, այսինքն՝ արկղականութեան եւ ոչ Կայէնի:

Եւ ահա բոցոքի ձայները եղան որոտ, թնդին ու սարսեցին աստուածային վահը: Աստուած ունեցաւ վախը իր հիմնած հարստութեան կործանումին, որովհետեւ մարդն էր, որ կը ղեկավարէր ըմբոստութեան որոճը: Ու լրկեց Գարբիէլ հրեշտակը երկիր, համընդհանուր հաւաքի հրամանը շեփոթելու աշխարհի չորս ծագերուն: Մինչ այդ, Աստուած դահը իջեցնել տուաւ Սրբազան Լերան վրայ, ուր ամպշովանի մը հաստատեր էին հրեշտակները:

Սրբազան Լերան շուրջը չորս անտառներ կային, վայրի պտուղներով բեռցուած: Ու կոյս անտառներուն մէջէն կ'ընէր մայր գետը:

Որոշուած օրը, խումբ-խումբ, ցնդախումբ առ ցնդախումբ, եկան հա-

աբուհեցան բոլոր շնչաւորները կենդանական աշխարհին, կոյս անտառի հո-
վանոցներու տակ եւ ջուր խմեցին Մայր գետին:

Եկան լեցուցին կոյս անտառները գոռում-գոշումով, կռինք-խրին-
լով: Ո՛րք երկոտանի էր, ո՛րք՝ չորեքթաթ, սմբակ կրող եւ ճիրաններ: Հաստ
վիզ, երկարաճիտ, խոշոր գլխով, ո՛րք տափակ, ո՛րք ցցուն, կլոր, երկարա-
ցուն: Մէկը երախը բաց. միւսը կեռ կտուցին հարցականով. «Իշամարմին,
թեփոտ, կարծրամաշկ, ողորկ իրան, բրդոտ դուռն, փարսախ պոչով, կլորիկ
աչք, շեղուած նայուածք եւ ձայնային ու գոյնային տեղական վառ ֆուլջուր-
ներով»:

Երկոտանին նիստ ունեցաւ. չորքոտանները կռնակ տուին ծառերու
բունին: Սողուն-գետուն մտան կանաչութեան ծոցը եւ օձերը օղակ-օղակ դա-
լարեցան ճիւղերն ի վեր, ուր թառ ըրին փետրաւորներն ու կապիկի սերունդ-
ները...

Եկան եօթ օր ու եօթ գիշեր ու անտառները կորսնցուցին կռուութիւնը,
պղծուեցան: Յետոյ եկաւ սպասման պահը, երբ Գարրիէլ հրեշտակ կը սկսէր
ներկայ-բացական: Երկար էր ցանկը եւ Աստուած՝ անհամբեր.

— Հը, Գարրիէլ, որդի՛, չվերջացա՞ւ ներկայ-բացականը:

— Ո՛չ, Տէր իմ, կան, որ բացակայ են եւ կատկածելի է անոնց դոյու-
թիւնը. կան եւ շատեր, որ ինքնութիւն եւ արձանագրութիւն չունին Մայր —
Տոմարին մէջ:

— Մի՞թէ օրինապահութիւն տիրած է աշխարհի վրայ...

— Այո՛, Տէր իմ. կա՛ն, որ խառնածին են, այլասեռական, որ ոչ մէկ
օրէնքով թոյլատրուած է...

Այո հարց ու պատասխանին կը ծառայէր իրրեւ ետին Փոն, խուլ ու
զորդային որսառմ մը, որ միախառնուածութիւնն էր բողբոջ ձայներու:

Ներկայ-բացական կը շարունակուէր սակայն յաւելումներով ու ջրն-
ջումներով, մինչդեռ կը հասնէր համբերութիւնը ժողովականներուն: Եօթ օր
տեսեց հշդումը եւ եօթ օրուան մէջ եօթն անգամ յղացաւ Մայր Գետը եւ
ձուկ արտաքսեց իր ընդերքներէն, որ սնունդ հայթայթէր մսակերներուն:
Կոյս անտառները նոյնպէս եօթն անգամ ծլարձակուեցան եւ թարմ տերեւներ
տուին խոտակերներուն: Օձազգիները հող ճաշակեցին եւ բորենանման ժանտ
զազաններ պատահական զոհերու հոտած ճաշակեցին...

Ութներորդ օրը՝ հանդիստի օր էր: Բոլոր աշխարհը քուն մտաւ: Աստ-
ւած քնացաւ՝ գլուխը ափերուն մէջ առած: Եունը մնաց անքուն. ընտելացած
էր մարդուն, որովհետեւ չէր մոռցած ոսկորը, զոր մարդը նետած էր առ-
ջեւը, երբ սոված՝ կը սլքտար քարանձաւին շուրջ:

Ութներորդ օրը մարդուն բնտկացուցած աշխարհ աւետեց այդարացը:
Գարրիէլ հրեշտակ չեփորը դրաւ չրթունքներուն. «Լուութիւն. կը սկսինք»:

Աստուած չփեց աչքերը, պայծառացան դիմապիծերը անտառի բնակիչ-
ներուն: Տեսաւ մարդը, որ անհամբերութեան նշաններ ցոյց կու տար. կան-
չեց.

— Աղամորդին թո՛ղ առաջ դայ:

Մարդը առանձին չէր: Աչք ըրաւ եւ ահա ծառի մը տակէն դուրս եկան
եզն ու էշը, նոխազն ու խոյր, կատուն եւ շունը եւ իշուն կոնակին թառած
կարմրակատար աքլորը: Բոլորն ալ խոհական, պանդաղկոտ, դառնաղէժ,
ճորտացածի կնիքը ճակատուն, անոնք յառաջացան եւ գիծ կազմեցին իրենց
տիրոջ հետեւ:

— Ձեզ ո՞վ կանչեց, — նեղուեցաւ հրեշտակը:

Չարքաշութեան նշանը իրենց ուտին, բնական կենդանիները դարձան եւ ցոյց տուին մարդը:

— Այո՛, ես նշան ըրի, որ Հետեւին ինծի, — ըսաւ մարդը:

— Թո՛ղ տուր, Գարրիէլ, որ տուալ գան. ի՞մ չըրածս ըրած է Ադամոր-սին եւ վայել է իրեն ի՛նչ որ ըրած է ցարգ...

Ընտանի կենդանիները չեղ նայուածքով տեսան, որ Աստուած կը ժող-տէր. ժպտիլ չուզեցին իրենք: Գերին կը ժպտի՞րնաւ: Մեկուսի կանդնած՝ ախոռի բնակիչները ազմուկի պատճառ եղան: Վայրի դաղանները ժանիք կոճակեցին: Կը զգային, որ Ամենակալ Տէրը կողմնակալութիւն կ'ընէր: Գայլը համարձակեցաւ նոյնիսկ յարձակիլ նոխազին վրայ, բայց խոյր հակայ եղ-ջիւրներ ունէր եւ զարկաւ անոնցմով եւ գայլին փորը պատռեց: Ուռնալէն փո-խաւ գայլը եւ մնջեցին միւսները:

Իսկ Աստուած բարբառեցաւ եւ ըսաւ.

— Որդի Ադամայ, ստեղծեցի քեզ ի՞մ պատկերի նման եւ կ'ուզեմ, որ դուն փառաւորութիւն ի կենդանւոյն: Կը տեսնեմ, որ աւելի խելացի ես, քան ես ուզած էի: Կրցած ես իշխել ահա անոնց վրայ: Որպէսզի անցաւ մնաս եւ բնաւ տիրութիւն չտեսնես եւ ոչ ալ թառամութիւն, քեզ կը բաշխեմ երե-սուն տարուան կեսնէ: Գնա՛ եւ իշխէ երկրին եւ թող բոլոր կենդանիները ըլլան քու գերին եւ դուն իրենց տէրը: Վայելէ բնութեան բարեքները եւ փառք տուր ինծի: Ու երբ հասնիս երեսունին վերջը, դառնաս արձանակերպ եւ մնաս ոտքի, կանգուն յաւիտեանս յաւիտենից...

— Ամէ՛ն, — ըսաւ Գարրիէլ հրեշտակ, որ դպրի պաշտօն ստանձնած էր այժմ:

Մարդը, որ հուժ միտ ուտել սորված էր եւ համեստ ըրած վայրի ծա-ռերու պտուղներէն եւ կը տեսնէր կենդանիները հնազանդ իրեն, դժգուն մնաց տրուած տարիքէն:

— Քի՛չ է երեսունը, Տէր ի՞մ. ծինս չի մեծնար օրով, այլ տարիով: Մինչեւ տասը, ես անդիտակ արարած մըն եմ. տասնը՛հինգիս նոր կը զգամ սիրոյ կրակը. քսանին կը ծնի որդիս կամ դուստրս: Երբ ան դեռ խելիքի չէ եկած՝ արդէն ես երեսուն պիտի ըլլամ: Ի՞մ վայելքս ո՞ւր է, ըսէ՛, Տէ՛ր Ա-մենակալ:

Աստուած տեսաւ, որ ծակաշութեան բոցը կը վառէր մարդու ակ-նարկին խորը եւ այն ասէն յարեց.

— Քի՛չ չէ՛ տուածս, բայց կը թուի, թէ դուն ծակաշք ես. սպասէ՛ այդ կոնդին վրայ նստելով՝ ցնոր տնօրինութիւն:

Գ.

Ապա Աստուած, մատի նշանով ցուցմունք ըրաւ, որ եղբ յառաջանար քիչ մը, մօտենար, որովհետեւ թաւ ձայն ունէր:

— Ի՛, եզօ՛ ջան. դո՛ւն ինչ կ'ըսես, զո՞հ ես տիրոջմէնդ, որ քեզ միայն յարկով կը սնուցանէ. բայց բեռդ ծանր պիտի ըլլայ, քունդ՝ խռով: Պիտի քնանաս, սակայն մէկ աչքդ բաց պիտի մնայ: Որովհետեւ մարդուն հետ կ'ապրիս, ահա՛ քեզի եւս կը բաշխեմ երեսուն տարիք: Յօժա՞ր ես, եզօ՛ ջան, մի՛ քաշուիր, խօսէ՛:

— Ձէ՛, Տէ՛ր, չեղա՛ւ: Կը խորհէի, թէ դուն զիս մարդուն քով վէպերի պաշտօնով պիտի պատուես. բայց ահա՛ թէ ի՞նչ կը լսեմ: Ե՛ս, բեռնակիր, արօր քաշող, տունը ուսիս՝ ես յարգակե՛ր. ո՛չ, չեմ ընդունիր, այն ինչ որ տուիր՝ չա՛տ ու շատ է ուրախ չեղող մէկու մը համար: Մէկ երրորդովս կ'ապրիմ, որ գոյութիւնս փաստեմ...:

Եւ եղբ, որ դառնութեամբ, խուչ ու թաւ ձայնով կը խօսէր Աստուծոյ հետ, տեսաւ, որ Մարդը ելած էր կոնդի մը վրայ եւ մատը վեր բարձրացուցած, անհամբերութեան նշաններ կ'ընէր: Իսկ ետեւը կային գոմեղաւորները, որոնք իրենց զլուխները ծռած էին, որովհետեւ տառապեալներ էին իրեն պէս:

Ու մինչ եղբ ետեւ կու գար, կ'թոտելով, մէջըը թուցած, կը լսէր Մարդուն ձայնը, որ կ'ըսէր—

— Տէ՛ր, Տէ՛ր... տո՛ւր ինծի եզին քսանը. մի՛ գրկեր զիս այդ ուրախութենէն:

Աստուած կը սիրէր պտտկերովն ստեղծած մարդը, սակայն չէր դիտեր, թէ ան, ծակաչէ եւ ազա՛հ էր. խելացի, բայց անմիտ. ուշիմ բայց ոչ հեռաւոր: Բնաւորութեան այս փոփոխութիւնը սրտովը չէր, սակայն չնեղեցաւ, այլ քմծիծաղով ըսաւ.

— Եթէ չզղջաս. առե՛ի՛. թո՛ղ եղբ մտնէ ու ապրի մէջդ...

Մարդը շանդաղարձաւ Տիրոջ ըսածներուն: Ուրախ էր ու դո՛հ: Նրստեցաւ կոնդին վրայ եւ խորհեցաւ շտա՛ծ քսան տարիներու ապրելակերպի մասին, երբ լուրը կանչուեցաւ Տիրոջ առջեւ:

Շունը չձգեց, որ Աստուած ընէր հարց կամ թելադրանք: Պօսեցաւ ինքը հափ-հափ ընելով ու ետեւ երթալու փորձեր կատարելով.

— Ե՛ս, Տէ՛ր Ամենակալ, հիմակուրնէ կ'ըսեմ, թէ դո՛հ չեմ. ինծի տուած ես արդէն շունի կեանք: Ստեղծե՛ր ես զիս քծնող, փխրուն սիրտ եւ հաւատարմութեան քնաղդ: Առաջին օրէն կապուեցայ մարդուն, որովհետեւ ան զիս կաշառեց ոսկորով մը եւ շղթայեց իմ ազատութիւնը: Հիմա ես իր դերին եմ. քունս խաղաղ չէ. պիտի հսկեմ իր տան վրայ, երբ ան բացակայ է տունէն. օր ու զիշեր հանգիստ չունիմ. գլխուս վրայ ծածկ չունիմ. ամուսնւնալ ուրսը թողուած եմ...

Ու շունը հոս սկսաւ փղձկիլ, լալ: Փղձկեցան իր բախտակիցները, որովհետեւ տխուր էակներ էին, բայց մարդ չէին, այլ անասնական դասակարգի չարքալ ներկայացուցիչներ:

— Հը՛մ, — ըրաւ Աստուած: Միայն քաներ չէր ըսած շունը: Կը հասկընար անոր սիրտը կրծող ցաւը: Ու յուզուած ձայնով աւելցուց.

— Կը հասկնամ վիշտդ ու դառնութիւնդ. ուզէ՛ փափաքածդ տարիքը եւ ես քեզի կու տամ սիրով դայն.

— Գուցէ տաւր բաւ ըլլայ ինծի: Կ'ապրիմ եզին հետ, կը մեռնիմ իրեն հետ. մենք իրարու վիճակէն լաւ կը հասկնանք: Այնպէս չէ՞, եղօ՛՛ ջան, դուն ըսէ, համաձայն ես, որ քեզի հետ տանինք մեր կեանքը...

Եղբ զլխով համաձայնութեան նշան ըրաւ: Շունը, որ ետ կը դառնար, տեսաւ մարդը կրկին կոնդին վրայ ելած կանգնած, մատը վեր բարձրացուցեր էր: Մինչ Տէր Ամենակալը փառ-փառ մօրուքը կը շոյէր եւ կ'ըսէր.

— Թո՛ղ ազածդ ըլլայ, հաւատարիմ կենդանի...

— Ես կ'ուզեմ շունին քսանը, — թախանձեց մարդը, որուն երկար ապրելու ախորժակը հետզհետէ բացուած էր, դիւրին շահուած առիթներով:

Աստուած խղճաց մարդուն. լսած չէր ուզեր ըլլալ անոր ձայնը, որ կը կրկնէր նոյն յանկերպը: Սակայն անտառէն յիշեցնողներ եղան. անոնք աւելի իմաստուն կը թուէին, քան մարդը եւ իրենց յիշեցումը բարի նպատակով չէր: Որքան որ մարդը խորանար տարիքներու խառնարանին մէջ, այնքան ան մարդ ըլլալէ պիտի դադրէր եւ ապրէր Համապատասխան կեանք մը անոնց, որոնցմէ կը խլէր ահա քսանական տարի...: Ու Աստուած ստիպուեցաւ համաձայնիլ:

— Տո՛ւի քեզի քսանը. թո՛ղ մտնէ ու ապրի մէջդ շունը...:

Գարբիէլ Հրեշտակը ոչեւ չզգաց կանչել թուր ընտանի կենդանիները, ոչ կանչեա՞ծ էին մարդուն ետին, իբրեւ թիկնապահներ անոր: Բայց աչքին դարկաւ մարդանման կապիկը, որ ճիւղէ ճիւղ կը նետուէր եւ անճոռնի ճիւղեր կ'արձակէր: Անտառին մէջ կայք հաստատած ժողովականները կը սկսին ջղայնութեան նշաններ ցոյց տալ ի լուր կապիկի ճըւճընոցներուն: Պատահեցաւ, որ ճիւղէ մը նետուած պահուած սահեցաւ ինկաւ վար, ճիւղը առիւծին առջեւ, որ թաթով ուժեղ հարուած մը տուաւ անոր գանկին: Մարեցաւ կապիկը եւ կորոնցուց զիտակցութիւնը: Բարձրացաւ ահադին ազմուկ, բողբոջի ձայներ առիւծին դէմ, որ վայրագարար հարուածած էր խեղճ կապիկը:

Աստուած կանչեց.

— Բերէ՛ք կապիկը առջեւ, բերէ՛ք այդ օրինադանցը...:

Փիղը կնճիթով առաւ կապիկը, նետեց ուտին եւ ծանր-ծանր քայլերով բերաւ գո՛ւր Տիրոջ առջեւ դրաւ եւ ինքը կրկին վերադարձաւ տեղը:

Աստուած փշեց իր շունչը կապիկին վրայ. կապիկը խոր քունէ արթնացածի պէս բացաւ աչքերը, որ ապշահար էին եւ կարմիր: Տիրոջ դժգոյս վրա ազդեց իրեն. փորձեց ետ փախչիլ, երբ Գարբիէլ Հրեշտակը բռնեց առջեւը.

— Կեցի՛ր, ա՛յ կապիկ, ու լսէ՛ Տիրոջ ձայնը:

Կապիկը ուստու՞մ ըրաւ եւ թուա Գարբիէլի ուտին եւ սկսաւ ծամածռութիւններ ընել, այնպէս ձեւացնելով, թէ ահա յաղթած էր Հրեշտակին եւ եթէ ուզէր կրնար նետուիլ միշտ եւ աստուածային դահլիճ:

Այդ ծամածռութիւնները ծիծաղելի էին եւ ամբողջ անտառը կը խնդար ու ծափ կու տար: Աստուած ինքն ալ կը խնդար իր ստեղծածին վրայ եւ կը թուէր գոհ ըլլալ, որ կապիկը քիչ մը զուարթ մթնոլորտ կը բերէր ծանրախոհ ժողովին:

Կապիկը առնուեցաւ Տիրոջ ծաղրէն եւ մէկէն ուստու՞մ ըրաւ դէպի ծառը, որուն ճիւղերը կախուած էին վրան: Մազլեցեցաւ կատարը: Եւ որովհետեւ շատ էր զրգուտած, որ իր վրայ քարեր կը նետէին, կապիկը այդ գործողութիւնը եւ ահագին հնչունկոյզներ փրցնելով նետեց խնդացողներուն վրայ: Եղան վերաւորներ: Ծիւղեր թռան առ Աստուած, եղաւ ողբ ու կոծ եւ Ամենակալ Տէրը հրամայեց, որ կապիկը իր առջեւը դար կանգնէր:

Խեղճացաւ կապիկը, իջաւ ծառէն եւ ինքնիւր վրայ զլխիկոծի տալով, զլտորուելով եկաւ կեցաւ Տիրոջ առջեւ: Այն ատեն Աստուած մեղմացած եւ բարի թուեցաւ իրեն:

— Ա՛յ, կապիկ, զիտեմ, որ ծուռ ստեղծուած ես, կ'ընդունիմ սխալս, ու կը մեղքնամ քեզի: Ես ուզեր էի քու մէջ արթնցնել կենդանական զուարթախոհութիւնը: Բայց կր թուի, թէ չափազանցած եմ աւելի. իսկ ամէն ինչ որ չափազանցուած է, մեղքի հետեւանք է: Ուրեմն, կը թողու՞մ քու կամքիդ, դուն որոշէ՞ քու հակառակորդը...:

Կապիկը ծամածռեց դէմքը եւ ապա լրջացաւ։ Որոշում տալը դժուար էր։ Մտածեց եւ ըսաւ․

— Իմ կամքի՞ն կը թողուս, Տէ՛ր, Հա՞, է՛, լաւ․ որ իմ կամքիս կը թողուս, ես կամք չունիմ, իմս ակամայ չարժուած է, կիրք, տեղաշարժ։ Հոնդարտ չեմ կրնար մնալ, իսկ կենդանի աշխարհը դոյն կ'առնէ ծիծաղի մէջ։ Ես չեմ ուզեր ծիծաղի առարկայ ըլլալ․․․ Ես պիտի ապրիմ դուցէ մէկ լման տարի կամ ըստ պահանջի քիչ մը աւելի։

Ու կապիկը իր կապիկի խելքով աւելի խելացի էր, քան մարդը, որ ահա, մատը բարձրացուցեր էր վեր եւ կ'ուղէր օդտուփը կապիկի անորոշ պատասխանէն։ Այնքախաղով կապիկը ծաղրեց մարդուն ըրածը եւ փախ տուաւ դէպի ծառը․

— Մակա՛շք, չզոհանա՛ս բնաւ ունեցածովդ եւ աչքդ բաց մնայ․․․

Եւ ասիկա կապիկին անէծքը եղաւ, որ մարդուն վրայ չոքեց ու այլեւս չհեռացաւ անկէ։

Արդարեւ, մարդը չէր գոհացած առածներէն։ Աստուած տեսաւ անոր ցցուն մատը եւ զայրացաւ եւ իբրեւ պատիժ պատգամեց․

— Թո՛ղ քեզի ըլլայ կապիկին կեանքը, ա՛յնքանով՝ որ ան յօժար է։ Աղահուլթեամբք մնաս անկուշտ եւ կապկութիւն ըլլայ քու վերջը․․․

Դ․

Համբնդհանուր հաւաքի օրերուն, երբ մարդը այլեւս տիրացած էր բաժին մը ուրիշ կենդանիներու տարիքին, կը սկսէր անհանգստութիւն զգալ։ Կը դառնար ջղախին։ Ա՛հ՝ որ կը ժառանգէր եղան, չունին ու կապիկին կեանքի բնութագրիծերը։ Մակաշքութիւնը արթնցուց մէջը հոգը տունին, որ եղէն կու գար, այսինքն՝ դառն դատել եւ շահածը տալ տունին եւ ինքը մնալ յարդակեր։ Աստուած կը գործէր կրկին անխմանալի սխալ մը։ Տարիքներու որոշման օրը, մարդը արդէն ունէր իր երեսունը։ Իսկ յաջորդ օրը կ'ըլլար սկիզբը երեսունըմէկին ու մարդը կը խրէր եզակիան կեանքի ոլորտէն ներս․

— Տէ՛ր Ամենակարող, թոյլ տուր, որ երթամ․ տունը ինծի կը սպասեն․ կան թիւով տասներկու լաճեր, որ անթի եմ․ պէտք է հոգամ անոնց ապրուստը․․․

Աստուած քծծիծաղ ունեցաւ․ կը հասկնար մարդուն մէջը կատարւածը։

— Համբերութիւն ունեցիր․ եղիր եզան շափ համբերատար եւ ամէն ինչ լաւ կ'ըլլայ։

Մարդը ստիպուած էր սպասել համբերութեամբ։ Համբնդհանուր ժողովը վերջ չէր գտած։ Զարմանալի էր, որ միւս շնչաւորներէն ոչ մէկը եղաւ ծակաչք մտրդուն պէս։ Բոլորն ալ կիսուած օւղեցին ունենալ իրենց տարիքը։ Եւ Աստուած բարի էր եւ հաղաւար․ շատիպեց ոչ ոքի, որ որոշուած տարիքը բնորոշէր։ Ու ասկէ շատ գործ եղաւ Գարբիէլ հրեշտակին համար, որովհետեւ աւելցած տարիքի ազրահաւաք դարձաւ եւ ամէն օր լեռնաշափ փչրուած տարիքներ հաւաքելով թափեց դետը, ուր անոնք չըջափոխուելով ձուկերու մէջ կը մտնէին, դանոնք պարարտացնելով․․․

Թէ քանի՞ օր տեւեց կեանքի բաշխման արարողութիւնը, յայտնի չեղաւ, որովհետեւ ժողովականները կորսնցուցեր էին ժամանակի զգացողու-

թիւնը, Զեռանց օրացոյցներ ալ չկային եւ ոչ ալ անօթութեան զէպքեր, քանի որ մայր գետը անդադար ձուկ կ'արտաքսէր։

Վերջին օրը եղաւ պաշտօնակոչութիւն։ Ի վերջոյ Աստուած կ'ուզէր, որ կարգը պահպանուի երկրին վրայ։ Քննութեամբ եւ փաստերով հաստատած էր Ան արդէն, որ ցամաքի վրայ միակ վստահելին Առիւծն էր — վեհահաս, ուժեղ եւ զեղեցկութեան մարմնացում։ Գարրիէլ Հրեշտակը պիտի արձանագրէր կենաց մատեանին մէջ։

— «Առիւծ, արքայ ի վերայ կենդանեաց գետնաքայլ»։

— «Արծիւ, արքայ հօր, սլացիկ, թռչնոցն ի յերկինս»։

Ու այնուհետեւ Աստուած շատ մտածեց, բայց չգտաւ բարձար մէկը, որ իշխէր ծովերու եւ ջրերերու վրայ։ Ի մտի ունէր կէտ ձուկը, սակայն, այս մէկը թիւրիմացարար ինկած էր այնտեղ եւ անծին չէր, այլ ծնող եւ իր բնութիւնը համապատասխան չէր ձկնաշխարհի թեփուկաւորներու բնութեան։ Կար հասկ շնամուկը, որ սակայն շատ էր վայրագ, տմարդի եւ բորեհիւսակաւ կիրքով — կոնակէն հարուածող — ուստի իշխանութիւն ունենալուն պէս կրնար տիգրաւորաւ հաստատել ծովերու վրայ։

Իսկ Աղամորդի՞ն։

Գուցէ Աստուած ի մտի ունէր ծովերու թաղաւորութիւնը տալ մարդուն, քանի որ մարդը ճարպիկ էր ու խելացի եւ կրնար տապան մը շինել եւ չրջիլ ջրերու վրայ։ Սակայն Աղամորդին, որ խլած էր շատ մը տարիքներ եւ քիչ պիտի չապրէր, բողոքեց։

— Դո՛ւն, Տէ՛ր, ըսիր թէ աշխարհի բոլոր բարիքները կու տայիր ինձի։ Իսկ երբ ես չեմ տէրը աշխարհին, ինչպէ՞ս պիտի վայելեմ զանոնք։

Եւ Աստուած ճիշդ գտաւ մարդուն բողոքը։ Ու հրամայեց Գարրիէլ Հրեշտակին, որ յարձարագոյն իշխանութիւնը յանձնէր մարդուն եւ ձեռակերպէր նոյնանման արձանագրութիւն մը կենաց մատեանին մէջ։

Ու Գարրիէլ Հրեշտակ առաջին անգամ յզացաւ լաւագոյն արտայայտութիւնը։

— «Աղամորդի՛, արքայից արքայ եւ տիեզերակալ՝ օդի, ջրերի եւ ցամաքի վրայ։ Սահման իւր — լուսանդօտին»։

Այս օր դրուեցաւ եւ յայտնի դարձաւ մարդուն, ան այլեւս սպասելիք չունէր, մինչեւ իսկ անոց Աստուծոյ ներկայութեան։ Վեր առաւ կոճղը, որուն վրայ նստած էր եւ անով տուաւ ջարդեց եղնիկին գլուխը։ Մինչ վայրի գաղանները կ'առնէին վաթող արեան հոտը, մարդը առաւ շալակը եղնիկի նշնշացած դին եւ կոճղը մէկ ձեռքին, առաւ քայեց։ Տունին հողն էր, որ կը խօսէր մէջը։ Որովհետեւ պէտք ունէր ուտելիքի, պէտք ունէր վառելիքի եւ եղնիկին մորթը պէտք պիտի գար ծառայելու իբրեւ ծածկոց՝ ամօթը գոցելու համար։

Ընտանի կենդանիները հետեւեցան մարդուն, որ իրենց տէրն էր ու պաշտպանը։ Քիչ ետք էլը պիտի կրէր բռն ու մարդը իր կոնակին վրայ։

Մարդուն գործածը ոնիր էր, կատարուեցաւ Տիրսիլ եւ կենդանիներու աչքին առջեւ։ Սակայն այդ արարքը բնական էր եւ կանխամտածուած արարչութեան օրերէն։ Աստուած էր ստեղծած միւսը, որ ծառայէր մսակերին, ինչպէս խոտը՝ խոտակերներուն։ Ու այդ ժամանակներէն ալ կը սկսէր թոյլի եւ ուժեղի միջեւ պայքարը։ Տկարր պիտի տուէր միշտ, հաւաքի նշանաւոր այդ օրը խոտակերները ահաւոր դոհեր տուին ու փախան մտան ծերպերը, անկոխ անտառները ու բնակեցան անդ։

Աստուած չէր կրնար միջամտել, որովհետեւ իր տնօրինած օրէնքներուն եւ սովորութեանց հակառակը զործած պիտի ըլլար: Ու իր սխալ օրէնքները օրինականացնելու համար ընդմիջտ, մատը բարձրացուց եւ ըսաւ.

— Օրհնեա՛լ ըլլայ որսորդութիւնը, որ կը ծառայէ փորին. իսկ փորը թո՛ղ մնայ անկուշտ, մարդո՛ւ աչքին չափ...

Ի դուր չէր, որ մարդիկ այնուհետեւ առասպելացուցին աչքին ծակաշրութիւնը: Դարեր շարունակ եղաւ խօսքի նիւթ, մինչեւ որ փաստուեցաւ Աստուծոյ խօսքը: Գտաւ մարդուն մէկը «Իր» մը գերին ինկած: Քննեց ու ղենեց ու բան չհասկցաւ: Իրբեւ անդտանելի իր, տարաւ զայն ժամոռակին տիրոջ թագաւորին իրբեւ նուէր:

Թագաւորը նայեցաւ, տնտղեց եւ ոչինչ հասկցաւ: Ու ամօթով ջմնալու համար իր Հպատակի աչքին, թելադրեց որ դէ՛մը ուղէ՛ ուղածը: Մարդը ակոմայ յարեց.

— Իր ծանրութեան չափ ոսկի տուր:

Թագաւորը Հրամայեց կշիռքի զարնել «Իր»ը: Բայց տեսնուեցաւ որ ան ծանր կը կշռէր, աւելի քան մարդաբաշը: Զարմացան մեծ-մեծ մարդիկ, բայց դադարեցը լուծող շգտնուեցաւ: Այն ատեն դիւղին մէջ ծեր մարդ մը կար. կանչեցին. եկաւ: Ատաւ, գնեց «Իր»ը եւ հասկցաւ ի՛նչ ըլլալը անոր:

Անդամ մըն ալ զարկին կշիռքի: Մանր էր. իմաստուն մարդը առաւ պտղունց մը հող եւ ծածկեց «Իր»ը: Այն ատեն կշիռքին երկու նմարները եկան հաւասարեցան իրարու:

— Այս ի՛նչ է, — Հարցուց թագաւորը զարմացած:

— Տէ՛ր, թագաւոր, ասիկա մարդու ա՛չք է. կը դո՛ւնայ մի՛այն տի մը հողով... իսկ թագաւորութեանդ գանձը՝ ոչի՛նչ...

Եւ այդպէսով կը ճշգուէր մարդուն ճակտին դրոշմուած դիրին յաւիտենական ընոյթը:

— «Հո՛ղ էիր, հո՛ղ դարձիր, հոսա՛կ մը հողին մէջ»...

Ու յաւիտենական ընոյթ կրեց մարդուն կեանքը, եղաւ ան մնայուն: Անհետացան հրէշ-հսկաները կենդանական աշխարհին: Անոնց խոշորութիւնը եղաւ փճացման հետեւանք: Դարերու փորձը, փորի պէտքին հետ, բաւ չընշաւոր եւ անշունչ իրերը փոքրակազմ: Ու ինչ որ կար անոնց մէջ իրբեւ սիրտ, միտք եւ հոգի ու շունչ, մնաց նոյն ծաւալով եւ նոյն ընոյթով: Մնաւ ճարպիկութիւնը, որ ծակաշրութեան երախտաւորը դարձաւ: Ու բազմացան աղամբորդիները ծովի աւաղի չափ եւ լեցուցին աշխարհը կրկին իրենց կանչերով ու կոչերով, թշնամութեամբ ու վայրադուլեամբ: Եօթը պորտը դուռ ինքզինք հակառակորդ յաջորդ եօթը պորտ դարձերուն: Ու հակառակութիւնը ծնաւ ջարդարարութիւն: Ու բնազդական էին,

— Բզկտելը, խիստութը, ճորտացումը, տիրակալումը...

— Պատերազմիլը, ցեղասպանումը...

— Անաստուածութիւնը.

Որովհետեւ հօտին մէջ արուն համակ կիրք էր, քանզի Հարէմներուն մէջ մարդը ցոփ էր: Բեղմնաւոր էին արգանդները, խառնածինները, որ պիտի յճանչնային իրենց ծնողքը, շատցան ու տիրեցին աշխարհին: Բարի չէր մարդը, զոր ծնաւ Եւան. յաջորդները եղան շար եւ նախանձուտ, կրքոտ ու բիրտ, որոնք յաւելումներ էին ծակաշրութեան Հաշուոյն:

Եւ Աստուած տեսաւ, որ ինք ինկած էր թիւրիմացութեան մէջ. որովհետեւ պատգամած էր ի սկզբանէ որքա՛ն օրհնեա՛լ էր... եւ աչք դոցած մար-

դու ծաղկաշուքեան վրայ, երբ տարիքներու բաշխման մէջ մարդը իւրացուց Շղան, Շուենին եւ Կապիկին իրերամերժ բնութիւնները եւ այդպէսով պահեց երկարակեցութեան շափանիչը:

Ե.

Ու Աստուած խոկաց միշտ. բայց խոկումը դործի չփերածուեցաւ:

Պէտք եղան միլիոնաւոր տարիներ, որպէսզի Ան զգաստանար եւ փրկատուէր լուծում աշխարհի վրայ տիրող անարդարութիւններուն: ինչու չէր այլեւս. կը լսէր երկուն բարձրացող ողբերն ու ճիւղերը, բողբոջի եւ անէծքի ձայները: Չէր կրնար զրկել Փաբրիէլ հրեշտակը, որովհետեւ ան հոգեւոր էր եւ ոչ հաշտարար եւ ունէր կողմնակալական շեղումներ: Իրբեւ թէ ուղէր փրկել խեղճ ու անկարը, բարին ու ազնիւը, կ'առնէր անոնց հոգին, վեր կը զրկէր, մինչդեռ չարերէն կը ստակար, որովհետեւ անոնք Սատանային մարտիկն էին: Եւ այսպէս էր, որ պայքարը կը տեւէր եօթ երկինքներու Տիրոջ եւ եօթ յարկ գետնատակ աշխարհակալ Սատանային միջեւ: Ու փաստուած է գործով եւ արարքներով, որ ուժեղը գետնի վրայ էր եւ ոչ թէ երկնքի մէջ:

Մարդը, որ իր ծաղկաշուքեամբ կրցած էր կորզել քանի մը տասնեակ տարիներ խեղճ կենդանիներէ, դարձաւ երկարակեցաց եւ սլատուհատ ինքն իր գլխուն եւ Աստուծոյ գլխուն: Եղաւ Սատանայի գործակից: Աստուած բարկացաւ. սակայն իր բարկութիւնը այլեւս ուժի մէջ չէր, որովհետեւ սխալութեան ըլլալը փաստուած էր: Ի վերջոյ ստիպուեցաւ զրկել Մեսիան, որ կ'ըսեն իր ողբին էր եւ զարմանալի է, որ այդպէս էր, քանզի Աստուած մէկ էր եւ անբիծ ու անկողակից էր ճանչցնել տուած ինքզինքը: Ուրեմն զրկեց Մեսիան երկիր, որ արդարութիւնը տեղը դնէր: Ան շատ բարի էր եւ ներող. կը քաբողէր լաւ բաներ եւ կը գործէր հրաշքներ: Մարդիկ, որ ուժեղ էին եւ Սատանային ընկեր, չկարենալով հանդուրժել Անոր ներկայութեան, որովհետեւ շատ մարդեր կ'երթային անոր ետեւէն եւ մօտիկ կ'ընէին զինք — բռնեցին ու խաչեցին փայտի վրայ: Չար էին մարդիկ եւ Սատանային դասեր բնդունած — խաչեցին Մեսիան խաչափայտին վրայ, որ հրե քայն կանգնեցնէին Գողգոթայի բլրան զապաթին, կոյծակները շեղծանէին անոր մարմնին գիծերը, ինքնութիւնը, որ օրինակ պիտի դառնար բոլոր հետեւորդներուն, թէ իրենց ճակատագիրն ալ այդպէս պիտի ըլլար:

Մեսիան քարոզած էր եւ հրաշագործած: Տկարներն ու զրկուածները սիրեցին Անոր խօսքերը, որ իրենց սրտովն էր ու բազում-բազում շատցան եւ անկարելի ըրին մեծերուն նուաճողական ձգտումները: Եւ երբ մեծերը ուղեցին ճգմել հաւատացեալ բազմութիւնները, պէտք տեսան իրենք զիրենք դաւանակից հուշակել, որմէ խաբուելով ամբոխները ա'լ աւելի խրեցան միա-մտութեան, ոչխարամտութեան, կրաւորական դիրքաւորման մէջ... Որովհետեւ մեծերը անդադար պիտի կրկնէին.

— Ի սկի խաչեցեալին... հուռա՛յ...

Ու զրոհել կու տային բազմութիւնը բարիին, խելօքին, տկարին եւ զրկուածին, որ ոչխարային համակերպութեամբ կը վազէր դէպի մահ եւ մահով կը շահէր հակառակմաններ, որոնց շնորհիւ աւարառութեամբ կը յղփանային սատանայի գործակիցները: Եւ մարդը, որ բաժնուած էր այլեւս երկու սեռի եւ դասակարգի, ինքնէրմով կը գահաբերուէր ու կը կորսնցնէր

Իր ազատութիւնները յաշտ ոճանց, որ իրական մարդերն էին, ընչաքաղց, աղահ, վայրագ հւ անխիղճ:

Եւ այս վերջինները կը կրկնէին դարերով.

— Ի սէ՛ր ինչեցեային...

Մինչդեռ անոնք իրենց մտքին մէջ ունէին շարութիւն, ծակաչքութիւն, հեռաւարտ,

— Ի սէ՛ր հասարակութեան... է՛լ կուտակումի:

Եւ անոնք կը մոռնային, ի սկզբանէ Աստուծոյ կողմէ մարդու ճակատին դրոշմուած հշտարտութիւնը.

— Ի սէ՛ր հասակ մը հողի, որ թարգմանի՝ դերեղման...

Եղերերդը դրուեցաւ քանկերդը դարու եօթանասունական թուականներուն: Մարդու նկարագրին մէջ ոչինչ էր փոխուած հինէն: Միեւնոյն ընչաքաղց ոգին էր, որ կը տիրէր այսօր: Իարձեալ մարդն է, որ կը ծառայէ Սատանային:

Իսկ քաղմութիւնները քարին, աղնիւին, տկարին ու զրկուածին, դեռ կ'ապրին յոյսովը այն հաւատքին, զոր Աստուծոյ Որդին օր մը տուած էր մարդուն, անոր տառապանքները փոփոխու համար:

— Վերջին դատաստանին օրուն միթաբութիւնը:

Ու հոս կարելի է դնել յոյսին վերջակէտը.

— Ամէ՛ն:

ՄՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ



ԵՐԳԵՐ ՍՐՏԻ ՄԱՍԻՆ

ՍԻՐՏ ԻՄ ԽԵՂԱԼ

Զո՛ւր փորձեցի դնել մի քար
 Սրտիդ տակ, —
 Սի՛րտ իմ խելառ՝
 Սրտիդ տակ
 Զո՛ւր փորձեցի դնել քար,
 Դու փլար, դու փլա՛ր՝
 Խեղճի լացից տրտմալար,
 Սիրոյ կանչից, հառաչից
 Քաղցրամրմունջ ու տկար՝
 Դու փլար՝ դռնաւար...
 Եւ եղար դու այնքա՛ն փխրուն,
 Սի՛րտ իմ խենթ,
 Որ սիւժի մեղմ համբոյրից
 Սարսուցիւր՝ փշաքաղ,
 Ու հալուեցիր աչքերիս մէջ
 Դու ցօղի պէս փողփողուն,
 Երբ անասուն մի յիմար
 Կուրծքդ խոցեց գէշաբար...
 Սի՛րտ իմ խելառ, սի՛րտ իմ խենթ,
 Կուգեմ դնել սրտիդ տակ,
 Գէթ մի վայրկեան, մի վայրկեան,
 Խո՛ւ մի քար, քո՛ւք մի քար...

Ք Մ Ք Ի Ք

Սի՛րտ իմ, այսօր,
 Հեշտօրօր,
 Կարմիր հասանքիդ տաք
 Ալեականքը մետաքսէ
 Այնքա՛ն մեղմիկ եմ բախում
 Իմ քունքերիմ ու կրծքիմ,
 Որ հագիւ-հագ եմ զգում
 Կերկայութիւնդ կրծքիս տակ՝
 Քո խենթութեամբ երբեմնի
 Ու չարութեամբ մանկունակ:
 Եւ զարկերիդ համաչափ
 Օրօրի տակ իմ հագիմ
 Իր վերքերն է լուսնում
 Հեշտ լոգանքով մի տաք,
 Վազը կրկին ընկնելու,
 Գալարուելու ու լալու
 Քո խենթ յորձանքի տակ...

ԱՅԼՔԱՆ ՄՕՏԻԿ ԵՍ ԻՆՁ

Այնքա՛ն մօտիկ ես ինձ,
Սի՛րտ իմ, այս գիշեր,
Որ զգում եմ քեզ
Ափերիս մէջ փակ
Ու մատներիս ծայրին հրակէզ:
Դարձել ես լուռ թողոք,
Ազմուկ ու ազազակ՝
Ականջներիս մէջ
Որ արտիս տակ,
Եւ մրհառարում ես
Քունքերս տօթակէզ:
Սի՛րտ իմ, գանգազիւ
Հանդարտիւ մի քիչ,
Թող հասնեմ քո իշխիչ խենթ
Ու հասկանա՛մ քեզ...

ԱՆՋԱՌԱՅԻՄ ՄԻ ԿՈՒԻ Է

Անհաւատար մի կոիւ է,
Սի՛րտ իմ, սի՛րտ իմ, մի կոիւ,
Քար դարի դէմ մի կոիւ:
Տե՛ս, բռն դար, բռն դար
Անցաւ ինչպէ՛ս աննշմար,
Ու մարդը, մարդը խելառ՝
Կարցրեց սիրտը
Ու երա տեղ դրեց քար...
Օ՛, բռն դար, բռն դար,
Ու արքա՛ն եմք դեռ տկար.
Դարի դէմ քար
Լինել ժա՛յռ:
Անհաւատար մի կոիւ է,
Քո գոհար երազների,
Սի՛րտ իմ խել,
Պիտ՝ փշրուեմ, փշրուե՛մ
Քար դարի դէմ՝
Այսահար...

ԱՐՄԱՆՏ

ՊՕՂՈՍ ԳՈՒԲԵԼԵԱՆ

«Միտի» շաբաթաթերթի առաջ ժամ խորհրդարաններին՝ Պօղոս Գուբելեան ծնած է Ալեքսանդրէք (Սանգա) 1836ին։ Պէյրուքի մէջ յաճախած է Յախ արաքական վարժարան մը եւ ապա Ս. Գրիգոր Լուսաւորիչ ձեմարանը։ Գրելու իր առաջին փորձը կատարած է Բա-
նի տնին։ Վարժարանական քառականներուն փոխադրուեցաւ Սփրիկէ, Ֆրիքաու։ Իր ճիւղ-
քը բնականապէս կը կրեն այդ ճար միջավայրին կնիքը։

1967ին, Գուբելեան իր պատմութեամբ մէկ մասը տնօրէնից բնակարանէն տեղա-
փոխուեց խորագրի մը տակ, եւ այն թիւով առեւ տեղի կոտորմեր, քրոմէ դեռ հասարակ
մէջ չեն մտած։

«Շուր շապիկ ք հագէ» պատմութեամբ «Բագին» մէջ Գուբելեանի տարագրած ա-
ռաջին գրութիւնն է։

Շ Ո Ւ Ն Ը

Շ Ա Պ Ի Կ . Է . Գ Հ Ա Ն Ե Ր ...

Պատուհանին տրուած համալսարան
գարկերէն, ընդհանուր կ'արթննամ։ Մութին
մէջ խորհարկելով հրացանը կը փնտռեմ,
կոյրի պէս խուզարկելով անկողինիս
լրջակայքը։ Կիւմարայտիւնեան սենեակ-
ին մէջ պաղ մետաղին հետ շփումս,
վերջնականապէս աչքերէս կը թափուի
քուն ըստանալ։ Փամփուշները ափիս
մէջ սեղմած՝ նուազագոյն ազմուկով կը
սահիմ դուրս։

Որքան ալ սովորական դարձած ըլ-
լային դիշերային յանկարծակի գարթ-
նումները, ամենայն անկեղծութեամբ
խոստովանելով, թէ դոյ լրջապատի մը
մէջ, անտեսանելի թշնամի մը ներկա-
յութիւնը շեղբու որոշ լարում մը յա-
ռաջ կը բերէր ու ոչ ոք կրնար նախա-
տեսել, թէ ի վերջոյ որուն պարտու-

թեամբ վերջ պիտի գտնէր ջիւղերու այս
լուռ ու անվերջանալի կռիւը։

Փշաթիւ մետաղեայ ցանկապատ մը
կը բաժնէր մեր բնակարանը անտառին
այն մասէն, որուն խորքը բնիկներէ բը-
նականաբար քանի մը հիւղաւաններ նետ-
ւած էին հոս ու հոն։

Սաստկացող պայթարը խաւարի ու
լոյսի, լարի ու բարիի, սեւի ու ճերմա-
կի միջեւ չէր, Դրացի խափշիկները ի-
րենք ալ աւազակներու սարսափէն կուշ
եկած էին քարայրի պէս խոր իրենց
բնակարանները, պիղատոսեան պաղա-
րիւնութեամբ լուսիչ ետք վարդազոյն
ափերով իրենց ձեռքերը։

Հրացանով չզինուած տակաւին, ա-
ռոնց աչքին մեր հմայքը բարձրացած էր
անհաւատալի համեմատութեամբ։ Հե-

բոստութիւն չէր, թերեւս ալքոլի ազդեցութեան տակ առնուած անխոհեմ քայլ մըն էր մեզ փառքի հասցնողը: Խնկնութեան համազոր որոշում մըն էր կէս գիշերէն ետք խոշոր տապարով ու հասակիս բարձրութեամբ խիտ բուսականութեան մէջ նետուիլ իրենց թաքստոցին մէջ՝ խոտերու հետ գլխատելու համար հոն ծուարած կառկածելի սեւ գլուխները: Տեղական օրէնքով, չարագործը, պէտք էր սահմանէ՞ր ներս յանցանքի վրայ բռնել, պատիժի մասին մտածելէ առաջ: Եւ տակաւին ամէնէն զգուշին հոն է, որ շարագործ խափշիկները իրենց մերկ մարմինը մարդկային կեղտով կը ծեփեն գիշերային առաքելութեան ելած պահուն. զէ՛, եկուր եւ գիրկընդխառնուէ՛...

Գիշերուան այդ ժամուին, հակառակ որ ելեկտրական լամբերը ցերեկուան պէս կը լուսաւորէին ամբողջ վերնատունը, առջին անարկով չկրցայ ճանշնալ պահակին մօտ կանգնած կասկածելի երեւոյթով սպիտակամորթը: Ֆուլտ պահակը, նորեկ մը, չկարենալով լուծել առեղծուածը, նախընտրած էր անձամբ բնկերանալ յապաղած այցելուին:

Գառնիկին արտաքինը չտպաւորեց զին, ջարդուած քիթ-բերանը, պատրուած հաղւտութիւն, գետինները տապալուրկած, կնկայ համար սեւերուն հետ կռիւի բռնուած մարդու տպաւորութիւնը կը թողուր... Սոսկալիօրէն խմած էր, ձիթապտուղի պէս սեւ ու փայլուն աչքերը կորսնցուցեր էին իրենց կենդանութիւնը ու կը նայէին տարբեր ուղղութիւններով:

— Կը ներս, — բաւ, — այս ժամուս, այսպէս, այս վիճակի մէջ, — գիշնով մարդու չափազանց զըպանութիւնն էր խօսիլ տուողը:

— Նո, եօ, կռիւ չէր, օթոյի արկած էր ունեցածս, — յարեց ան եւ կռումարէ արթնցածի պէս՝ սկսաւ հաս ու կտոր բառեր արտասանել — քառասուն ոտք բարձրութիւն — գլտորիլ — ինքնաշարժ — խափշիկ — հիւղակ — մահ — մայ կառ:

Յետոյ կոկորդը սեղմուեցաւ: Մով

վիշտը պիտի պայթեցնէր կուրծքը: Ուսէն բռնած՝ հիւրերու յատուկ սենեակը առաջնորդեցի զինք: Քարացածի պէս մէկ կտոր երկնցաւ:

Փորձեցի դարձեալ քնանալ: Ի դուրս Սորլած եմ անքնութիւնը մտահոգութեան չվերածել: Քնարքը դեղերը վաղուց իրենց իշխանութիւնը կորսնցուցած են շիդերուս վրայ:

Բնական է, ակամայ կը սկսիմ վերլուծել ջիշ առջնուան ունցուդարձը: Մէկ տարուան մէջ՝ իր երկրորդ խոշոր արկածն է: Կրնար կեանք մը արժէլ իրեն: Քառասուն ոտք բարձրութեան կառքով խափշիկի մը հիւղաւանին վրայ գլտորիլ ու ողջ ելլել: Լաւ որ տանտէրերը զինք լինչի շնթարկեցին: Թերեւս սարսափահար, ամէն ինչ ձգելով, փախան, տեսնելով յանկարծ շար ոգիէ դուրկըւած անխառն պատուհասին տանքին վրայ ջարդուիլը... Անշուշտ, եթէ ողջ մնացին: Եւ դեռ, ամէնէն դարմանալին այն է, որ Գառնիկը, Փիս Գոր (peace corps) Գառնիկը, փոխանակ արկածէն ետք, երթալ ամերիկեան հիւպատոսարան ապաստանելու, հօր պետութեան մը քաղաքացիի իրաւունքը արժեւորելու, եկած է խեղճ հայու մը տաք քրտին ապահինիլ: Արեւն կը քաշէ՝ պիտի բռնին հիները...

Գիտեմ, վաղը ողջ դեսպանատունը, գիւնապիտական չոր պաշտօնականութեամբ, հարցը ձեռք պիտի առնէ եւ կախարդական գաւազանի հարուածով մը ամէն ինչ իր բնական հունին մէջ դնէ: Սակայն այսօր՝ այսօր է, յուսցած գիշեր մը, քայքայուած շիդեր, իսկ վաղը արդէն վաղն է:

Ափրիկեան այս երկնակամարին տակ, Հայ Փիս Գորի մը յայտնուիլը տեսնելու համար, երկար, շատ երկար սպասած էինք: Համամարդկային իտէաներով ճամբայ ելած մեծղի կաղմակերպութեան մէջ ամերիկահայ աղոց չհանդիպիլը, տեսակ մը հիւժող ցու դարձեր էր: Ուրեմն, հայ ցեղը իր ներկայացուցիչները պիտի շունենար ողբացեալ Գիւնտիին

Հիմնած այս կազմակերպութեան կուռ շարքերուն մէջ, որուն գործունէութիւնը, վերջին տասնամեակին, ամերիկեան քաղաքականութեան փառքը կը համարէինք:

Ու ինչպիսի խորքը թափանցելով, կը շարունակէի հարց տալ:

— Ի՞նչ մնաց առասպելական ձոն Գենրտին, բացի իր յղացած, կեանքի կոչած այս շարժումէն, որուն ճիշդագոյն մարմինն անունը տուաւ ու ինք շուրջ զնաց: Սիրուն կողակիցը՝ խոփած նաւատիրոջ անկողինին պէր՝ ճանքը դարձաւ — այս մանքի տիւննա — մարդակապիկներու աշխարհին մէջ, նիւթը, փառքն ու միւր պատապարտուած են ցամաքելու ու լիւկելու, ինչ որ ողի է՝ կը տոկայ պատուանդաններու վրայ, կը բարձրացնէ այդ ողին ներշնչողը: Այսպէս, սենեակիս մթութեան մէջ, զիս պատող խաւարին ընդմէջէն Գենրտին լուսէ երեսը աւելի կը շողարձակէր:

Գառնիկ, պաղափարի ջիւղնունդ հաւատացող երիտասարդ, ծաղիկ հասակին պատասխանելով կոշին, եկած էր նուիրումով ծառայելու մարդկութեան դժբախտ հաստնաններուն:

Ինչ փնտնեց դտաւ մեղ:

— Հեռաձայնի անուանացանկը մաղեցի հայ մը գտնելու յոյսով, — ու գտնեմք յայտնաբերած մարդու գոհունակութեամբ, — եւ պահ մը սարսափեցայ ամբողջ երկրին մէջ միակ հայը ըլլալուն հաւանականութեան գիմաց:

Գառնիկը սծուին միւս անգամներուն ծանօթացնելու մասին մտածեցինք անմիջապէս: Այս անգամ, ազամանդի կտոր մը գտած ըլլալու գոհունակութիւն մը լեցուած էր իմ էութեանս մէջ: Հոն գաղութի մէջ ապրող հայը զժուար թէ զգայ այդ պահերուն առթած սարսուռը:

Կորուսած երկրամասի մը մոռցուած քաղաքին մէջ հայ փնտնելը ինքնին ապացոյց մըն էր իմ մէջ յամենող զդասուններուն:

Որդեգրեցինք ամերիկահայ կամաւորը, յուսալով աւելի խորութեամբ պեռ

զել պինք՝ եկող օրերու ընթացքին...

— Եղբայր, ի՞նչ կար, սո՞վ կար, մեռա՞ծ էր ամերիկահայ երիտասարդութիւնը, ո՞ւր էիք մինչեւ Հիմա:

— Ես ալ կը գարմանամ, թէ ինչո՞ւ այսքան նիւթապաշտ գարձեր ենք, — հարցումիս հառաչանքով մը պատասխանեց ան, — եթէ ծնողներու պատմածէն հետեցնեմ, դարուս սկիզբը, սոսկալի պայթարո՞ղ, իտէալիստ ազգ մը եղած ենք, ափսո՞ս, նիւթական բարեկաւուր թիւնը մարած, մոխրի վերածած է մեր մէջ ա՛յն՝ որ ատենին խարոյկ մըն էր վառ...

Գառնիկ ինք ալ կը տառապէր տաղանապելու ոտակ եղող հայ տղոց պակասով:

— Ե՛ս, մայ սոլ պրտսըր:

— Այո՛, ամերիկահայ եղբայր, — Փիս Գոր Գառնիկ — հետապաշին այս անունով մկրտեցին զինք հայերը — զարմանալի է, ինչո՞ւ ամերիկահայերը Փիս Գորը իբր պատուանդան չգործածեն մեր ցեղը ծանօթացնելու ու պանծացնելու համար աշխարհի ժողովուրդներուն, տեսէ՛ք ուրիշները...

Ու կը սկսինք զինք հայերու ծանօթացնելու փափուկ պարտականութեան:

— Ձէ՛, եղբայր, այս տէլուսին ուրտե՞ղը հայ է, Աստուածդ սիրես, ինծի հասկցո՞ւր, իմ խափշիկ սպասարկողներս իրմէ աւելի հայերէն կը խօսին, — կ'աղկարկէ Հին ձայն մը:

— Բացի դէմքին գիծերէն, ամէն ինչով ամերիկացի դարձեր է, — կ'երկրորդէ բամբ ձայն մը:

— Յանցանքը ասոր ծնողքին է, ի՞նչ միլիւնաւ Ապրիլեան սերունդ են եղեր, եթէ հայերէն մը պիտի չկարենային սորվեցնել իրենց զաւակներուն, — կ'երրորդէ թաւամաղ մը...

Երեսունի չափ կամաւորներու իբր պատասխանատու, ամերիկացի մեր բարեկամը, երկրին խորերը կ'ուղարկուի: Չարքալ է, ճարպիկ, քաղաքապետ: Մարդուս լեզուն կը մեռնի, ցեղային յատկանիշները՝ ո՛չ... Երկրին չիֆերուն

աւ շէփերուն հետ բարեկամական ամուր կապեր կը հաստատէ: Ուստի ինչ որ, թուի անհատ մը կարծէք աւելի նուազ կը խրտչի: Շէփերը իրեն դադուքարարական օրերու մղձաւանջը ապրել կու տան, կերպով մը...:

Հոն՝ ուր — Փիւ-Գոր — չարժուք վասնդի ենթարկուած է, Գառնիկ, ընկերներուն համար՝ Ալէն, իրեւ երիտասարդ Միկոյան, ասպնապին վայրը կ'աղարկուի մեծաւորներուն կողմէ:

Տեղացի պարզ խափշիկները սկսան ղինք անդլերէն լաւ խօսող արեւելացիին կոչել: Զարդացած դասակարգը գիտէր անոր հայկական ծագումը: Ինք չէր պահէր...

Ժամանակի ընթացքին, կանանոց մը կազմած էր, հետաւոր գիւղերու մէջ կորած խարտեալ ամերիկահիներով: Յետապիւն ալ յատկանշիչ ալ կարծէք անազարտ մնացած էր...:

— Տը սէֆի արմիցիդն պատարար, իդ մէյֆիմիկ հիմսէլֆ քոնֆերթուդ, — ակնարկեցի օր մը շարունակմբ:

— Էն, մէն, կոյս անտաներու մէջ հարիւրաւոր մայլ անթիւ ու ծարաւ ճամբորդելէ ետք, կ'ուզէիք որ գիշերէի շիփերու կիներուն հետ, թէ Թարգանի պէս ծառի կոճղին յենած, է՛հ, է՛հ, մի՛ մոռնար, թէ խափշիկուհիներն ալ իրենց առաւելութիւնները տներն... եւ Թարգանը՝ իր ճէյնը...:

Եւ եթէ պատահէր, որ գործով քաղաք իջնէր, անպայման մեզի կը հանդիպէր, թէ՛ հայութեամբ հաղորդուելու եւ թէ՛ սեղանը տուժաւ եւ պատարմաւ գտնելու...:

— Սա սխալը քիչ կե՛ր, եթէ չես ուզեր փողոցը, կամ խափշիկուհիի մը հիւղակին մէջ գիշերել:

— Այդ ծաղիկներն ալ իրենց յատուկ բուրմունքը ունին... Հա, լա՛ւ յիշեցի, ինծի գլուխ մը սխալ փոխ տուէ՛ք ալ հետս ար քանքրի տանիմ:

Տիկինն ինծի դառնալով՝

— Հանի, մեղք է, կ'երեւի խեղճ տղան մօրը հփած կերակուրները կը փնտռէ:

Կեսնքի վերիվայրումներու ընթացքին մագ-մօրուք ճերմկացուցածներու միայն ծանօթ էր այդ գլուխ մը սխալորին վերապահուած վսեմ պարտականութիւնը...:

Յետոյ, այն խա՛ղը, որուն սիրային սիրագործութիւն անունը կու տան: Այնպէս կը թուի, թէ ոչ ոք ապահովագրուած է անկէ բռնկուելու «պատնիշ» դէմ... Ընդէ՛ս, թէ խաղը իր կանոնները ունէր: Սակայն վայրի անտաններու երկայնքին վաղվող հայր չէր, որ բացառութիւն պիտի կազմէր... Գառնիկ, Ամերիկայէն շերտ, երեւակայիք բոլոր մանրէներուն դէմ պատուաւորուած էր, բացի սիրոյ մանրէէն: Յայտնի վաղուքները չէ՛ն, որ օր մը Թաւալիլը կ'իջնան շտապուած մէկ պահուն...:

Ամերիկացիներու մօտ, մօտակայ նշանաւոր ու հաւանական ամուսնութեան մը շնորհիւ շրջան կ'ընէին, կանգ առնելու համար մեր տղուն անունին վերայ: Երիտասարդ այս տղաքը, հայրենի երգիքէն հետ, իրարու մօտ կը գտնէին կորսուած սէրերը եւ դորմանքը: Գոյութիւն ունեցող տնայական պայմաններուն տակ, ամուսնիք քայլը գոյութիւն կը պահանջէր: Եւ մարդ, երբ սիրոյ կրակէն խաղկուի, այնքան ալ հեշտ կերպով չի կրնար տրամաբանել եւ ապագան չափել լայն կարկիծով...:

Գառնիկին նշանածը՝ Ճուտին, սկսաւ իր հոգեհատորին, ապագայ կողակիցին հետ մեզի երթալ-գալ: Ի վերջոյ անոր անուշիկ — արթուն — քիթը պէտք էր սխալորի անուշ հոտին հաշտեցնել: Ձենք կրնար սակայն ըսել, թէ սխալորին ի տես՝ Ճուտին սկսաւ ուրախութենէն խալաղորդին պարել այնպէս՝ ինչպէս կապիկ մը կեղուրած պտնանին դիմաց...:

Յո՛ւստի Գառնիկին հետ ազգային հարցերու շուրջ խօսած, վիճած, արբամաւորած էինք: Փորձած էի կորսուած դար փարախ վերադարձնել՝ առանց խաղեցնելու: Աշխատած էի նախ ամբարդել իր ցեղին հանդէպ հաւատքը, առանց իրեւ Աստուծոյ ընտրուած ժո-

ղովորութեան ներկայացնելու զայն:

0000-451

— Լիսըն, պա՞յ, ցեղ մըն ենք, որ անցեալով ու ներկայով, իր մշակոյթով եւ ստեղծագործական տաղանդով արդարացուցած է իր գոյութիւնը ազգերու բնասանքին մէջ: Ոչ մէկ ժողովուրդի իրաւունք տրուած է մեր գոյութիւնը վճռելու...

Գառնիկ լուռ, ժամերով ականջ կը զննէր խօսքերուս, այնքան ատեն, որ խոշոր դաւաթին մէջ կը նորոգուէր պաղ զարկերը:

Շատ անգամ, ներքին խռովքը կը կարգացուէր զէմքին վրայ, ուր վստահարար կը պայքարէին Գառնիկը եւ Ալէնը, ամերիկացիս եւ հայը: Յոգնամեքուս մէջ հարց կու տայի: — Ո՞վ ինձի իրաւունք տուած է այս տղուն հոգեկան աշխարհը վրդովելու, զայն տակնուվրայ ընելու: Իրրեւ երկրորդ սերունդի ամերիկացի՝ Թերեւս երջանիկ է: Մոռցնէր երկիր մը ունեցեր են, ջարդուեր, տառապեր եւ զաղթեր են հեռո՛ւ-հեռո՛ւ հորի-զոններու տակ: Էնտ ոս ուա՞ք...

Ներկայիս ինքը աշխարհի ամէնէն զօրեղ, ամէնէն բարգաւաճ երկրին անցազիրը դրպանը, համալսարանական դաստիարակութիւն, սիրուն, խաբտեալ կին մը, ապագային՝ կառավարական նախանձնի պաշտօն, ապահովուած կեանք: Ճիվիքուս, ելլէ հիմա կորսուած գատի մը համար կեանքը թունաւորէ, տապալի ու տառապի թափառական մարդու հոգեվիճակով...

Ճուտին սիրահարուելէ ու անոր հետ նշանուելէ ետք, կարելի եղածին չափ կը զգուշանայի, իր կանգուն մնացած ազգային թելերուն զարնելէ: Օր մը, սակայն, ալքոլին եւ յուզումներու ճնշման տակ՝ սխալը գործնցի, հայ կողակից մը ունենալու առաւելութիւններուն մասին խօսելու, անշուշտ նկատի ունենալով ցեղային մեր գոյատեւումը...

Ալէն, այո՛, այդ պահուն Ալէնն էր խօսողը, ինքն իրմէ ելած, զայրացած, շատ կոշտ կերպով, ամերիկացի քառաւորի կոչումներէս, իմ հարազատ տունին մէջ զիս յանգիմանել փորձեց:

— Կը ներեա, բարեկամ, այս յանկերգը մտիկ ընելու չեմ դար կոր տունդ, սորի, չե՛մ ուզեր այս բաները լսել...

Այս միջադէպէն ետք, մի քանի ամիս կորսուեցաւ, շտեմնուեցաւ: Այդ շրջանին երկրորդ արկածով վզին ռսկորը ջարդելով՝ Գերմանիոյ ամերիկեան հիւանդանոցը ուղարկած էին զինք, ուրկէ աստղանաւորդի պէս փլաթիք զլիսարկով վերադարձաւ:

Այցելութիւններուն վերսկսաւ, կարծէք բան մը պատահած չըլլար... Անպիտան Ճուտին ալ, Գառնիկին բացուելաթեան, կարծէք աւելի անուշիկեցր, ճուտիկ գարձեր էր: Անոր գեղին մորթը, արեւուն ոսկին ծծած, քաշողական, զգլխի՛լ փայլ մը ատեր էր, փայլ մը, որուն այնքան կը տենչան արեւելքի տըղաքը...

Տիկինս, հիացմունքով Ճուտին սլացիկ գեղեցկութիւնը դիտելով, կը կրկնէր յաճախ.

— Սա քածը հայ ըլլար՝ չէ՞ր ըլլար:

Ու ակոսանքով կը շարունակէր.

— Արժէքաւոր տղայ չմնաց, բոլորը կ'երթան օտար կիներ կ'առնեն:

— Արժէքաւոր ըլլային, հայ կ'առնէին, — պիտի ըսէի, բայց հրաժարեցայ: — Հապա եթէ յանկարծ կինս ալ ելլէր եւ զիս նեղմիտ ազգայնամոլութեան յանցանքով ամբաստանէ՞ր... Ազգային արժէքներ ունենալը, օտարին կրունկը լի-զելը ազատամտութեան հոմանիշ դարձեր էր մեր օրերուն:

Այս հարցին շուրջ Ալէնին հետ վիճիլը աւելորդ կը գտնէի: Երբ հայ դրպորոցի եւ ակումբի մէջ հասակ նետած, իրենք զիրենք հարիւր տոկոսով հայ համարող տղաքը խօսք չհասկնան, ինչպէ՞ս կ'ուզէիք, որ հարիւր տոկոսով այս ամերիկացին համոզուէր:

Ալէնին օտար աղջիկ առնելը կատարուած իրողութիւն մըն էր: Հարցը փակուած կը համարէինք, երբ օր մը հեռաձայնով զիս նշանաւոր խափշիկուհի մը դարելլատուեց հրաւերեց:

— Շատ կարեւոր ըսելիք ունիմ, օլ րայք, ժամը ութին Վինսթիլլ:

Իրիկունը, որոշուած ժամուն, դարեւ-
ջուրի դաւաթը հաղիւ բերանէն հեռա-
ցուցած՝

— Ծուտին կոյս էր, հա... :

— Ուաթ իդ րոնկ, պո՛ւ, — յանկարծ
սկսաւ հայ տղոց պէս խենթութիւննե՞ր
գութն տալ... :

Ջարմացած երեսս կը նայի, խոս-
տովանած յանցանքը պէտք եղած ազդե-
ցութիւնը չի գործեր վրաս : Կը խորհի,
թէ դուցէ կը կատակածիմ ամերիկուհիի
մը մօտ այդքան երկար ժամանակ անեղծ
մնացած դոյսովիմակին համար :

— Հաւատա՛, ճիշդ է... :

— Որքան ես գիտեմ, ամէն ապրող
էակ կոյս կը ծնի... : Դոնէ Արեւելքի
մէջ... : Եթէ դուն չըլլայիր, ձուտին
պարագային ուրիշ մը պիտի դառնար
բու այս ներկայ կացութեանդ մէջ : Եւ
Աստուած դիտէ, դուցէ սկիւպրէյթը
նէր... :

— Փլիզ, Ռէյ, բառերու հետ մի՛
փորձեր խաղալ, ի՞նչ փափքով սիրիլու... :

— Էնտ ու ուա՞թ... :

— Փիլիքստ չունեցաւ... :

— Ուել, ուել, ուել, հարցը փոխ-
ւեցաւ :

Երկար լուռութիւն :

— Ուրեմն ձուտին ա՛ն եւ... : Հայա-
ցուր : Արեւելքի մէջ կ'ընեն կոր... : Ծ'ն,
տարի, դուն հայացնելու մտահոգութենէն
ալ զերծ ես... :

Պատնիկ, լուրջ ու խելացի տղայ՝
մեր բախումներէն լաւ կը յիշէր, վստահ
եմ, թէ հայացնելու խնդկատակութեան
որքան հաւատք կ'ընծայէի : Նաթաշան,
Քիթին եւ ձէյնը լաւագոյն պարագային
հայասէր ու հայադէտ կը դառնան... :
Հը՛, չե՛ն հայանար :

— Լիքսըն, մէ՛ն, կը տեսնեմ, որ զիս
լուրջի չեաւ առներ, կամ ալ յանկարծ
լուրջ րաներուն սինիգմով մօտենա-
լու փափաքը արթնցաւ մէջդ, — վրդո-
վումով մը գոչեց ան, — գիւրին է հայա-
ցուր ըսելը : Բայց կը մօռնաւ, թէ ջար-
դերէն ճողոպրած ու արքանոցներու մէջ
հասակ նեղած մարդիկ են ծնողներս :

— Ձրտե՛ս, հին յանկերդ մըն ալ ա-
նոնք... :

— Այո, յանկերդ կամ ոչ, զաւակ-
ներուն համար զոհուած սքանչելի մար-
դիկ են — Էնտ եւս պիլիվ մի օր եաթ —
իրենց կարելին ըրին մեզի հայեցի դաս-
տիարակութիւն մը ջամբելու : Ծունը
սորված մեր հայերէնը, փողոցը եւ դըպ-
րոցը կը շողիանար մեր լեզուէն : Կիրակ-
նօրեայ դպրոցին օրերէն մնացած հայե-
րէն երգ մը կը յիշեմ դեռ :

Ալէն յանկարծ սկսաւ երգել :

«Շունը շապիկ է հագեր...»

Կատուն վարտիվ է հագեր...»

Ձեմ դիտեր որքան տեղին էր այդ եր-
գը : Տարրեր պայմաններու տակ խնդուք
ու ծիծաղ պիտի առաջացնէր : Ընդհա-
կառակն, լալու փափաք գգացի : Այդ
դիւրեւ, առաջին տնկամ ըլլալով՝ անհո-
գօրէն թոյլ տուի, որ յուզումը յաղթա-
հարէր, խնդէր զիս :

— Պատնիկ, երգին բառերը կը հաւ-
կընա՞ն :

— Նօ, բայց վստահօրէն գիտեմ,
թէ հայերէն է :

— Այո, ծծած կաթիլ պէս, անա-
բաւ, կնքուած միւռնոնդ պէս խնկարոյր,
հարազատ : Եւ լսած երգերուս ամէնէն
անուշը :

Լուռ ենք : Ո՞ր հայը հայուն վրայ
դատաւոր կանգնած է, հարց կու տամ
մտովի : Կ'ամչնամ ու կը լռեմ... :

Սակայն Պատնիկին հարցը լռու-
թեամբ կարգադրուելիք հարց չէր, եթէ
Ծուտին արգանդը խկապէս անոր սեր-
մերով բեղմնաւորուած էր... :

— Ռէյ, փլիզ, էլք մը... : — Թա-
խանձանքով մը կը պաղատի ան, — մի՛մ-
ման մասին եթէ ծրագրներ կը մշակես,
Քիթ մի առաք օֆ իթ, մեր մօտ մահացու
մեղք է... :

Պատնիկին տեղ՝ ես կը սկսիմ քրտնիլ :
— Քանի աղջիկը այս վիճակի հաս-
ցուցեր ես, պսակուէ՛, պրծու գնաց : Ար-
դէն ուրիշ ելք ալ չունիս : ԱՓՔը օլ,
կամաւոր ես, չէ՞... :

— Ո՛հ, դժուար է, պիտի հակառակին ծնողքս: Եթե սակը գլուխս կորսնցուցած եմ, չեմ պիտեք ո՛ր ուղղութեամբ քայլ նետել...

Լուռ կը գիտեմ զինք: Աստուած իմ, այս ի՛նչ հրաշալի փոփոխութիւն է, որ տեղի կ'ունենայ աչքերուս առջեւ... Նոյն տղան չէ կարծէք:

— Եղբորս նոյնը պատահեցաւ, մերտէք հակառակեցան, յաղթեցին: Տիպը չզոյնաց հայ աւանդուն:

Կը շարունակէ պատմել եւ ասանք անգամ մը հայու կոր զիջը կը խրէ գաբեջուրի գաւաթին մէջ:

— Թերեւս ունեւոր հայր մը ունիս, ժառանգազրկումէ կը վախնաս... — կը փշեմ ու նախադասութիւնը չաւարտած կը զղջամ:

— Նո՛, օլտ մէնը այդ միջոցներու դիմող պոքը մը չէ: Խելացի մարդ է, իր տեսակէտները բնու չի փորձեր պարտադրել: Տրամարանութիւնը համոզման իր գէնքն է: Եթէ համոզուած չըլլայի, թէ օտարի հետ երջանիկ պիտի ըլլամ: Երջանկութիւնը մէկ կողմ, եթէ միայն զատու ըլլայի օտարին հետ պիտի կարենամ ապրիլ, բոլոր տեսակի արգելքներուն կուրծք կը դնէի: Այդ տաղնապ ըսուածը իմ մէջս է, ի՛մ մէջս...

Մտածումի մէջ կ'իյնայ պահ մը:

— Թէպէտ լեզուով, զէջ մըն ալ գզացումներով այլասերած մէկն եմ — այ էմ Գաթ փրիքեմսինկ... — սակայն յաճախ մէջս արեւելքին կ'արթննայ ու կ'ըմբոստանայ ամերիկեան կեանքի բացասական, ժխտելի կողմերուն ի տես... Մեր մօտ, իգական սեռն է տաբատը կրողը: Վաւմէն լիպ ըսուածը ուրիշ բան չէ, եթէ պատօնականացումը գայութիւն ունեցող դրութեան մը... Պատի պանջ օփ լեզպիլընգ...

— Գոնէ այդ կողմէ, հայերս, — կ'ըսեն ընդմիջելով զինք, — բախտաւոր ենք, լուծած ըլլալով վաւմէն լիպ ըսուած գլխացաւանքը:

— Այո՛, լուծած ենք, — կ'ըսեն, — էնտ այ միմ իթ, եւ այդ ալ լաւագոյն

մեւով... Պայ շէյրիմիկ տը Ենյմ շէյվիմիկ մըշիմ...

Կը յաջողիմ մեւամաղձոտ պզտիկ ժպիտ մը ուրուադծել գէմքին վրայ: Այդքան միայն...

Եթէ այդ պահուն վարդաւոր նկարիլ մը յաւերժացնէ՞ր տեսարանը:

Դժբախտ ազդի մը բեկորներ, սեւ ցամաքամասի պզտիկ դարեջրատան մէջ, գլուխներն իրենց խժած գարեջրուրին պէս թանձր փրոպիւմներու վրայ հակած, կը տաղնապին իրրեւ հայ իրենց գոյտտեւման համար: Համամարդկային զգացումները չեն, որ կը պակսին իրենց: Ընդհակառակն, համակ իտէլայիմ դարձած տղոց միայն սքեմ մը կը պակսի միտինար դառնալու...

Սակայն այս կիները... Բայց ի՞նչ է կիներ:

Պարապ ստոմբոսով կուր արուած գարեջրուր կը սկսի գործել...

Երկուստեք համամայն ենք. կիներ մեղի համար մասնաւոր ձեւի, գոյնի կամ մասնայատուկ արտաքին կառոյցի մէջ չէ կաղապարուած: Համանման զոյգ մը բառերով սահմանած ենք կիներ՝

— Համաշափութիւն + համակերպութիւն = իտէլ կիներ:

— Ընդդէ, համաշափութեամբ զըլտի-գործոց չեն մերոնք, սակայն, կէյ-շայի պէս համակերպող են... բառիս ամենալայն իմաստով:

— Եզրակացութիւն:

— Ամուսնանալու պարագայիդ, փորձէ՛ հայացնել, համակերպող դարձնելով Ճուտին, ճուտիկդ...

Գառնիկ, այդ գիշերուան արկածէն ալ անպարտ արձակուեցաւ: Մարդկային ոչ մէկ զոհ: Դեսպանատունը կատարեց հատուցումը: Ճուտին յղութիւնը բնականոն պայմաններու մէջ կը զարգանայ: Քաղաքական պսակ մը օրինականացուցած է իրենց ժիւթիւնը: Վերջին ամիսներուն, ամերիկուհին տունը գրկուեցաւ, ծնողքին գութգութեանը վայելչութիւն: Մենդաբերութենէն ետք, Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ, հայկական ծէսով, խուճ-

կողմ ու պատարագիչ հպիսկոպոսով պիտի պատկուէին պաշտօնապէս :

Ո՛, Յայտադրին մէջ շնորհատեստած պղտիկ մանրամասնութիւն մը ստիպան եկաւ խորտակել ամէն ծրագիր :

Ս: Օր մը, Գառնիկ կարծիք երկզով հեռագիր մը օդին մէջ ճօճելով՝ դրասնեհակ մտաւ: Գիտով էր եւ աւելի խղճալի վիճակ մը: Առաջին ականարկով այդ վիճակը աղջիկ զաւակ մը ունենալուն վերադրեցի....

— Կաւո Ոհուգ, պատի՛, այ էմ պոյզ փաւորը, լէք աւ սէլէպրէյք...

— Շամբանեայով տօնէնք տղու հայր գառնալուս եղելութիւնը, տղո՛ւ հայր եմ, տղո՛ւ... խառնածի՛ն տղու... Եւ ա՛մէնէն տարօրինակը՝ այդ կեղտոտ բողին հայրը, պատուելի աներհայրս, արդէն կըբած է պղտիկը, հա՛, հա՛, հա՛...

— Պատուհանէն դուրս նետելու չէր, — ըսի, բայց Գառնիկը այդ պահուն ակնարկութիւններ մտիկ ընելու վիճակի մէջ չէր: Բնական միակ էլքը՝ գլուխը ափերուն մէջ, արմուկները սեղանին յանած, կը հեծկլտար կորստած սիրոյ, կեղտոտած պատուի, կործանած ապագային վրայ... Rentres chez toi et

pleures, moi j'ai pleuré pour toi... Աստուածայի՛ն Ազնաւոր :

Գառնիկին Ամերիկա մեկնումէն ետք, պահ մը այդ համոզումը ունեցանք: Ինքն ալ, չատերուն նման, մեր դոյութիւնը ժողցաւ: Ամիսներ ետք, օր մը անոր մօրմէն նամակ ստացանք, մեսրոպեան տառերով եւ բարձր ոճով, Գառնիկին հայ աղջկայ հետ ամուսնութեան բարի լուրը կը հաղորդէր ու շնորհակալութիւն կը յայտնէր իր զաւակին հանգէպ մեր ցուցաբերած եղբայրական սիրոյ եւ նուիրումին համար :


— Ինչ որ մենք գլուխ չկրցանք հանել Ամերիկայի պէս տեղ մը, դուք այդ հրաշքը յաջողացրէք սեւ Ափրիկէի հեռաւոր այդ անկիւնը, Աստուած պահէ...

— Մայրի՛կ ջան, շնորհակալութեան այդ դիրք ծուտիին պէտք էիք յղել... — Մտադրեցի գրել Փխ-Գոր Գառնիկին մօրը, սակայն հրաժարեցայ այդ մտքէն ու նոյն վայրկեանին չեմ գիտեր ո՞ր ու՛ժէն մզուած՝ սկսայ երգել մեր տղուն միտկ երգը՝

«Շուներ շապիկ է հագեր...»

Կատում վարտիք է հագեր...» :

Գ. ԳՈՒՐԵԼԵԱՆ



Ասկէ առաջ, «Բաղին»ի մէջ կարգ մը ռոմանտներ տարագրած է իտալացի Առոյեան, բայց հաւանաբար «Սարգէ» խորագրուած հետագայ քանոնագծութիւնը պիտի ըլլայ իր առանձին շարք հետաքրքրութիւն ստեղծող առաջին լուրջ առիթը: Մարդկային կացութիւն մը խորհրդանշող քանոնագծութիւն մըն է այս «Սարգէ», որ օժտուած է քաղաքականութեամբ, քաղաքականութեամբ:

«Սարգէ» մաս կը կազմէ «Կէտեր» խորագրուած քանոնագծական ժողովածոյի մը, որ լոյս կը տեսնէ այս աշնան սկիզբը:

Ս Ա Ր Դ Ը

Մագիւնները ժողովելով
Այդ օր կեանքի հանկերէն
Ուզեց փախչիլ պահ մը լուկ
Ուզեց կառչիլ իրաւին
Ճշմարտին հարազատ,
Որ օր մը կեանքը փորձեց
Լայն ափսէովը ճակտի,
Բաշխել մարդոց մտքերուն,
Որոնք դարձան անոր շուրջ
Ու ապրեցան խաբկանքն անոր երազին...

Բայց աչքերը աստղերուն
Յառեցան պահ մը յանկարծ.
Ափսէն դատարկ էր՝ խռնաւ,
Ու արեւուն տակ ծնող
Բայէն դարձաւ մղձաւանջ,
Դարձաւ հեքիաթ ու լեզունդ,
Դարձաւ խաբկանք ու երազ,
Ու ճուլտեցան իրար մէջ
Կախման կէտերը բոլոր,
Ու բացուեցան կղզուած
Չակերտները վերապահ,
Կէտը սրբեց քրտինքն իր
Տողը դարձաւ վանկ մը լուկ
Տառը դարձաւ հագար դար՝
Ամէն օրուան հետ ծնող,
Ամէն օրուան հետ հիւսուող՝
Նոր շէնք ու պատ
Դարձաւ փոշի, անապատ:

Ու բառն ամէն լեզուի մէջ՝
 Դարձաւ հարցում, դարձաւ կեզտ,
 Ու շուրջ ամէն աչքի մէջ՝
 Դարձաւ հսկայ, դարձաւ խեղճ,
 Ու բարձրացաւ անվեհեր
 Գահավիժեց դողալով,
 Պահ մը ծաղրեց ամէն ի՛նչ
 Ինչ որ ծնաւ իր անձէն,
 Իր երազէն խաբուսիկ,
 Իր ուղեղէն ցնորեալ:

Ապա կրկին փարեցաւ
 Իր ստեղծած սուտին մեծ,
 Եւ իր սուտին, կեղծիքին
 Նըսեմին մէջ ու մութին
 Էութիւնն իր որոնեց,
 Որոնեց բառը իբաւ
 Բառը հաթած՝ ճշմարիտ,
 Ու միշտ խաբեց,
 Խաբեց ինքզինք ամէ՛ն բանէ աւելի,
 Ու խաբկանքէն իր ուրախ
 Սթափեցաւ վերստին,
 Դարձաւ կննիր ու խոկում,
 Դարձաւ տեսող շրջանակ,
 Ու դարձաւ կեանք
 Ու զէքս մը կդպուած
 Ու զէքս մը ամէն տեղ
 Ու անձին մէջ ու անձէն դուրս՝
 Հոգիին մէջ բոլորին...
 ...Ու որոնում...
 Ու կախման կէտ...
 Փակագիծ...
 Միշտ անսկիզբ եւ անվերջ...:

ԽՈՍՐՈՎ ԱՍՈՅԵԱՆ

3. ԶՈՐԵՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐԱՎԷՊ

«ԵԵՆՔ» Հայր Էիճ բիզանդական եւ հայկական ճամբաներու վրայ

Ը.

Ս. ՍՈՓԻԱՅԻ ԿԱՄԱՐՆԵՐՈՒՆ ՏԱԿ

Փարիզ գացողը անշուշտ պէտք է տեսնէ Notre Dame տաճարը:

Հոռոմ գացողը՝ Ս. Պետրոս մայր եկեղեցին:

Գացի Պոլիս, Սարայ-Պուրնի, տեսայ մայր տաճարներու երբեմնի մայր Ս. Սոփիան, որուն դրան ալին, պրոնզ ֆոնի վրայ դրուած է այժմեան ինքնութիւնը. — «AYASOFYA MUZESI»:

Ըստ պատմութեան, այս հրաշալի եկեղեցին կառուցուած է բիզանդական կայսրութեան փառապանծ օրերուն, Մեծն Յուստինիանոսի շրջանին, իր քրոջ Սոփիայի նախածնութեամբ:

Շինութիւնը տեսած է հինգ տարի:

Աշխատած են տոնուազն... Հազար ճարտարապետներ եւ աւելի քան տասը հազար վարպետներ ու զործաւորներ...

Հետապալին, երկրաշարժէն երբ մեծապէս վնասուած է Ս. Սոփիան, նորոգութեան աշխատանքներուն ղեկավարութիւնը վստահուած է... Մէկ հայ ճարտարապետի, մեր անեման Տրդատի'ն:

Տաճարը ունի վաթսուց մեթր բարձրութեամբ լայնկեկ, հսկա՛յ զըմբէթ մը, որ, ինքնին, եկեղեցի մըն է եկեղեցւոյ վրայ...

Միմարէները մղկիթախոն երեւոյթ մը տուած են բիզանդական սրբափայլի իր արտաքինին. հիմա ան Այա Սոփի կը կոչուի. քրիստոնեաներ չի կանչեր աղօթքի, պատարագի, նախ թրքացուած է, ապա թանգարանացուած...

Այդ օր, ես ուր... քիչ մը խած էի, դուրս շափաւորօրէն տաքցուցած...

— «Ինքանայաւատ պիտ թէք Սոփիք, սա՛նա կէտիք» խօսքը յիշելով, ամերկացի, ֆրանսացի, իտալացի, յոյն զբօսաշրջիկներու հետ ներս մտայ մեծ դի դուռնէն, որուն կամարին տակէն կրնան քարծր ու բնոցուած քամիոններ անցնել, եթէ թուրքը ելլէ, կարածի վերածել ուզէ Այա Սոփին...

Թուրքը... քաւրէ է, ամէն տեսակ սրբապաշտութիւններու ատա՛կ. արեւելեան նահանգներու մէջ, մեր հոգերուն վրայ ալսինքն, կարգ մը կիսաւեր եկեղեցիներ ինչերո՛ւ վերածուած են...

Աչքս դուռնէն, միտքս թուրքէն հեռացնելով, դարձայ ներս ու դիտեցի...

Ա՛...:

Ներսը ի՛նչ ներս...

Արուեստի աշխարհ, բիւզանդական քանդակներու, դուռնաւոր խճանկարներու երաժշտութիւն, հրաշագե՛ղ ներդաշնակութիւն՝ հոյակապ կամարներու հովանաւորութեան տակ մարդս դէպի երկնայինը վերացնող...

Որմանկարները, դրեթէ բոլոր պատերու վրայ, սրբապան ցուցահանդէս մը կը կազմեն:

Այս բոլորին մէջ շատ ուշագրաւ է Գրիգոր Լուսաւորիչը, որ հոգած է եպիսկոպոսական տարազ, ձախով՝ Աւետարան բռնած, աջով՝ դիմացը կեցողները կ'օրհնէ, հիմա՛ մեզ...

Յուներէն դիտող ֆրանսացի զբօսաշրջիկ մը կը կարգայ նկարին տակի գրութիւնը.

— «ԿՐԻԿՈՐԻՍՍ ԱՐՄԷՆԻԱՍ»

Տիեզերական պատրիարքութեան հին օրերու մայր եկեղեցին ա՛յնքան տպաւորիչ ընդարձակութիւն ունի, որ կ'ըսես՝ հա՛, հիմա՛, կարծես անվերջանալի, խորհրդաւոր հեռուներէն, խորերէն, հեռաւոր կամարներու տակէն դէպի քեզ եկող «հին-հին դարուց յիշատակ» տիեզերական պատրիարք մը պիտի երեւի... կրօնափաթեմօրէն զգեստաւորուած...

Ես, դուրս խոշ Ըլլալուն՝ նոյնիսկ կը կարծէի լսել... Խրիստոսի նշաններու հին յունական շարականներ, մաղթանքներ...

Կը տարուէի հոգիով ունկնդրել... անլսելի Ըլլալու աստիճան մեղմ, տաւրային ալիւտեաները գեղանի, Յիսուսանուէր բիւզանդուհներուն...

Լաւ է, այսպէս, ճերմակ զայս է արիւն իմ խած Ըլլալ քիչ մը, Ս. Սոփիա գալ, ի մէջ տաճարի, կրօնապատմական վերացումներ ապրել, եւ անցնալի եկեղեցապրութիւններու, ջերմեռանդութիւններու եռուզեռէն մայրներ, նուիրական եղանակներ լսելով, իրողութիւններ ալ տեսնել փափաքել, ու... տեսնել:

Հին, ազնուական բիւզանդուհներու պէս գեղեցիկ ամերիկուհի մը, մեր Արիկաքիոս Արմէնիասին դիմաց, ձեռքը ճակտին տարաւ եւ խաշակընթեց...

Իրեն հետեւեցան ուրիշներ ալ...

Ես, կրօնաքաղաքապարտութիւնը միշտ մոռցող «հեթանոս»ս, արդարօրէն հպարտացայ, երբ խաշակընթեմ թափ առաւ մինչեւ յետին շարքերը զբօսաշրջիկներուն...

Այն հոգեւոր եւ անակնկալ կենդանի պատկերին դիմաց, մեզ առաջ-

նորոգող Այս Սոփիի թուրք պաշտօնեան, մէկդի դնելով քարիստներու հանդէպ քաղաքավար բլլալու հարկադրական արհուրածութիւնն իսկ, նախաձեռնութիւն չեւառելի... Էսքիյանքայութեամբ, ուղղակի զպոռաց խաչակնքողներու երեսն ի վեր:

— Այդ ի՞նչ է... օ՛ր մէնք... ո՞ւր էք... ո՛ւր... քիլիսէ՞ն եկեք էք... Հոս թանգարան է... Այս Սոփիա Միւզէսի... նախապէս ճամբի...:

Եկուր հայ եղբոր, ու եթէ կրնաս արգելիլ հպարտութեանդ, որ չվերածուի զայրոյթի, արգելիլ զայրոյթիդ, որ ցատուածալից իր հարցումներով շրնգվեցնէ հոգիդ...:

Ինչո՞ւ սխալ, անարդար եղած է ճակատագիրը Վոսփորի այս զեղածիծաղ փոքրուն...:

Ինչո՞ւ անարդար եղած է ճակատագիրը նաեւ մեր հողերուն...:

Ի վերջոյ ո՞վ է իրաւատէրը Արարատին, Վանայ ծովուն, Արաքսին եւ Արածանիին... մենք, անիրաւաւորներս, թէ իրենք, անիրաւութեան արոյշ-եանները...:

Ինչո՞ւ թուրքին կը պատկանի Կ. Պոլիսը, այս Ս. Սոփիան...:

Ձեւք, Հերակլէսը, Աթենաօն ու Հերան որո՞նց անունին արձանադրած են Վոսփորի փոքրուն կալուածաթուղթը, իրենց աստուածային տոմարներուն մէջ...:

Դարե՛ր շարունակ, այս կամարներուն տակ, կայսրերու, կոմսերու, բազմահազար քրիստոնաներու ներկայութեան՝ ի՞նչ փառաշուք պատարագներ մատուցուած են մեծ եկեղեցականներու կողմէ, եպիսկոպոսներո՛ւ սպասարկութեամբ...:

Հիմա, մեր Կրիկորիոս Արմենիասին դիմաց, պարզ խաչակնքել մը քննադատութեամբ, նայուածքերէն լեզուով յանդիմանանքի՞ պէտք է եւս թարկուէր...:

Ս. Սոփիայի մէջ կացութեան տէրը ոս թուրք պաշտօնեան պէտք է ըլլար...:

Հակառակ կամքիս, պահը ծանր շանցնելու փափաքիս, Վալայատանի Արշակունեաց ապա Բագրատունեաց հարստութիւնները կործանող քիւղանդակն անհետատես քաղաքականութիւնը նիւթ ունենալով, հին օրերու նոյն բիւզանդացիներուն ուղղուած յանդիմանական դատախօսութիւն մը կը սկսէր ազդէն լանա առնել իմացութեանս մէջ. զայրոյթիս բոլոր հարցումներուն լրիւ պատասխանող, եւ ժողովրդական հռետորութեամբ քանախօսութիւն մը, այնքան երկար, որուն ենթադրական հրատարակութիւնը յաջորդական երեք թիւերով կը տրուի մամուլի մէջ:

— Բիւզանդիոնի անհեռատես կայսրեր, կոկոզամիա կոմսեր, դարեր շարունակ, ամէն տեսակ դաւեր նիւթիցիք, տկարացնելու համար մեր հայկական պետութիւնը, կործանելու համար Հայաստանի թաղաւորութիւնը...:

Երբեք նկատի չառիք, շմառնեցիք, շանդրադարձաք, թէ պէքովն արմէն Արմէնիա մը, բիւզանդական կայսրութեան արեւելքին, ապահով պատնէջ ըլլալու կոչուած էր, թաթար-սելճուք ահաւոր արշաւանքներուն դիմաց, ու կրնա՞ր ըլլալ:

Բաւական դիմացկուն էր Հայաստանը:

Դուք պէտք էր աւելի՛ տոկունցնէիք զայն. թուրք-թաթարական ցեղե-

բը, օր մը չէ օր մը պիտի յառաջանային դէպի Կովկաս, դէպի Առաջաւոր Ասիա...

Բիւզանդացիներ, նոր պէքոս-քրմներու համար պէտք էր երկաթ զրկէիք Հայաստան...

Պէտք էր ըսէիք:

— Հայեր, Բագրատունիներ, արմէնիա՛ աղբարներ, Աշոտ, Սմբատ, Մուշեղ, Գագիկ, ու մեր բիւզանդական երկաթները հայկական ձեր երկաթներուն կապելէ՛ հտք թափեցէ՛ք պէքոսը... հո՛ւ, երկաթը թող շատ դուռի, որպէսզի արմէն կամ Բիւզանդիոնի Արմէնիա պատուարը աւելի դիմացկուն ըլլայ վայրազ ցեղերու արշաւանքներուն դիմաց...

Պէտք էր ըսէիք, զրկէիք:

Զրկէիք, չզրկեցիք:

Աւելին, եւ ցաւալի՛ն:

Պատերազմներով, ա՛ն-կա՛յ-սե՛-րա՛-վա՛-յե՛լ զաւերով, ոճիւրներով, հայկական երկաթն ու սիւնը՝ ընթաց ալ զողջած եղաք Բագրատունեաց հարըստութեան վերջին տասնամեակներուն:

Այսպէս ուրեմն՝

Տկարացուցիք մեր Թագաւորութիւնը եւ ի վերջոյ կործանեցիք զայն ու կատարած եղաք պատմական մեծ նախընթացը... «Իմաստուն» նասրէտ-տինի իր իսկ կեցած ճիւղը սղոցելու յիմարութեան...

Վա՛յ ձեզի բիւզանդիտոններ...

Սղոցեցիք, սղոցեցիք, ի վերջոյ կորուեցաւ ճիւղը, ինկաք վար...

Ձեր ինկած իսկ վայրկեանի ճակատադէրը ճանաչվար մը դրուե ծառին վրայ...

Սատանան ալ ծառը ծռեց Բիգոսի աշտարակին պէտք...

Մեծեհեհեհեհեհ՝ ու ձեռն՝ յանկարծ...

Բիւզանդիտոններուդ քաղաքական բախտի ծառին բունը խիստ առաւելական ըլլալուն, ուժգնօրէն շտկուեցաւ, եւ բաբանի պէս, վրայինը նետեց Կեդրոնական Ասիա...

Ճանաչվարին ոտքերը կոտրեցան, սաստիկ ցաւէն ոռնաց վիրաւոր տայ-նասորի մը պէս...

Թաթարներ, Թորթարներ, քարաբոյուններ, արքայուններ եւ վայրադ ալ ցեղերու պատկանող մարդածէս բորենիներ դուրս ելան քարայրներէն, որջերէն ու հաւաքուեցան վիրաւոր հրէշին շուրջ...

Այս վերջինը՝ քաջաւորուած, աւելի կատղեցաւ, Մերձաւոր Արեւելքի դէմ ոխով լեցուեցաւ, ու... ճերմակ էջ մը ուղեց...

Բերին, զինք նստեցուցին...

Եաթաղան մը ուղեց: Տուին:

Եւ ահա՛

— Վա՛յ, պապօ...

Սպիտակ իշու չորս ոտքերով, լէնկթիմուրն էր կեցած բազմահազար անմարդկային արարածներու դիմաց...

Թուրանական իր «նոսրգին» գլուխը դարձուց դէպի Կովկաս, դէպի Առաջաւոր Ասիա, ու բազմապատկուած կատաղութեամբ պոռաց.

— Հիւնի՛ւմ...

Հրէշային գլուխներէ վեր, մերկ եաթաղաններ կատաղօրէն ճոճուեցան: Եւ սկսաւ սարսափելի յառաջխաղացքը Թաթարներուն...

թ.

ՄԱՐՀԱՊԱ՛, ՀԱՍՍՕ՛...

— Հէ՛յ, ազա՛ թիմուր, պիմիշըն պիազ մարֆապաա, սօյա՛, հա-
նում (Ս. Սոֆիայի մէջ ենք, մեղայ, մեղայ — չէ, միւե՛րս) Ուրա՛ կետօ-
սում պէօյաաաա...

— Կէտօրա՛ւմ Խօօվխաաաաա՛, Արմանիսթաաա՛, Ամամիսթաաաա՛...
Կէտօրաւմ Խօօսթանթիմփօօօ՛լաաա՛... մէն տունեաեր վէրաաադրմ Թա-
շաաա՛...

— Ա՛խ թիմուր, կէթմա, զաւրպան լէնկ աշախարհաա... Բոզալ տուն-
եաեր թանխարափ էթմաաա՛...

Պաղատիլը օգուտ չունի ապաշին:

Լէնկհիւաղը օտեղծուած էր մահապնելու, աւերելու, հրդեհելու հա-
մար...

Վայրագ ցեղերու գլուխն անցած քչեց էլը դէպի Գոլկաս, ջարդ, տա-
ռապանք, մոխիր ու շիվան տարածեց ամէն կողմ...

Ձուլումի կարմիր տարիներ իրարու յաջորդեցին, քարտէսները փոխ-
ւեցան...

Արեւելեան որեւէ ճամբայ Պոլիս կը տանէր, ալ սկսաւ Սմրզանու հա-
ցընել...

Դառն հեղեանք...

Փաղաքակրթուած Հայաստանը ենթարկուեցաւ քարայրակեացներու
ահաւոր իշխանութեան...

Թօփալ թիմուր չհասաւ Խօօսթանթիմփօօլ...

Մահը վերջ տուաւ անտանի կամ զոյրքօտանի իր դոյութեան:

Բայց, իրմով սկսած թալանապետութիւնը թափ առած էր արդէն, շա-
րունակեց տարածուիլ եւ տարածել աւերն ու հրդեհը ու ջարդը, ջա՛րդը...

Հայաստանի չքեղ Անին՝ քարուքանդ,

Բոլոր պատուարները՝ քանդուքար...

Լէնկթիմուրի ճերմակ իշուս բացած սեւ ճամբաներէն հասան դաժան
չարունակութիւնները անսիրտ ցեղերուն...

Թորթարներ, խրխիղներ, սելճուքներ, թրքօմանդոններ, թիւրքմէններ,
տաճիկներ, Լէնկթիմուրի յաջորդ լերկզլուխ խաներ — Բայու, Մանքու,
ձէնկիդ, Հուլաղու, Ղազան, զափալթ (վերջինը՝ փոխան գեւայլնիի՝ ո՛ր մէ-
կը իշխեա, ո՛ր մէկը շմոռնաս. մէկ անուն, տասը դժոխք, տասը հազար պա-
տուհաս, տասն անգամ հարիւր հազար մահ...)...

Վանի եւ Հայաստանի ալ ընդդերու շուրջ դիակներ կը կուտակուէին,
սմբակներու տակ անհամար մանուկներ կը ճղմուէին, հայոց ապագան իսկ
արիւն կու լար...

Հապա դո՛ւք, բիւզանդէտտիներ, ի՞նչ կ'ընէիք... ի՞նչ կ'ընէիք
դո՛ւք...

Թիմուրի եւ ձէնկիդի սերունդէն, սեւ ճամբաներէն եկաւ ուրիշ բռնա-
պետ մը եւս:

Անունը Օսման. թիւ կար աստղերուն, թիւ չկար իր զաշըպագութեան-
բուն...

Ան աւելի մահ, աւելի սարսափ տարածեց ամէն կողմ, եւ հայկական
ու բիւզունդական հողերուն վրայ հիմնեց Օսմանեան Պետութիւնը:

Իր մահէն ետք, իր պետութիւնը չկործանեցաւ. ուրիշ օձ ժը սուլթանացաւ, եղաւ Օրխան:

Նոր աւերումներ, նոր դժբախտութիւններ, հիներէն աւելի սաստիկ,
աւելի վնասարար...

Օսմանցիները նոյն բնթացքով սկսան յառաջանալ դէպի Արեւմուտք...
Իրարու յայրողեցին հիւնիւմներ, քալամներ, անպատմելի ատապանք-
ներ, սուզի տարիներ, զալլամ սուլթաններ...

Շարունակուեցան խոտ չրուացնող արշաւանքները անխիղճներուն...

Այժմեան անուններով՝

Գոնիայէն՝ Աֆրոն-գարահիսար, Էսքիշէհէր:

Գալսէրիէն՝ Սիւրիշիսար, դէպի Պոզանքէօյ:

Երողաթէն՝ Էնկիւրի կամ Անգարա, դէպի Գոզպէք...

Օսմանեան յառաջացող բանակներու երեք ճիւղերը՝ Էսքիշէհէրէն, Պո-
ղանքէօյէն եւ Գոզպէքէն իրելի գացին, զիրար դատն թարախլը կոշուող ա-
ւանին մէջ:

Հոն մնացին ժամանակ մը, աւելի զօրացան, քալամի նոր տենչերու
մեծ պալարներ գոյացուցին, թարախլը մէջ քարալս կապեցին կամ կաղմե-
ցին, յետոյ պայթեցան...

Եւ,

Վայրագութեան գարշելի հեղեղ ժը անդիմադրելի թափով ճամբայ
հլաւ դէպի Ատիլա, Ատարաղար, Իզմիթ, Քանտիրա, Շիլէ, Բիվա...

— Հէ՛հէ՛հէ՛հէ՛հէ՛ (Ձէնով — Օհանեան կանչով) հէ՛հէ՛... հէ՛յ...
Բիւզանդէտիներ՝

Պոլսոյ Պալէոլոգոս կայսրէտոին,

Բազրատունեաց մեր թագաւորութիւնը կործանող կոծակտիներ...
հէ՛յ, ի՞նչ կ'ընէք... քնացե՛ք էք... չէ՛ք տեսներ... ելէ՛ք... Անճամուսը,

Փաթիւ Սուլթան Մէհմէտ Բ., Կոստանդնուպոլսոյ գուռներուն առջեւն է
արդէն...

Մեծ վստանք եկա՛ւ, հասաւ:

Ի՞նչ ըրէք. դարձեալ՝ ոչի՛նչ:

Փոխանակ դիմադրութեան մասին մտածելու, կազմակերպուելու, փո-
խանակ ձեր պատին ու պատուական մայրաքաղաքը եւ պանծալի այո՛ Ս.
Սոֆիան փրկող անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու,

Ելաք՝

Ձեր կանխածը — նուարէտիներէն յիմարութիւնը — գերազանցելէք՝
կրօնական, գաւառաբանական վէճեր ստեղծելով...

Սուլթան Մէհմէտ, Պոլսոյ պարիսպներուն շուրջ, իր օրտուպաշէն-
րուն հետ, քաղաքը գրաւելու ծրագիրներ կ'որոնար,

Իսկ դուք, իրիստաւի մասին, կարծիքներու «կանառակա՛ն» դիմադար-
ձութիւններով, ժամանակ կը վատնէիք, իրաւունք չէիք տար իրարու, կը
բարկանայիք եւ կը բանազրէիք, ձեր բառով ըսեմ՝ կ'ափրոգէիք զիրար...

Նշանաւոր պատմագէտ Ժապ տը Մորկանի բնորոշումով՝ «տխմար քա-
ղաքակաւմութիւն»...

Օսմանցիներու առաջին իսկ դրոհին, այո, դիտակցեցաք ձեր հին ու

նոր սխալներուն, անհետատեղութեան, ձեր դարաւոր թմբերէն վերջնական-
նապէս սթափիլ բարեհաճեցաք, բայց՝

— Մարիապա՛, Հասո՛... .

Շատ ուշ էր այլեւս...

Մեասասներորդ ժամուն բիւզանդէստիներուդ կանդնիլն ու պաշտպա-
նողական կռիւներ մղելը ուրիշ բան չէր,

եթէ ոչ՝

Մատենոց մը ջուրի մէջ փոթորի՛կ...

Ժ.

ԱՐՄԷՆԻԱՅԷՆ ՊԵԹՈՆԻ ԵՐԿԱԹ ԳՈՂՆԱԼՈՒ ՅԱՆՑԱՆՔԻՆ ՊԱՏԻԺԸ

Բնական է, մատնցածաւալ այդ «ովհէանութիւն» ֆաւրքաման ո՛չ միայն
չկրցաւ փրկել ձեզ ու կոստանդնուպոլիսը,

Այլեւ՝

Հապճեպ հազուած, կուրծքը բաց ձգած ճարտցի կէշաներու պէս հա-
ճոյք պատճառեց թիւի, վայրագութեան գերակայութեամբ գինովցած օս-
մանացի թուրքերուն:

Աւելին՝

Մեասասներորդ ժամու հասանցերուդ ղիմադրական խեղճութիւնները
եռք հանեցին տկարներու դէմ կռուի ելլելու հրոսական կրիքը ճաթի մէջ-
մէտի վանտալներուն:

Եռք հանեցին ու բազմապատկեցին...

Անհամուս սուլթանն ալ տիրացաւ շատ արժէքաւոր, շատ մեծ քա-
նորդներու, որոնք ահաւասիկ.—

Բիւզանդական կայսրութեան կործանում,

Մայրաքաղաք Կոստանդնուպոլսոյ սեփականացում,

Իսթանպուլի մէջ օսմանեան գահի հաստատում,

Պալատներու կողոպուտ, կայսերական անգնահատելի՛ գանձերու տե-
րացում,

Հարկմական անդին «հարստութիւններ», այսինքն՝ շնաշխարհիկ իշ-
խանուհիներ, հրապարակ կոյսեր, աննման նաժիշտներ,

Ս. Սոֆիա մայր տաճարին մէջ, համիտեան ջարդերէն քիչ մը պզտիկ՝
յունաց մեծ եղեռն...

Բիւզանդական մեծ կայսրութեան կործանման մասին խօսող, յունաց
միտոներն ու սրտամոխիկ տառապանքները ներկայացնող պատմագէտներու
յողուածներուն եւ գրքերուն մէջ արձանագրուած է, թէ անկումէն ետքն ալ,
դեռ երկար ատեն, մայր եկեղեցւոյ վերի մասերուն վրայ, կամարներուն
մօտ, կ'երեւէին շորցած արեան հետքեր՝ ցոյց տալով նահապետներու դիպե-
ներուն մինչեւ մ'էր գիղումը թլլալը:

Հիմա չկան ատոնք...

Արիւնամու թուրքերը, առանց կոտորածի անցած տարիներուն, տնտարակոյս, մերտիւման դրեր, Ս. Սոփիայի պատերն ի վեր բարձրանալով՝ լակեր, լիղեր, մաքրեր եւ բոլորովին անհետացածքեր են... Չարգաչափ հետքերը յունական չորցած արեւներն...

Պատմութեան մէջ, սակայն, անջնջելի կը մնան ամօթալի հետքերը բիւզանդական... սիրուն իշխաններուն, փափկասուն կոմսերուն, պալատական ճրճ-քրքրաբան երիտասարդներուն, մա'նաւանդ՝ սպաննուած կայսեր որդիներուն, որոնք բոլորն ալ, հարէմներու մէջ եւ հրապարակներու վրայ, առանց սեռի խտրութեան, զոհ գացին անմաւն սուլթանին եւ իր ռաիփա-նիներուն սեռային փիս-պօղազութեան:

Այսպէս ու աշպէս:

Հապա՛, բիւզանդիստիներ, Հայաստանի հանդէպ ձեր ունեցած անհեռատես քաղաքականութիւնը, Բագրատունեաց թագաւորութիւնը կործանելու ձեր անհերքի տրարքը, ի վերջոյ, դերութեան մէջ, հարէմական կամարներու տակ ու հրապարակային խնէշութիւններու ընթացքին, մօտէն, ինչե՛ր ցոյց տուաւ ձեզի, եւ... զգացուց...

Ասկա՛ Արմէնիայէն պէքսնի երկաթ զոռնալու, կամ՝ անբխտոնէտ վայել դուերով զոռցած բլլալու մեծ յանցանքին պատիժն էր, որուն ենթարկուեցաք զահաժառանգներով, կոմսուհիներով եւ կոմսերով, էգ ու արու, բոլորով ալ...

Ենթարկուեցաք եւ անցաք պատմութեան, կործանեցաք ու դացիք...

Ոչինչ, ոչինչ մնաց ձեր կայսերական մեծութենէն, փարթամ կեանքէն եւ անգերազանցելի փառքերէն...

Ափսո՛ս...

Հիմա՝

Արեւելեան Թուրքիոյ վոսփորունի տարածքին վրայ, բիւզանդականօրէն բոլորովին ամայի է շքեղ, բնագեղ Կոստանդնուպոլիսը...

Հայկականօրէն ամայի է նաեւ էր երբեմն այսպէս կոչուող քիւզամ-դակամ Հայաստանը...

Սակայն դուք պատմութեան անցաք, մենք, հակառակ բազմապիսի դժուարութիւններու, մնացինք, հին թիմուրեան սպանդներէն աւելի սաստիկ համիտեան ջարդերու զոհ գացինք, յետոյ քուեցանք հեռաւոր անապատներ, ցեղասպանութեան ենթարկուեցանք, բայց չմահացանք:

Այսօր տէր ենք հսկայ արժանիքներու, չենք մոռնար մեր նահատակները եւ մեր հողերը, որոնք ձերիներուն ճակատադէրը կը բաժնեն ձեր անհեռատես քաղաքականութեան պատճառով...

Ամէն ինչ, Այա Սոփիին պէս թրջացուած է հոս ու հոն...

Քանի մը օր ետք, զէպի Անի եւ Արարատ վտանգաւոր ճամբոս շարունակելէ առաջ՝ ես ալ պիտի «թրջանամ»...

Հայ մնացող Կրիկորիոս Արմէնիա՛ւը լինի ինծի պահապան, լինի օգնական՝ մինչեւ հասնիմ Մշոյ՝ Սուլթան Ս. Կարապետ...

(Շար. 3)

Յ. ԶՈՐԵՑԻ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Յ Ե Տ Ե Ր Կ Ա Ր Ա Տ Ե Ի Հ Ի Ի Ա Ն Դ Ո Ւ Թ Ե Ա Ն

Երբ առաջին անգամ տեսայ զինք, երկար վարունգի մը տպաւորութիւնը թողուց վրաս: Հասակը երկար էր, աւանդները երկար, դէմքը երկար, քիթը երկար, թեւերը երկար, սրունքները երկար... երկարութեան ժամանացումն էր: Ժամանակի ընթացքին սորվեցայ իր անունը, որ դարձեալ երկար էր: Խաչատուր, եւ մականունը շատ աւելի երկար՝ Սողանէմէղեան:

Ջարմանալին այն էր, որ այս բոլոր երկարութիւնները անհունօրէն կը յարմարէին իրեն: Սակայն ինչպէս ամէն օրէնք պէտք է բացատրութիւններ ունենայ, ժամանակի ընթացքին երեւան եկաւ Խաչատուրի կարճ կողմը՝ խելքը:

Այն ատեն դեռ տասնըվեց տարեկան էի եւ գուցէ ուսուցիչները համամիտ չէին ինծի հետ, որովհետեւ Խաչատուր Սողանէմէղեան փայլուն աշակերտ մըն էր: Շատ մը դասերու մէջ առաջին էր, ինչ որ ենթադրել կու տար, թէ խելացի էր, Սակայն քանի մը դասերու առաջնութիւնը պարզապէս արդիւնքն էր իր աշխատասիրութեան, եւ տրամաբանու-

թեան ու դասողութեան պակասը շատ մը աւիթներով յայտնուած էին իր մօտ:

Հաճելի ընկեր էր ու կատակասէր, սակայն իր արտակերպին խեղկատակութիւնները, զուարճացնելով հանդերձ շուրջիները, ամէն առիթով կը հաստատէին, թէ բան մը կը կաղար իր տրամաբանութեան մէջ:

Օր մը, կանուխ գառարան մտնելով, քիչ-քիչ միզած էր բոլոր մեղանի կաղամարներուն մէջ: Քննութեան օր մըն էր, ու երբ սկսանք գրիչները թաթխել մեղանին մէջ, դրելու մեր բոլոր փորձերը անցան ապարդիւն: Ահապէս տակնուվրայութիւն մը ստեղծուեցաւ: Միայն ուսուցիչը շատկցաւ իրողութիւնը: Բաւական ժամանակ անցաւ, մինչեւ որ կաղամարները մաքրեցինք ու նոր մեղան լեցուցինք անոնց մէջ: Քննութիւնը յետաձգուեցաւ յաջորդ օրուան ու այս մեղանին դունաթափութիւնը առեղծուած մնաց ուսուցիչին համար:

Ուրիշ օր մը, եկեղեցւոյ դրան առջեւ զետեղուած օրհնեալ ջուրին մէջ քիչ մը մեղան լեցուցած էր: Եկեղեցի մտած ա-

տեն, աշակերտները պէտք է իրենց մասնակցությունը օրհնեալ ջուրով եւ խաչակրներէն: Մենք եղաւ բոլորին զարմանքը, երբ նշմարեցին, որ սմանց ճակատը, ուրիշներուն շապիկը մէկանով ներկուած էր: Դարձեալ առեղծուած մը, որ մնաց անլուծելի:

Այս բոլորը, անշուշտ, ճաշակի եւ սրամտութեան խօսուելն փաստեր էին, սակայն ասոնց մէջ, ճիշատութիւնը բաժինը միայն յանդիմութիւնն էր: Այս խաղերը իր յղացումները չէին, իսկ ո՞վ էր բուն հերոսը, գաղտնիք մըն էր, որ մեր մէջ պահուած մնաց:

Օր մը, ուսուցիչին ջուրի կուժին մէջ, քանի մը կաթիլ մելան լեցուց: Մարդը երբ կուժը վերցուց խմելու համար՝ ի տես կապոյտ հեղուկին, յանկարծակիի եկաւ, փոնգոտաց, դրան-գրլուխը, գէմքն ու դետինը կապոյտով ներկեց:

— Ո՞վ մելան լեցուց այս կուժին մէջ, — կ'աղաղեց խեղճը շուարած:

Անշուշտ այս հարցումը մնաց անպատասխան: Ուրիշ հարցումներ ալ ըրաւ, որոնց ամէնէն յատկանշականն էր՝

— Ախ թունաւորե՞լ կ'ուզէք, ոճրագործներ...:

Գիտէինք, որ այդքան մէկանով մարդ չէր թունաւորուեր, ոչ ալ կը մեռնէր: Սակայն որքան հաճելի էր մեղի դիտել ինքնիրմէ ելած ուսուցիչը, որ կուժը պատին զարնելով փութը-փութը կ'ընէր զայն եւ կապոյտ հեղուկը, որ տակաւին կը հոսէր պիտերէն ու ծնօտէն վար, անհուն հրճուանքով կը լեցնէր մեր հոգիները:

Առտու մը, ճաշատուր դպրոց եկաւ, պայուսակին մէջ՝ ստակած ջրիկ մը:

— Երէկ տակաւին ողջ էր, — բացատրեց, — իրիկուան դէմ կը խաղայինք, երբ յանկարծ դնդակին զարնուեցաւ եւ ինկաւ ուշաթափ: Քիչ-քիչ արթնցաւ ու սկսաւ շարժիլ: Պայուսակին մէջ պահեցի, որ բերեմ քեզի:

Քանի մը օր դարակին մէջ պահեց

սիրուն ջրիկին դիակը: Շարաթաւերջի արձակուրդէն վերադարձին, երբ դասարանին դուռը բացինք, ներսի օդը ապականած էր:

Պատահանները բացինք, հովը դուռնէն ներս խուժեց ու պատահաններէն դուրս սլացաւ: Խաղայն տակաւին անշունչի էր օդը:

— Ստակած ջրիկ մը դասարանին մէջ, — զարմացաւ ժամիտ տնուցիչը, — ինչպէ՞ս եղած է, որ կրցած է փակ պատահանէն ներս մտնել ու պահուելով զարակին մէջ...:

Օր մը, ճաշատուր դպրոց եկաւ, գրպանին մէջ լեցուցած շատ մանր գորտեր:

Կէսօրուան դադարին, դետեղերը զացած էինք ու այդ հրաշայի կենդանիները հմայած էին զինք: Քաջալերուած անոնց առատութենէն, սկսած էր հաւաքել ու լեցնել գրպանը:

Դասի ընթացքին, պատիկ գօնդօշները սկստն մէկիկ-մէկիկ խոյս տալ իրենց արդելարանէն: Դասարանին մէջ աւտոգին տակնուվրայութիւն ստեղծուեցաւ: Հիւրերը ամբողջութեամբ զրաւեցին տախտակամածը: Ուսուցիչը, հրամանատարի մը նման, որ կը շուարի, ազամակաւորին վրայ տեսնելով անծանօթ գինուորներ, յանկարծ անհիշեցաւ, ինչպէս բռնուեցաւ, սկսաւ անկապ խօսքեր ու ճիշեր արձակել:

— Ասոնք ուրկէ՞ եկան... ի՞նչ են... ո՞վ բերաւ... ուրկէ՞ բերաւ... ինչպէ՞ս պիտի ընենք... դուռը բացէ՛ք... այս ի՞նչ խայտառակութիւն է:

Իսկապէս խայտառակութիւն էր: Մինչեւ որ կրցանք դասարանը մաքրել, որքա՞ն շարաւրուեցանք: Հարկ եղաւ դետիները սողալ, աստուծոնք կատարել, ոտքի ու ձեռքերու զանազան շարժումներ, խեղճուած փոքր ճիշեր արձակել, սարսափեցնելու ու փախցնելու համար ապստամբ երկակենցաղները:

Ձրօսանքի զանգը հնչեց ու վերջ դրաւ այս արկածախնդրութեան: Ատմորդ պահուն, ուրիշ ուսուցիչ մը եկաւ, տար-

բեր վասի մը համար ու այս հարցը ինքնաբերաբար մոռցուեցաւ:

Հեղ մը, Կրականութեան ուսուցիչին փայլուն դասաւանդութիւններէն խանդավառուած, որոշեց քերթուածներ դրել: Բանաստեղծութեան մէջ, Խաչատուրին համար, էականը բառերն էին: Սկսաւ բառարանները պրպտել, ժամերով, օրերով, Կրակնու համար դժուար հաւանջ եւ շնայաբհիկ բառեր, որոնցմով կը զարգարէր իր քերթուածները:

— Այսօր աղուոր բառ մը գտայ, — ուրախութեամբ կը զիմաւորէր զիս առաւտուն, — խոճկոտ, լաւձ եւ, խոճկոտ խոզի ձագին կ'ըսեն, խոճուին հետ սքանչելի յանգ կ'ըլլայ: Մտիկ ըրէ, ինչպէս է:

Ուսուցիչը՝ խոզ, վայրագ ու խոճոտ, Աշակերտներս՝ նորախա խոճկոտ:

Իր տողերը յանգաւորելու սիրոյն, մեզ բոլորս խոճկոտի կը վերածէր:

Ուրիշ օր մը, Կու զար ուրիշ ճիւղ մը կ'ուսցին.

— Լաւձ եւ բոխինձ բառը, — կը բացատրէր, — մեր գիտցած հելվային մէկ տեսակն է: Հելվային հրուշակ ալ կ'ըսեն, հրուշակ, ինչ լաւ կը յարմարի դրօշակին հետ:

Ու անմիջապէս գործի կ'անցնէր, տողեր կազմելու համար.

Ով կերած չէ քոխինձ, հելվայ կաւ
 հրուշակ,
 Պէտք է պարզէ պարտաւթեմ մեծ
 դրօշակ:

Օր մը կոտեմ եւ կ'ուտեմ, ուրիշ օր մը՝ յաղուրդ եւ արձակուրդ, հէք եւ վէպ, թեք եւ էգ, տէգ եւ մէգ, ու նման նմանահունչ բառերը տուտ նիւթ կը հայթայթէին նորանոր քերթուածներու:

Ինչպէս ամէն քերթող գլուխ-գործոց մը կ'ունենայ, Խաչատուրն ալ, իր կարգին, բացառութիւն մը չկազմելու հա-

մար, արտադրեց եւ հրատարակեց, աւելի ճիշդ կ'ըլլար ըսել՝ հրատարակեց իր գլուխ-գործոցը, զոր օր մը, առտու կանուխ, գրուած գտանք գպրոցի մուտքի պատին:

Երէկ գիշեր, պարոմ Պետիկը,
 Բոնեց օրիւրգ Մարիին ծիծիկը,
 Յետոյ միասին հեծան հեծիկը,
 Ու արագօրէն գլին կծիկը...

Առտուն, պարոն Պետիկը, որ ո՛չ հեծած էր հեծիկը եւ ոչ ալ դրած էր կծիկը, — աւելորդ է ըսել, որ մնացեալն ալ զուտ բամբասանք էր ու Խաչատուրի յանգամարութեան մէկ քմայքը, — դըրխուն հաւաքած քանի մը աշակերտներ, փայտէ սանդուխ մը, դոյլ մը ջուր եւ մաշած խոզանակ մը՝ կ'աշխատէր պատին վրայէն ջնջել տխրաբոյր արձանագրութիւնը, օրիորդ Մարին ժամանումէն առաջ: Եռուով ամէն ինչ կարգի մտաւ ու պարոն Պետիկ, իմաստուն հեռատեսութեամբ մը, խնդիրը բնաւ չքննարկեց, հագիւ քանի մը աշակերտներ կըրցած էին կարգալ առաջին երկու տողերը, ու շուտով ամէն ինչ մոռցուեցաւ, առանց որեւէ լուրջ հետեւանքի:

Տարիներ անցեր են այդ յիշատակելի օրէն: — Հետաքրքրական է նշել, որ պարոն Պետիկի եւ օրիորդ Մարիի միութեանը իրականութիւն է դարձեր: Սակայն ներքին չէ՞ կասկածիլ, որ Խաչատուր, որոշ տուեալներէ ներշնչուած էր, գպրոցին պատը այնքան խանդավառութեամբ մրոտելու համար:

Ուսումնական տարեշրջանը իր լրումին կը հասնէր, բանաստեղծութեան խանդը շատոնց խամրած էր իր մէջ: Հիմա գրադած էր դրոշմաթուղթերու հաւաքածոն ճոխացնելով: Այժմ յանգերը մոռցուած էին, կարեւորը Մատակասկարի հինգ Փրանկիոցն էր, Հնդկաստանի քան չիլինոցը, Սանտուիլի Կղզիներու յիսուն սէնթոցը...

Դրոշմաթուղթերուն յաջորդեցին քննութիւնները, վկայականները, ու ապա

հրաժեշտ տուինք զրասեղաններուն, ուսուցիչներուն, պարոն Պետիկին եւ օրիորդ Մարիին, նետուեցանք կեանքի պայքարին մէջ: Յաշատուր իր դրօշին ղնաց, ես՝ իմ դործիս, սակայն միշտ մնացինք բարեկամներ, միասին անցընելով Կիրակի օրերը:

Առաջին հերթին, յաշատուր խանդավառուեցաւ պարերով, քումպայով, սուրմիկով ու սաւնայով: Իր օրինակին հետեւելու համար՝ ես այնքան քաջութիւն եւ համարձակութիւն չունէի, ոչ ալ նիւթական կարողութիւն: Սակայն իր պատմութիւնները, այն ատեն, կը յուղէին կիրքերս ու, ինչ մեղքս պահեմ, անսակ մը կը նախանմէի յաշատուրին, որ իրական էրիկմարդու մը պէս, հաճելի ժամեր կ'անցընէր գեղեցիկ սեռին հետ:

— Օր մը, երբ ութ ոսկի ունենաս, միասին կ'երթանք, — ըսաւ անգամ մը իր արկածախնդրութիւնները պատմելէ ետք: — Տեսնես ի՞նչ լաւ ժամանակ կ'անցընենք: Աղջիկներուն ձեռքը կը բռնեն պարի ատեն, մա՛նաւանդ քամիկի ատեն, ուղածիդ շափ կը սեղմես, բան չեն ըսեր, ընդհակառակն, կ'ախորժին: Սաւնայի ատեն, ձեռքերնին բռնելու առիթ շատ չես ունենար, սակայն եթէ ճարպիկ ըլլաս, կրնաս գլխուդ ճարը նախել:

Ապա, կարեկցական ժպիտով մը, կ'եղրակացնէր.

— Օր մը, երբ ութ ոսկի ունենաս, միասին կ'երթանք...

Այն ատեն կարծեմ հարցուցի, թէ ի՞նչ իմաստ ունէր եւ կամ ի՞նչ հաճոյք կրնար առթել աղջկայ մը ձեռքը սեղմելը, եւ աւելցուցի, թէ ես ութ ոսկին չէի զոհեր սոսկ աղջիկներուն ձեռքը սեղմելու համար:

— Ապուշ, — ըսաւ ծիծաղելով, — ամէն ինչ աղջկան ձեռքը սեղմելով կը սկսի Ձեռքը սեղմելով եւ աչքերուն նայելով՝ ամէ՛ն ինչ կրնաս հասկնալ իրեն: Երբ միտքդ հասկցուցիք աղջկան, այլեւս նպատակիդ հասած կ'ըլլաս:

— Լաւ ուրեմն, — ըսի աւելի ու աւելի մտահոգ, — ըսենք, թէ միտքս հասկցուցի աղջկան, անկէ ետք ի՞նչ պէտք է ընեմ...

— Ի՞նչ պէտք է ընես, — կրկնեց զարմացած, — պէտք է ընես՝ ինչ որ միտքդ դրած ես: Սինեմա կը հրաւիրես, սինեմայէն հլիկէ ետք՝ անուշաժաճանին քով մէկ-երկու կաթօ կը կերցնես, որպէսզի բերանը անուշայ, ապա տուն գերադարձին, երբ արդէն քիչ մը մթնցած կ'ըլլայ, ամայի տեղ մը անկիւնը կը սեղմես գինք ու կը համբուրես...

— Ուրտեղէ՛ն:

— Ուրտեղէ՛ն, քայց չըթուցէ՛ն, — ջղայնացաւ, — քանի անգամ տեսած ես սինեմային մէջ: Դուն դպրոցը ամէն ինչ ընտրով կը սորվէիր, կը զարմանամ...

— Անպատեհաւ պէ՛տք է կաթօ կերցընել, — հարցուցի մտահոգ:

— Ճաշակի հարց է, — պատասխանեց, — սակայն ես որոշած եմ, եթէ օր մը յալոդիմ, միայն կաթօ պիտի կերցընեմ: Գիտես արդէն, կաթոյին համը շատ կը սիրեմ:

Ես այն ատեն սքանչացած էի յաշատուրի հնարամտութեանը վրայ: Ո՛չ, եղբակացուցած էի, դպրոցը ուրիշ բան է, կեանքը՝ ուրիշ: Դպրոցին մէջ ես իր վրայ խնդալու շատ մը պատճառներ ունէի, իսկ հիմա, իր դիմաց՝ ես ինքս ծիծաղելի դարձած էի:

Ութ ոսկին հաւաքելը բաւական դժուար եղաւ: Գրեթէ ամբողջ ամիս մը տեւեց: Մինչ այդ, ամէն անգամ, որ ինք նամակովու մը կարելի դառնար, ինքզինքս կ'երեւակայէի պերճաշուք պարսաւահին մէջ, պարելու պահուն: Կը լսէի մեղմանուլ նուագը, որուն հանգարտ չափերովը կ'օրօրուէինք ես ու գեղանի ընկերուհիս: Ապա իր ձեռքը պինդ կը սեղմէի, արքերս կը հանդիպէին իր աչքերուն ու ան կը հասկնար միտքս: Միայն այսքան: Ասկէ անդին միտքերս կը տարտըղնուէին, ու երեւակայութեանս մէջ կ'աղօտէին պատկերները...

Երբ ես ու յաշատուր պարսաւահին

ներս մտանք, առաջին վայրկեանն իսկ շխտաբափուեցայ ու համարձակութիւնս բոլորովին կորսնցուցի։ Սրահը շատ խեղճ էր, կարասիները՝ հին, ծածկոցները՝ մաշած, վարագոյրները՝ ճոթկոտւած... Հիւրասիրող տիկինն ալ մաշած էր ու խորամանկով ծածկուած դէմքին վրայ, կեղծ ժպիտը՝ իր ներկուած շրթնաքնքերով, տարուած լուրիկ տպաւորութիւն կը թողուր։

Առաջին անգամ, նայուածքս պարտացուցի սրահին մէջ, գեղեցիկներուն մէջէն գեղեցիկ մը ընտրելու համար։ Ափսո՛ս, նստած էին չորս-հինգ հատ, կոտորած ակոտաներու չափ ուզող, իրենց տղազակող թափթփածութեանը անդիտակ, քիթերնին տնկած ու հպարտ։ Եթէ ութ ոսկի վճարող աղջիկները ըլլային, այն ատեն զուցէ կարելի ըլլար տրամաբանական մօտեցում մը ունենալ խնդրին։

Կամացուկ մը կծկուեցանք թիկնաթոռի մը մէջ։ Մեր վրայ ուշադրութիւն իսկ չդարձուցին։ Անկասկած կը սպասէին հմայիչ իշխանին, որովհետեւ, մարդկային ըլլալու համար պէտք է ըսէի, որ անոնք ալ իրաւունք ունէին ետադրելու։

Առանց ռիալելու կարելի է ըսել, որ թուրքն ալ, անխոր, սպասուհիներ էին։ Իսկ երիտասարդները, իրենց շապկնեւրուն օձիքները մաշած, խամրած ու հիւսած փողկապներով՝ կը խնկարկէին քոսոտ հնդկահաւերուն։

Նուազը սկսաւ ու տղաքը խուժեցին աղջիկներուն վրայ, որոնցմէ ամէն մէկուն երեք-չորս տղայ կ'իյնար, ինչ որ անոնց արժէքը անհամեմատօրէն կը բարձրացնէր։ Խորքին մէջ, աղջիկներուն գեղեցկութիւնը այնքան կարեւոր չէր, քանի որ վերջին հաշուով միայն պարեւում եկած էին, միշտ է մտի ունենալով հանդերձ, կաթօ ուտելու եւ կերցնելու զգայացունց հեռանկարը։

Մինչեւ վերջ, խիտնջի պէս ես իմ մէջէն ամփոփուած մտացի, իսկ ինչպէս տուր, շնորհիւ իր երկար հասակին ու թեւերուն, կրցաւ քանի մը անգամ քաղ-

ցած քալալիէներու ձեռքէն խլել ուսուհի մը, ինծի ցոյց տալու համար պարելու իր բացառիկ կարողութիւնները։ Երբ գուրո եկանք պարտարահէն, երկար լուսն մը քաշեցի։ Թեթեւցած էի։ Դարձեալ վերագտած էի մէկ ամիս առաջուան հոգեվիճակս, առաւել՝ քիչ մը փորձառութիւն։ Այնպէս որ քանի մը ամիս ինչպէս որը հանգիստ թողուցի թօշնած սպասուհիներուն հետ։ Դէպքերը վերլուծելով, շատ գծում ու ստորին կը սեպէի աղջիկներուն մօտենալու ինչպէս տուրին ոճը։ Ուրիշ ասելի պարկեշտ ձեւ մը գտնուելու էր։

Մօտ վեց ամիս անցած էր պարային այդ արկածախնդրութեան օրէն, երբ Կիրակի առաւօտ մը, գրան առջեւ տնկուեցաւ վաղեմի ընկերս, ձեռքին բռնած ջութակի պայուսակ մը։ Դուրս եկայ ու միասին սկսանք քալել։ Ըսաւ, թէ չատոնց սկսած էր դասեր առնել իրենց ազգական կոյր Մանուկէն։

Մայթին եղբրը նստեցանք ու ինչպէս որ բանալով պայուսակը, հանեց ջութակը եւ հպարտութեամբ ճօճեց աչքերուս առջեւ։ Ապա, ցոյց տուա զայն բռնելու ձեւը, մատները վեր-վար շարժեց թելերուն վրայ, բացատրեց սոլ մածէօրի, սի միւնէօրը, պեմոլմ ու տիւզը։ Աւաղին վրայ զրեց քիչ տը սոլը, հինգ զիծեր քաշեց ու ապա բացատրեց ճերմակներուն, սեւերուն, կէսերուն եւ քառորդներուն արժէքները։

Վերստին սկսանք քալել։ Ըսաւ, թէ շատ յառաջացած էր։ Մէկ ամսուան մէջ ա՛յնքան սորված էր, որքան ուրիշներ կը սորվէին երկու տարիէն։ Պատմեց, թէ ինչպէս կոյր Մանուկը կը սքանչանար իր վրայ։ Կը սքանչանար մանաւանդ իր երաժշտական ականջներուն համար։

Ձգարմացայ։ Այդ քան երկար ականջներէն ամէն ինչ կարելի էր յուսալ։ Եթէ կոյր Մանուկին աչքերը յանկարծ բացուէին ու տեսնէր ինչպէս տուրին ականջները, ինք ալ պիտի չզարմանար։

Հասանք իրենց տան առջեւ։ Պնդեց, որ վեր ելլեմ, որպէսզի ցոյց տայ իր զնած երաժշտական գիրքերը։

Յայտնի էր, որ պարասրահի դրամը գացած էր երաժշտութեան գիրքերու ֆոնտին: Նոյն նպատակին համար ծախսուած էր նաեւ զրեթէ զրպանի իր ամբողջ դրամը:

— Կը տեսնե՞ս այս գիրքը, — ըսաւ խոշոր հատոր մը վերցնելով, — այս գիրքը գալ տարի պիտի կարենամ նուագել: Իսկ ամիկա նուագելու համար տառակաւն երկու տարի կ'ուզեմ:

Կեղծ սքանչացումով՝ ձեռքէն առի գիրքը, արագ աննորի մը նետեցի վերան, ու տեսնելով որ մէջը նկար չկար, մէկ կողմ դրի:

Իր դնած գիրքերուն մէջ կային կըտորներ Մոցարտէն, Պեթհովէնէն, Շոպենի, Չայքովսկիէն, Բորսաջովէն: Կային հունգարական րաքստիներ, փեննական վալսեր, չեւական քոքիւրմներ, Միկանէօրօյալերն, Յորտոս, Գարս մէնի ուլերթիւրը, Սելիէյի Սափրէշին ուլերթիւրը, Վալնէրի Թրիսթան եւ Իզէօյար, Պեթհովէնի Հինդերբը սիմֆոնիին երկրորդ մուլմանը, անաքաներ, Մարլաթթի, Պերլիոզ եւ Պրոք: Սեղանին վրայ դրուած էր նաեւ Պեթհովէնի կիսանդրին, իսկ պատէն կախուած՝ Ենհուտի Մենուհինի նկարը:

Մտածեցի, թէ երաժշտութեան մէջ ինչպիսիք բաւական ճամբայ կտրած էր, ու մտքիս մէջ սքանչացայ, նկատելով, որ իր ձգած ապաւորութեամբ, Հրաշք երաժիշտի մը, հանճարի մը բոլոր արեւակներով կը ներկայանար:

— Կը շնորհաւորեմ, — ըսի խանդավառ, — տունդ քոնսերվատորիայի վերածուեի է եւ ուրախ եմ, որ այսքան լուրջ աշխատանք կը տանիս յառաջիմելու համար: Սակայն մեկնելէ առաջ կը փափաքեմ, որ անպատճառ կտոր մը նուագես ինծի համար:

— Ուրիշ օր մը, — ըսաւ կարմրելով, — այսօր շատ յոգնած եմ:

Պնդեցի: Տեղի տուաւ: Զուլթակը վերցուց ու մատները քանի մը անգամ պտտացուց թելերուն վրայ: Ապա աղիղը թելերուն քսուեցաւ դանդաղ, արտագ-

րելով աղեխաղչ ու սրտանման կոխէջ մը, թեթեւօտ ու ամօթխած:

Տօ... Բէ... Մի... Տօ...
Բէ... Մի... Յա... Բէ...

աւ աղա՜ տօ, Բէ, Մի, Փա, սոլ, լա, սի, տօ, եւ ինչ որ անխուսափելիօրէն կը հետեւի՝ տօ, սի, լա, սոլ, Փա, Մի, Բէ, տօ...

Ողբերգական էր: Կանգ առաւ: Կարմրեցաւ: Իրարու նայեցանք ու ժպտեցանք: Հսելիք շատ բան չկար: Ունկընդորութիւնը վերջ գտած էր ու ես հեռացայ:

Տարի մը անցած էր այդ օրէն ու ես, չեմ գիտեր ինչու, ոչ իսկ անգամ մը տեսած էի ինչպիսիք: Յաշտտորը: Յաշտտորը:

Առտու մը, դրանս սեմին տնկուեցաւ վաղեմի բարեկամս: Դէմքին վրայ կը փայլէր ուրախ ու գոհունակ ժպիտ մը: Յայտնի էր, որ կ'անապարէր ու որոշ նորութիւններ ունէր յայտնելիք: Թեւեալ բռնելով՝ գոլթս քաշեց դիւ ու սուրբականին պէս սկսանք քաշել փողոցն ի վար:

— Ո՛ւր էիր այսքան ժամանակէ ի վեր, — հարցուցի, բան մը ըսած ըլլալու համար:

— Երէկ իրիկուն Ամերիկեան Գոլէճ գացի, — ըսաւ անհամբեր, — այնքան լաւ ժամանակ անցուցի, չես կրնար երեւակայել...

— Ուսո՞ւմդ պիտի շարունակես, — հարցուցի զարմացած:

— Զհապար, — ճշգրէց ծիծաղելով, — ան միւս գոլէճը, կիներու շուկան:

Ամբողջ ժամ մը խօսեցաւ: Տուաւ ամենաշնչին մանրամասնութիւններն իսկ: Նկարագրեց ինչ որ տեսած էր, լսած էր ու զգացած: Եզրակացնելով՝ ըսաւ, թէ կեանքը անիմաստ էր առանց այդ գործողութեան: Իսկ Հրաշալին հոն էր, որ պարի համար վճարուած ութ ոսկիով, այստեղ կարելի էր շորս տարբեր կիներու հետ պառկել:

— Բոլորովին կը մերկանան, — ա-

ւեցուց ախորժակս զրդոռելու նպատակով, — եթէ երկու ոսկի ունիս, իրիկունը երթանք:

— Զութակին մէջ ո՛ւր հասար, — հարցուցի հետաքրքիր:

— Զութակին խորն անիծեմ, — ջըղայնացաւ, — ես իրիկունը պիտի երթամ, եթէ երկու ոսկի ունիս, միտսին երթանք: Հոս զգացած հաճոյքդ ո՛չ ջութակը կու տայ քեզի, ո՛չ զբաղանութիւնը, ոչ ալ, ոչ ալ... ոչ ալ ո՛չ մէկ քան:

Երկու ոսկիէն աւելի ունէի դրպանիս մէջ ու այդ վայրկեանին բոլոր ունեցածս կու տայի, իրիկունը խաչատուրին ընկերանալու համար: Ակնթարթի մը մէջ մարմինս փշաքաղուեցաւ ու գաղջ սարսուռ մը համակեց էութիւնս: Սակայն պէտք եղած քաջութիւնը կը պակսէր ինծի:

— Այսօր բաւարար դրամ չունիմ, — բացատրեցի յուզումէս թուքս կլլելով, — սակայն դալ շարաթ եկուր, խօսք կու տամ, որ հետզ կու գամ:

Ամբողջ շարթուան ընթացքին՝ միտքս Ամերիկեան Գոլէֆին էր: Կը զարմանայի, թէ այդքան շնչին գումարով, ինչպէ՞ս կարելի էր ինծի բացատրուած քանակութեամբ հաճոյք գնել: Սակայն այս անդամ երկմտութեամբ կը մօտենայի ինչպատուրի խօսքերուն: Անպատճառ խախուռ քան մը կար այս բոլորին մէջ:

Գացինք: Երանի՛ չերթայինք: Լրիւկած կիներ, աղտ ու կեղտ, ուրիշ ոչինչ: Խաչատուրին խանդավառութիւնը չափ ու սահման չունէր, իսկ իմ տրամադրութիւնս գետնէ գետին կը զարնուէր:

Ընկերոջս հետ թշնամացանք: Իրարու կծու խօսքեր ըսինք: Ինք ըսաւ, թէ մէջս անընական քան մը կար, իսկ ես ըսի, թէ անճաշակ ու աղտոտ էր ինք:

— Դուն էրիկմարդ չես, — անդադար կը կրկնէր ճամբան:

— Իսկ դուն խողի քիմք ունիս, — կը պատասխանէի ջղայնացած:

Բաւական ատեն հեռու մնացինք իրարմէ: Ինք գտած էր իր համբան ու կանոնաւոր կերպով կը յաճախէր Ամերիկ-

եան Գոլէֆ: Պատահաբար կը հանդիպէինք ճամբան ու կը լսէի իր տիրային արկածախնդրութիւնները ամէնազգի կիներու հետ: Շիկահեր գեղունիներ, թրխաղէմ սիրունիկներ, տասնութնոց աղջիկներ, քառասուննոց կիներ, ինչ որ հանդիպէր:

Քսանը անցած էինք, մաղ մօրուք բուսած էր մեր երեսին, մարդու կարգ անցած էինք այլեւս:

Կերակի առաւօտ մը, խաչատուր մեզի եկաւ, լուրջ ու ինքնամփոփ: Ասդիէն անդիէն խօսեցանք, սակայն կը զգայի, որ ինծի հաղորդելիք հետաքրքրական լուրեր ունէր ու կը սպասէր պատեհ առիթին:

— Ի՞նչ նորութիւն ունիս, — հարցուցի, գինք քաջալերելու համար:

— Ինչե՛ր, ինչե՛ր, — փայտեցաւ խորհրդաւոր փայտով մը, — ի՞նչ կընես, եթէ ըսեմ, թէ նշանուեցայ:

— Կատակ կ'ընես, — ըսի յանկարծակիի եկած:

— Տես, — ըսաւ ձեռքը բարձրացնելով ու մատանին ցոյց տալով, — հիմա հաւատացի՛ր:

— Խե՛նթ ես ինչ, — զարմացայ, — դեռ շատ կանուխ է՝ ամուսնութեան մասին մտածելու համար: Ի՞նչ քանը պատճառ եղաւ, որ այս քայլը առնես:

— Խօսքին բացը, — անկեղծօրէն խոստովանեցաւ, — ձանձրացայ Ամերիկեան Գոլէֆին: Համ հոտ չունի: Պարզապէս դրամի թակարդ մըն է: Մինչեւ վերջ գործդ կեղծաւոր կ'ընենքու հետ է: Դրամիդ համար է, որ կը փայտին քեզի ու իրենց մարմինը կը ծախեն:

— Այդ բոլորը պատճառներ չեն, — առարկեցի, — ամուսնութիւնը լուրջ պատրաստութեան կը կարոտի, ու վրստահ եմ, որ դուն այդ պատրաստութիւնը չունիս:

— Նշանածիս հայրը բաւական ունեւոր է, — բացատրեց գոհունակ փայտով մը, — ըսել չեմ ուզեր, որ այդ դրամէն պիտի օգտուիմ, սակայն ապահովութիւն մըն է: Իսկ նշանածս, անմասն է, միայն

տեսնեալ Զեռքէն ամէն տեսակ դօրծ կու
զայ՝ լուսացք, արդուկ, կար, կերակուր
եփել, ամէն ինչ։

— Այդ բոլորը երջանկութիւնն չեն
բերեր, — առարկեցի։

— Ի՞նչ է երջանկութիւնը կը կար-
ծես, — ծիծաղեցաւ, — եթէ ամէն գի-
շեր անկողինիդ մէջ պատրաստ կ'ըն
ունիս, ատկէ ապահով երջանկութիւն չի
կրնար ըլլալ։ Ես կ'ընեմ ու հետ փորձա-
ռութիւն ունիմ, բնկեր, աշնպէս մը կ'ը-
նեմ, որ առաջին օրէն իսկ սիրահարի
ինծի։ Արդէն աղայ ինչ է՝ չի՛ գիտեր,
տունէն դուրս ելած չէ։

Այնքան լուսատեւ էր, որ ամէն լու-
ծում կը կարծէր, թէ կ'ընեմ ինչ որ
զայ։

— Նշանածա, նշանածա, — կը կըրկ-
նէր անդադար, — անեման աղջիկ է,
աշխարհի վրայ նմանը չունի։ Աշխատա-
սէր, գեղեցիկ, պատուաւոր, աւելիքն
պէտք չունիմ։

Իր տուած ծանօթութիւններէն իմա-
ցայ, որ աղջիկը իրմէ քանի մը տարու
մեծ էր ու կեանքին մէջ զարոցի երես չէր
տեսած։ Ուստի առաջ մասին իր վճի-
ռը արձակած էր։

— Ի՞նչ պէտք կայ ուսումի, վերջ ի
վերջոյ մենք ուսում առնելով ի՞նչ լաւ
ընենք։ Ժամանակի կորուստ միայն։ Կը
հաւատա՞ս, ամէն ինչ որ սորված էինք՝
մոռցեր եմ։

Մեր հանդիպումները քիչ-քիչ նուա-
ղեցան։ Հագիւ երկու տարին անգամ մը
կը տեսնուէինք։

Ճամբան օր մը դարձեալ հանդիպե-
ցանք։

— Ինչպէ՞ս է ամուսնութիւնը, —
հարցուցի հետաքրքիր։

— Լաւ է, — ըսաւ երկիմաստ ժպի-
տով մը, — նայիսկ շատ լաւ է, — տուն
տեղ ունիս, կնիկ ունիս, գիշերը տաք-
տաք կը պառկիս, մէկ անգամ... երկու
անգամ... որքան որ ուզես, քուկդ է,
ո՛չ ծախս կայ, ոչ ալ հիւանդութիւններէ
վարակուելու վախ։

Ուրիշ հանդիպումի մը, նուազ խան-
դավառ էր։

— Գիշերը մինչեւ առաւօտ չքնա-
ցայ, — կը գանգատէր, — աչքերս չգո-
ցեցի, երեքսն անտոնելիօրէն լալկան է։

— Երեւի երգիչ սիւտի ըլլայ, —
կատակեցի, — արուեստագէտ հօրմէ՛
արուեստագէտ դասակ կը ծնի։

Պահ մը ինքնամոլորեցաւ, անցնա-
լը վերջիչելու համար։

— Կը յիշե՞ս ինչ լաւ բանաստեղծու-
թիւններ կը գրէի, — ըսաւ հիասթաշ-
— եթէ մինչեւ հիմա շարունակէի, ան-
կասկած տեղ մը հասած կ'ըլլայի, այն-
պէս չէ՞։

— Անկասկած, մա՛նաւանդ՝ որ յան-
դեր չի նկու մէջ անեման էի, իսկ հի-
մակուան բանաստեղծները, գիտես, կէ-
տադրութիւնն իսկ կարգին դործածել
չեն գիտեր։

— Իսկ ջութակի դասերս, — շարու-
նակեց վերացած, — չես կրնար երեւո-
կայել, թէ որքան յառաջացած էի։ Եթէ
մինչեւ հիմա հետեւէի՝ կը կարծեմ, թէ
մեծ ջութակահար մը կրնայի ըլլալ։ Ի՞նչ
է կարծիքդ։

— Ամբողջովին համամիտ եմ, —
հաստատեցի իրեն հաճելի թուելու հա-
մար, — արդէն անգամ մը, որ մտիկ
ըրի քեզի, խոստովանիմ, շատ յաջող
չէր, սակայն ես այն օրն իսկ զգացի, որ
մեծ արուեստագէտ մը կար պահուած
մէջդ։

Շատ դո՛հ մնաց խօսքերէն։ Ըսաւ,
թէ վերջերս սկսած էր մեծ փրոֆեսէօրէ
մը դասեր առնել, օրով հետեւ այդ կոյր
Մանուկը իշուն մէկն էր, որ երաժշտու-
թենէ բան չէր հասկնար։

Ապա իրաջանացած աւելցուց։

— Եթէ խելք ունենար, կոյր չէր ըլ-
լար։

Ուրիշ հանդիպումի մը ատեն յայտ-
նեց, թէ կուսակցութեան մը անդամա-
դրուելու մտադիր էր։ Ուսուցիչութեան
հասկացուց, թէ ինքն իր մէջ կը զգար դե-
կավարի եւ ազգային դործիչի շնորհք,
հետադարձական յատկութիւններ, ամբոխ-
ները զեկավարելու եւ խանդավառելու
հազուադէպ վարպետութիւն։ Իրեն թե-

լազրեցի, որ հետու մնայ կուսակցութիւններէն:

— Կը սխալիս, — ջղախնացաւ, — չե՞ս գիտեր, որ ազգը ինծի պէս մարդոց պէտք ունի եւ թէ վերերը բարձրանալու ամենակարճ ճամբան կուսակցութիւններն են: Զե՛ս կարծիք, որ հետու մնալով կրնամ դասակիք սեպուիլ: Առանց կուսակցութեան մը հրաշալի լծակին, դժուար է յաղորդիլ եւ համազգային հռչակի տիրանալ, եթէ անհատու ժառանգորդութիւն եւ վկայականներ չունիս: Ի՞նչ ես, գիտես, բոլոր ունեցածս սերթիֆիքս մըն է: Անշուշտ պիտի ըսես, թէ իմ պարագաս տարբեր է: Եթէ գիտես ինչ որ ես կը գլուխ առնեմ: Ա՛խ, երանի շա՛տուսացած՝ զղայի ալս բոլորը: Այն ատեն, գիտես թէ ժիտքս ուր էր:

— Գիտեմ, գիտեմ, — ըսի սինիք ժպիտով մը, — Ամերիկայի Գոլդեն էր: Կը յիշեմ նոյնպէս, անգամ մը ըսիք, թէ երջանկութիւնը ամէն օր անկողինիդ մէջ պատրաստ կնիկ մը ունենալուն մէջ կը կայանայ:

— Այն ատեն երեխայ էի, — ջանաց ինքզինքը արդարացնել, — խելքս միայն ազգանքին կը հասնէր, խելք տուող ալ չեղաւ: Երանի՛ք զի, որ ամուրի մնացիք:

Ջանացի ցոյց տալ իրեն, թէ ամուսնութիւնը այնքան ալ գէշ չէր եւ թէ չէր մը բարեկամեցողութեամբ, խելքով ու տրամաբանութեամբ, կարելի էր երջանիկ կեանք մը բոլորել:

— Բայց երջանկութեան համար մէկը պէտք է հասկցող կին ունենայ, — զանդատեցաւ, — իսկ կինս, գիտես, դժուար-զլախի մէկն է, հետը նստելով՝ երկու խօսք չէս կրնար խօսիլ, բանէրամպակէ լուր չունի:

— Այդ բոլորը ամուսնանալէ առաջ մտածելիք, — բացատրեցի, ու ապա ըզգացի, թէ իր կացութիւնը ա՛յնքան ողբերդական էր, որ քանի մը խօսքով կտրելի չէր լուծուի մը գտնել իր վիճակին: Վերջին անգամ, երբ հանդիպեցանք, աղջիկը տասներեք տարու եղած էր,

իսկ իր բերնին մէջ կեղծ ատամնալար մը կար ու գէմքը լափազանց դալկացած էր:

— Ի՞նչ ունիս, — հետաքրքրուեցայ մտահոգ, — շատ ինկած կը տեսնեմ քեզ, — Բան մը չէ, — ըսաւ ծիծաղելով, — քիչ մը շաքար ունիմ, կարծեմ թեթեւեթեմով մը շուտով քան չի մնար:

— Իսկ ի՞նչ Զուրի վրայ է ընտանեկան կեանքդ:

— Շատ լաւ, — պատասխանեց դուրսէն ժպիտով մը, — մեր գիւղացի է՝ չը, գիտես, մաքրութեան եւ կերակուրի մէջ մէկ հատիկ է, արդէն ըսած էի քեզի: Իսկ մնացեալին համար ալ, հանձարեղ լուծում մը գտայ:

— Ի՞նչ, — հարցուցի զարմացած:

— Սիրուհի մը ունիմ, — պատասխանեց ցած ձայնով ու լրջացած, — անշուշտ կտոր մըն է, դեղին մազեր, կապոյտ աչքեր, անուշ լեզու, ճիշդ փնտրուածս է, վրաս կը խնայեմ: Ես ալ, գիտես, զինք բանէ մը պակաս չեմ ձգեր: Սահմակեցայ: Զէի յուսար, որ իր կիրքերը յազգեցնելու համար կրնար այդքան ծայրայեղութեան դիմել:

— Ըրածդ լաւ բան չէ, Խաչատու՛ր, — ըսի նախատական, — կը թելադրեմ, որ ժամ առաջ վերատեսութեան ենթարկես ընթացքդ:

Գլուխը օրօրեց՝ իմաստալից ձեւով, աչքերը սեւեռեց աչքերուս:

— Կեանքը պարապ է, — եղբակցուց, — մի՛ կարծեր, որ ուղածդ պիտի գտնես: Շուքդ կրնա՞ս բռնել, չե՞ս կրնար: Եւ սակայն քովդ է ան, ոտքերը փակած ոտքերուդ: Եթէ ըսեմ, թէ երջանկութիւնը չուրդ է, կրնա՞ս, ըսէ, կրնա՞ս բռնել:

Հարցական աչքերուս նայեցաւ: Զպատասխանեցի ու ինք շարունակեց:

— Քանի անգամ հարց տուած եմ ես ինծի. Խաչատու՛ր, ի՞նչ է փնտրածդ, դրա՞մ, պէտք եղածէն աւելի կը շահիս: Կի՞ն, տունը կապուած կով մը ունիս, որ նոյնիսկ բառաչել չի գիտեր: Զաւակնե՞ր կ'ուղես, վեց հաս շարեր ես ետեւ-ետեւի: Սիրուհի՛, հրեշտակ մը ունիս, որուն

լուրթներէն մեղր կը ծորի: Ինչ է ուղտի, քայտաւոր: Կը հաւատա՞ս, պատահական մը գտնել չեմ կրնար եւ մտածեմ, որ աշխարհի վրայ ոչ մէկը կրնայ պատասխանել:

Ես լուռ էի:

— Երբեմն կը կարծեմ, թէ լուծումը դրեթէ գտած եմ եւ թէ պատասխանը հոս, լեզուիս ծայրն է, — շարունակեց զրդուած, — ապա կը զգամ, որ մարդ տարածք, Նոյնիւկ ամենախելացին ու ամենազարգացածը, խաւարին մէջ խար-խափող ողորմելի մըն է: Ի՞նչ եղաւ կեանքս մինչեւ այսօր, կ'ուզե՞ս վեր-Պտուենք: Ես ջանացի կեանքին պարապը լեցնել: Բանէ չվարացայ, յանդգնութիւնը չէր պակսեր ինծի, մինչեւ ցեխերուն մէջ իջայ, իսկ հիմա, սիրուհի ունիմ, կնոջս կը դաւաճանեմ...

— Մարդկութիւնը ապրելու օրէնքներ սահմանած է մեզի, — ըսի:

— Դիտե՛ս ինչու մարդ օրէնքներ սահմանած է ինքն իրեն, — շարունակեց աւելի մտահոյ, — օրէնքներ սահմանած է, որպէսզի այդ օրէնքները խախտելով հաճոյք զգայ ու գոտարճանայ: Մենք Աստուծոյ դրած օրէնքները առաջին իսկ օրէն ոտնակոխ ըրած ենք, կը կարծե՞ս, որ մարդկային օրէնքները պիտի կարենան արգելք հանդիսանալ մարդու հոգիին մէջ նստած շարին:

Մայթին վրայ նստեցանք: Հին օրերէն մնացած սովորութիւն մըն էր:

— Ինչո՞ւ Աստուծոյ ստեղծագործութեան մէջ երկուութիւն կայ, — հարցուց Ժպտելով, — լոյսին գէժ ստեղծած է խաւարը, կրակին գէժ՝ ջուրը, իսկ մարդկային հոգիներուն մէջ բարիին քով՝ դրած է, առաւել կամ նուազ չափով, շարք, սեւը: Որովհետեւ, գիտե՞ս, Աստուած իսկ փնտրութի մէջ եղած է ստեղծագործութեան ատեն, աշխատած է ամէն գնով լեցնել պարապը: Ինչո՞ւ եկած ենք մենք, կը կարծես՝ պարապ մը լեցընելու՝ համար, իսկ մեր հոգիներուն պարապը լեցնելու համար՝ Աստուած մեր մէջ դրած է շարը: Զե՞ս տեսներ աշխար-

հը, Աստուծոյ եւ մարդոց գործակցութեամբ ստեղծուած աշխարհը: Ամէն տեղ հակասութիւններ կան, ամէն ինչ իր ժխտականը, բացառականը ունի: Ես ալ, կնոջս գիմաց՝ ունիմ սիրուհիս:

Ընաւ շէկ սպասել, որ ինքզինքը արգարացնելու համար այսօր խորերը իջնէր ու հեռուները երթար: Եւ մած էի: Զէի գիտեր ինչ պատասխանել:

— Գիտի ըսեմ, քանի որ մարդու մէջ թէ՛ շարը կայ եւ թէ բարին, — շարունակեց այս անգամ աւելի հանգամանակով, — աւելի լաւ չէ՞, որ մշակէ բարին: Ո՛չ, կ'ըսեմ քեզի, ամէն ինչի մէջ քիչ մը շար բլլալու է, քանի որ շարը կեանքին աղն է: Ընչդ կը նմանի երկարականութեան. դրականը առանց ժխտականի՝ լոյս, կայծ չի տար...

Երկար շունչ մը քաշեց ու ապա շարունակեց.

— Ինչո՞ւ ինքզինքս պիտի կաշկանդեմ, բարի ապրելու համար: Եթէ վաղը մեռնիմ, ի՞նչ տարբերութիւն կը կարծես, որ պիտի ընէ, բարի ապրած եմ թէ չար: Ի վերջոյ, ինքնին կազմուած մոխիրը, չեմ կարծեր, որ որբակեաց մէկու մը մոխիրէն տարբերութիւն ունենայ:

Պահ մը լուց: Իրարու նայեցանք: Սքանչացած էի իր տրամաբանութեան վրայ: Գուցէ իր անձնական մտածումները չէին, ինչ որ կ'արտայայտէր, սակայն այնքան համոզումով կը խօսէր, որ կարելի չէր կասկածիլ իր անկեղծութեանը վրայ:

— Ես շարը ընտրեցի, — շարունակեց աւելի ու աւելի աշխոյժով, — սակայն խնդրեմ, վայրկեան մը սեպենք, թէ դուք բարին անձնաւորող մարդն ես: Հիմա ես հարց կու տամ քեզի. երբեւիցէ շնացած չե՞ս մտքիդ մէջ: Վստահ եմ, որ պատասխանդ ժխտական պիտի չըլլայ: Ուրեմն ի՞նչ տարբերութիւն կայ երկուքիս միջեւ: Դուք կը մտածես, իսկ ես կը գործադրեմ: Ընչդ այդպէս էր դպրոցը, կը յիշե՞ս, դուք կը յղանայիր, իսկ ես կը գործադրէի: Խորքին մէջ, ես սոսկ գործիք մըն էի, իսկ եթէ վերլուծենք

մեր դիրքերը, դպրոցի մէջ թէ կեանքի, դուն ինձմէ տւելի յանցաւոր կ'ըլլես, այսինքն՝ շնեղանաս, ինձմէ աւելի աղտոտ։ Պէտք է կեանքին ճակատէն նայիլ։ Ի՞նչ կ'ուզե՞ս բուն ճշմարտութիւնը, մերկ ու խօսուն։ աշխարհի վրայ բարի մարդիկ չկան, կան միայն չարեր եւ կաշկանդւածներ։

Խաչատուր, դպրոցի ատեն, թուաբանութեան մէջ կը կաղար, սակայն կեանքի մէջ, կարծես գտած էր հազուադէպ յայտարարը ու իր հետեւցուցած արդիւնքները շատ դիւրութեամբ կը քացատրէր ու կը լուսարանէր։

Բոլորովին իրեն համաժիտ ըլլալով հանդերձ, չէի կրնար իրաւունք տալ եւ արդարացնել իր վարքը։ Սակայն այնքան խօսած էր, որ շուարած էի ու չէի գիտեր կծիկին թելը ուրկէ՝ սկսիլ քակել։ Ինք կանխեց զիս։

— Գիտեմ, — ըսաւ ծաղրական ժպիտով մը, — հիմա պիտի աշխատես սուտ ու թիւր փաստերու դիմել, ինձի հակաճառելու համար, սակայն պարապ տեղ գլուխդ մի յոգնեցնէր, պատասխան չես կրնար գտնել, որովհետեւ այս բոլորը պատասխան չունին։

Ոտքի ելաւ ու հեռացաւ արագ։

Ետեւէն նայեցայ երկար ատեն, կարծես նախազգացում մը ունեցայ, թէ այլեւս պիտի շտեննէի զինք։ Կ'երթար արագ, իր երկար սրունքները առաւելագոյն շտփով քանալով, զլխահակ ու մըտամոլոր։

Նախազգացումները շատ յաճախ կ'իրականանան, մանաւանդ՝ երբ գէշ են։ Այլեւս չտեսնուեցանք։

Ժամանակ մը ետք, թերթին մէջ կարդացի իր մահազդը։ Հոգին աւանդած էր... յետ երկարատեւ հիւանդութեան։

Կաթիլ մը արցունք սահեցաւ այտէս վար ու ակամայ յիշեցի իր կեանքին ցայտուն դէպքերը։ Ապա, մեր վերջին հանդիպումը, ու իր փիլիսոփայութիւնը կեանքի մասին։ Մտածեցի, որ եթէ վաղրկեան մը կարողանար իր մեռելի դըլուխը վերցնել ու խօսիլ, անկասկած պիտի ըսէր։

— Ո՞ր երկարատեւ հիւանդութեան, շաքարախտի՞ն, ամէնեւի՞ն։ Ըսա իս, ամենաերկարատեւ հիւանդութիւնը կեանքն է...

Սխալած պիտի ըլլա՞ր։ Արդեօք պիտի կարենայի՞ պատասխանել...

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ



Իմացական Հարժու՛ժ

«ՅԱՆՈՒՆ ԵՒ ԸՆԴԴԵՄ»



Ինչպէս յայտնած էինք Պարսլը Սեւակի յիշատակին նախնական մեր վերջին գրու-
թեան վերջնաորութեան, թարգմանելու համար ընթերցողին յիշողութիւնը, յաջորդաբար
պիտի տանք եղբարարաբար բանաստեղծին մատուցական բերգէն լարք մը յատկանշական կը-
տորենք՝ ի մասին գրական ըմբռնումներուն, ճնշողատուութեան առաջնութեան, մայրենի
լեզուին մաքրութեան, գրական նոր երիտասարդութեան որոնումներուն, հաշիւի

կը սկսինք զննումն եւ ընդդէմ տեղիքի նախանիմենքի՝ ահաւ յազուածով, որ
հակառակ զժողովրդականութեան իր նկարագրին, երբեմն ցուցամուլ գառանումներուն ունի
գրական հոնգանակի մը ուժը:

Կարգադէտ առաջ Սեւակի զննումն եւ ընդդէմը կ'արժէ իմանալ ի պաշտօնէ ճանա-
գատ Սուրէն Ազարատեանի կարծիքը նոյն առիթ յազուածին մասին:—

Ընս չեմ խօսում Պ. Սեւակի ճշմարտն եւ ընդդէմ տեղիքի նախանիմենքի փայլուն
յօդուածի պարտաք մասին, որ հաւատարապէս վերաբերում է եւ ժամանակակից պոետի-
յին, եւ արձակին, եւ ճնշողատուութեանը... Կ'ասեմ անկիմ. այդ յօդուածը, որ շարքայիմ
յօդուած չէ եւ ամէն օր չէ, որ գրուած են նման ուժեղ, ասելիքով լիքը, սրամաքանութեան
յօդուածներ, իսկապէս դրական նշանակաւոր ինքնանշան մեր գրականութեան համար:

Իսկապէս, ամէն օր չէ, որ կը գրուին նման ուժեղ յօդուածներ:

Յաջորդով՝ զճնշողատուութիւնն այլեւս յաւելում չէ խորագրուած գրութիւնը, որ
այս մէկէն նուազ զնշանակէ չէ:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

ՅԱՆՈՒՆ ԵՒ ԸՆԴԴԵՄ

«ՌԵԱԼԻՉՄԻ ՆԱԽԱՀԻՄՔԵՐ» Ի

«Երիտասարդներից Կատերն ամուսն են բաներ, որ չեն ստ-
վորել (չա՛տ ափսոս), իսկ աւագներից ոմանք զանուս են
անել նորանոր բաներ, որպէսզի սովորեն (փա՛ռք Աստուծոյ)»:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

«Գրական թերթ»ում իր յօդուածը տպագրելիս Վահագն Դաւթեան ինքն
էլ գիտէր, որ իր խորհրդածութիւնները կարող են զմաքերի փոխանակութեան
եւ ստեղծագործական վէճերի առիթ տալ:

Ինչպէս տեսնում էք, այդ առիթն իսկապէս տրուած է, բայց կ'ուզէի
իսկոյն էլ աւելացնել, որ Վ. Դաւթեանի յօդուածը ինձ առիթ է տալիս այլ
«մաքերի փոխանակութեան»: Այլ կերպ ասած՝ ես իմ ընկերոջ հետ ոչ թէ
պիտի վիճեմ, այլ շարունակեմ զարգացնել իր իսկ մտքերը: Ուստի եւ իմ ա-
սելիքը «ոչ» չի լինելու, այլ «այո», բայց...:

«Փամանակակից պեզիան եւ ռեալիզմի նախաիմքերը» ո՛չ միայն լաւ
յօդուած էր, այլեւ շատ ուրախարէր, բայց որում զլաւքի սեփականատէրը
ինքը յօդուածագիրն է, «ուրախարէր»ի սեփականատէրը՝ մենք բոլորս...:

Առաձն ասում է. «Կան բաներ, որ չեն անի» մինչեւ շտափոքս, կան բա-
ներ էլ, որ չեն սովորի՝ մինչեւ շահեո: Ինձ թուում է, թէ տասնամեակներ
շարունակ մեր բանաստեղծութիւնը օրուկուած-ոտնակապուած էր սոյն ա-
ռածի առաջին մասով միայն, անում էին այն, ինչ սովորել էին եւ, ընդհա-
կապելը, բանի տեղ էլ չէին դնում այն բաները, որ «չեն սովորի» մինչեւ շա-
հեո»: Իսկ հիմա, բայց իս, մեր գրականութիւնը տանջուում է յիշեալ առածի
երկու մասերի միջեւ. երիտասարդներից շատերն անում են բաներ, որ չեն
սովորել (չա՛տ ափսոս), իսկ աւագներից ոմանք ջանում են անել նորանոր
բաներ, որպէսզի սովորեն (փա՛ռք Աստուծոյ):

Ահա այս շրջադարձային պահին է, որ «ռեալիզմի նախահիմք»ը կապ-
ւում է ժամանակակից պոեզիային եւ, շտապեմ ասելու, մի քիչ վախ է պատ-
ճառում ինձ:

«Ռեալիզմի նախաիմք»ը նոր խօսք չէ, ոչ էլ պատկանում է մեր մեծ
գիւտարարին՝ Մարտիրոս Սարեանին: Բայց քանի որ Վ. Դաւթեանը յիշուել է
Մ. Սարեանի ասոյթին, ապա ես էլ սկսեմ նոյն ասոյթից՝ որա մէջ շեշտելով

երկու բան. նախ՝ շնորհակցանք, որ Մ. Սարգսնը «ոնայիզմի» նախադիմք» անելով պաշտպանում է իր մեծ արուեստը քննարկում այն լուսանկարչական-նկարազրահան, անհոգի բայց մարմնեղ, անթեւ բայց ամբաթիկունք ունայիզմի, որ կերբ այլևքի տեղ է ծախում եւ չէրը շաքարի, ինչ է թէ կերն ու չէրն էլ ... սպիտակ են:

Ուրեմն, Մ. Սարգսնը «նայիզմի» է ունել, որպէսզի գիտի՝ «նայիզմի» դէմ՝ այն հաստատրեստ-հատահողոյս մոյթերի, որոնք վաղուց արդէն իրենց վրայ չունեն նոյնիսկ ծածկ ու տանիք, որոնք իրենք էլ են վաղուց խարխուլում, բայց յամառարար պահանջում են... դժբէ՛թ:

Եւ ապա (իրեն ապացոյց եւ միաժամանակ շարունակութիւն այս մտքի)՝ ի միտ առնենք, որ Սարգսնն իր գործն այլ կերպ չի բնորոշում, քան «ամէն տեսակ աւելորդութիւններից ազատելը»:

Ուրեմն «ոնայիզմի նայիզմի» Սարգսնին հետաքրքրել են ոչ թէ ինքնին, այլ լոկ այնքանով...

Միտքս պարզարանելու համար թող տուէք (Սելինջերի ձրի օգնութեամբ) պատմել մի... առասպել՝ Նին շինական փիլիսոփայական այն ուսմունքից, որ ծաղկել է մեր թուրքականից 5-6 դար առաջ եւ կոչւում է դառնականութիւն:

Ինչու՞մ է չի լինում մի իշխան, անունը Մու՝ Ձինի տիրակալը: Սրան ծառայում է մի Պօ Լոփ՝ ձիեր ճանաչող մէկը: «Տալիքդ լցուել է, — ասում է մէկ օր իշխանը, — ընտանիքիցդ որեւէ մէկը կարող է ծառայել ինձ՝ Բա փառալէն ինձ համար ձիեր ընտրելով»: «Լաւ միմ կարելի է ճանաչել տեսիլից եւ շարժմանից, — պատասխանում է Պօ Լոփ, — բայց անմահ ճշտագն այն է, որ ռոմերը գետնին չի դիպնում ու հետք չի թողնում, որ խորհրդաւոր է, անըմբռնելի — անբռնելի, եւ անշոշափելի, ինչպէս անաւտուայ մուծը: Իմ որդիների շնորհիւ չի հասնում բարձրագոյն աստիճանի. նրանք կարող են ջնկել լաւ միմ՝ մայրելով նրան, բայց նրանք չեն կարող ճանաչել անմահ ճշտագնը: Սակայն ես ունեմ մի բայելկամ, անուրջ Ձու Գան-Կաս, որ ցախ ու կանաչեղէն է ծախում: Ձիերի գործում նրա խելին ինձանից պակաս չի կտրում: Նրան կանչիր մօտդ»:

Իշխանն այդպէս էլ անում է: Երևում է: Երևում է նա Գու-Կասին ուղարկում է մի ճարելու: Երեք ամիս անց նա վերադառնում է ու գեկուցում, որ ձին դուր է: «Ինչ ի՞նչ տեսակ մի է», — հարցնում է իշխանը: «Այնպէս զամբիկ է», — լինում է պատասխանը: Բայց երբ մարդ են ուղարկում միտ ետեւից, պարզւում է, որ դա ազնաւի պէս սեւ հովատակ է եւ ոչ թէ աշխատ զամբիկ:

Դժգոհ իշխանն իր մօտ է կանչում Պօ Լոփն: «Բո բարեկամը, որին ես յանձնարարեցի մի ճարել, իրեն խաշտառակեց: Նա միտ որսն ու էգն էլ չի բռնում: Եւ միտից նա ի՞նչ է հասկանում, եթէ նրանց մայրիսի գոյնն էլ չի գտնաւում»:

Պօ Լոփ խորին թեթեւութեամբ շունչ է քաշում: «Մի՞թէ նա իսկապէս հասել է այդ աստիճանին, — բացառականում է նա: — Այդ դէպքում նա արժի աւելին, քան ինձ նման տասը հազարը միասին: Ես չեմ համարձակուի համեմատուել նրա հետ, որովհետեւ կառն ներքափանցում է ռզու կառուցութեմի մէջ: Վերահասու լինելով էութեանը՝ նա մտաւան է անում անէական գծերը. տեսնելով ներքին արժանիքները՝ նա կորցնում է արտաքին տպաւորութիւնները: Նա տեսնում է այն, ինչ հարկաւոր է իրեն եւ չի նկատում անհարկա-

ւորը: Նա մայում է այն կողմ, ուր պետք է մայել, եւ ամտեռում է այն, ինչ չարծի տեսնել:

Ու երբ բերում են ձին՝ պարզում է, որ նա խնայելու էլ անձան է... Դառնական աչք տեսնելու-տեսնելու կարող էր դառնալ լուսադոյն մասին-Ֆեռտն (ու մեկնարանութիւնը) ամբողջ նոր ու նորագոյն արուեստի եւ նրա օգնութեամբ, կարծում եմ, աւելի քան պարզ է հիմա, թէ ի՞նչ տակ է ամբի տեսնել անտակ անկողնութիւններից ազատուել: Այդ նշանակում է՝ կարճ ու կոպիտ ասած՝ նկարել ձի ըստ էութեան եւ ոչ թէ ձիու տես կամ աշխատ, էջ կամ որձ լինելը: Այդ նշանակում է ձգտել ըմբռնելու եւ բռնելու ձիու ոգին եւ ոչ թէ բաշը կամ պոչը:

Ահա թէ ի՞նչ նկատի ունեն նոր ու նորագոյն արուեստագէտները, երբ վկայակոչում են «Եւրոպայի մայիսի մայիս» եւ նախնական տեսլիկ ընդհանրապէս:

Բայց շփոթանալ մի պարագայ, որ պարագայ չի բնաւ, այլ վճռական էլակէտ: Նախնական տեսլիկները (լինեն դրանք հին եղիպտացիք, ասորաբարելոնացիք թէ հայ մանրանկարիչներ) անում էին այն, ինչ կարող էին: Մինչդեռ նորերն ու նորագոյնները անում են այն, ինչ ուզում են: Տարբերութիւնը ոչ միայն վճռական է, այլեւ հսկայական: Եւ Վ. Դաւթեանի յօդուածում ձեռնարկով մայիսի մայիսի վկայակոչումը ինձ վախ է ներշնչում հենց այն պատճառով: Մեր երիտասարդական դրականութիւնն (ու նկարչութիւնը) արդէն տուել ու տալիս է իմ վախն արգարացնող փառստի: Յոգնած երէկուայ յանդաւոր ու չափաւոր կողմնակալութիւնից, քանի որ փրկուելու չափաւորութիւնից, պահպանելու բառերի վաճառականութիւնից, սրանք յաճախ գրում են մի այնպիսի լեզուով, ասես հարկադրաբար հարկ ու տուրք են տալիս՝ իրենց մտքին արտայայտելով մի կերպ, զոռով, կարծես թէ օտար մի լեզուով: Նրանք ճշգրտում են եղիպտացիք, մոտանալով, որ եղիպտացիք, կրկնում եմ, այդպէս էին նկարում, որովհետեւ ասելի լաւ չէին կարող, մինչդեռ ժամանակակից բանաստեղծը երէկուայ նման չի գրում (օրինակի համար՝ չի յանգաւորում) ոչ թէ այն պատճառով, որ յանգաւորել չգիտի (նա պիտի իմանայ շատ աւելի, քան իր նախորդներից ոեւէ մէկը), այլ ա՛յն պատճառով միայն, որ չունի այդ յանգաւորման կարիճը (եթէ, ի հարկէ, չունի):

Ուստի եւ անյանդ, ազատ ոտանաւորով, անչափ-անկշռոյթ դրելը արդի բանաստեղծութեան արտաքին յայտանիշներն են եւ ոչ թէ ներքին յատկանիշները: Սեւը աշխտից, կըր որձից չգանազանողը դեռեւս Զու-Ֆան-Կասո չէ, այլ պարզապէս մի կրակոյր-անճարակ: Զու-Ֆան-Կասոյի ժառանգ կարող է կոչուել լոկ նա՛, ով կորցնում է արտաքին տպաւորութիւնները ոչ թէ հեմց Եմպէս, այլ ճիշդ ինչ արժանիքներ տեսնելու՝ պատճառաբանութեամբ, ով, այլ կերպ ասած, լուսնում է այն, ինչ հարկաւոր է իրեն եւ չի ճկատում անհարկաւոր: Մայում է այն կողմ, ուր պետք է մայել, եւ ամտեռում է այն, ինչ չարծի տեսնել: Ով՝ կարճ ասած՝ «մերթափանցում է զգու կառուցուածքի մէջ»:

Ուրեմն, արդիական բանաստեղծ լինելը հաւասարազօր է ոչ թէ հաւաւորութեան, այլ ներքնատեսութեան:

Այժմ այդ արդիական բանաստեղծութեան մասին՝ ըստ էութեան:

Դարեր շարունակ բանաստեղծութիւնը կապել են սրտին, համեմատել երգի հետ ու երգ էլ կոչել: Եւ ճիշդ են արել: Բայց սրտից ու գլխից բացի մենք ունենք եւս մի բան, որ ժամադրաւորն է այդ երկուսի եւ կոչում է հոգի կամ ոգի: Արդի բանաստեղծութիւնը ընդհանուր ուրուագծումով (եւ

ճշմարիտ բանաստեղծութիւնն առհասարակ եւ միշտ՝ վեր է սիրտ կոչումովից եւ անլիմ է երգ կոչումովից։ Սիրտ ունենալը քիչ է, սիրելի՛ բարեկամներս, հարկաւոր է նաեւ հոգի՝ ունենալ։ Եւ ասածս արտաոք նորութիւն մի համարէք։ Այս «նորութիւնը շատ լաւ հասկացել էին սակաւին եին հնդիկներն ու քրիստոնեաները՝ մարդկային անմահութիւնը հեղիւսելով ոչ թէ սրտի տեղափոխութեան, այլ հոգու ալակերպութեան վրայ։ Մենք (բազմադարեան մարդկութիւնը) լի եւ առատ ենք սրտառուչ խօսքերով, ուրեմն եւ՝ մի քիչ էլ կուշտ ենք։ Այժմ արդէն մենք առաւել կարիք ունենք հոգեւոր ամօժութի, ոգեղիմացած ասքի։ Վերջիւեցնեմ, որ աշխարհիս մեծագոյն գրողներից մէկի (Լ․ Տոլստոյի) դործը աշխարհիս մեծագոյն քննադատներից մէկը (Ն․ Ձերենիւսկին) բնորոշել է ոչ այլ կերպ, քան «հոգու դիալեկտիկա»։ Մենք հիմա կարիք ունենք այդ հոգու դիալեկտիկայիմ աւելի, քան սրտալի գեղմանը, որը (այդ սրտալի գեղմամբ) հիմքն է նախնական արուեստի, բայց ոչ երբեք զարգացած արուեստի։ Դրանով (սրտալի գեղմամբ) բանաստեղծութիւնը ոչ թէ վերջանում է, այլ սկսում միայն, ինչպէս որ երաժշտական ոտնոցադրութեան մէջ էլ երգը երկուշարթիւն է միայն եւ ոչ թէ Շտարթը։

Այս պատճառով էլ արդի բանաստեղծութեան հիմնական տիպարը, երաժշտական տերմինով ասած, եւ համարում եմ ոչ թէ երգային մտածողութիւնը, այլ համառոտագոյնը (սիմֆոնիզմ)։ Ոչ թէ մեծապայծառութիւնը, այլ բազմապայծառութիւնը։ Եւ սիմֆոնիզմ ու բազմապայծառութիւն ասելիս եռլեմ ենթադրում անպատճառ սիմֆոնիա (պոեմ) կամ երգչախումբ (դրամատիկական պոեմ)։ Սիմֆոնիզմ եւ բազմապայծառութիւն՝ նոյնիսկ 10–15 տողանոց բանաստեղծութեան մէջ։ Ոչ թէ մի երգ, որի եղանակը վերջանում է աստղին իսկ տնով (հետադայ տների խօսքերն են փոխում, իսկ եղանակն ու կրկներգը մնում են նոյնը), այլ մի երգ, որի իւրաքանչիւր յաջորդ տունը նախորդ տան եղանակը փոփոխակում ու զարգացնում է բոլորովին այլ ձեւերով։ Իսկ սիմֆոնիկ — զարգացած երաժշտութիւնը, ոչ թէ բացառում, այլ ենթադրում է նաեւ այն, ինչ կոչում է դիսոնանս, որ բանաստեղծութեան տիտղոսաւոր եւ անտիտղոս գնահատողները յաճախ կոչում են «կոպիտ տեղեր» կամ «արձակալութիւն»։ Եկէք երաժիշաներին շփոթեցնենք մեզ վրայ․ դիսոնանսը երաժշտութեան ու երաժշտի թուլութիւնը չէ կամ անգործութիւնը, այլ ուժն է եւ կարողութիւնը։ Փայտի յատկանիշներով չի կարելի դատել պլաստմասայի մասին, թէ եւ երկուսն էլ կարող են ծառայել իբրեւ շինանիւթ։ Ու երգային մտածողութեան չափանիշը չի կարելի էտալմն զարմնեչ սիմֆոնիկ մտածողութեան համար։

— Իսկ ինչո՞ւ եւ անպատճառ սիմֆոնիկ, — կարող են հարցնել իրաւամբ։

Պատասխանի համար պէտք է դիմել ոչ թէ ինձ, այլ դարին, աւելի հիշե՛լ՝ դարի ժամանակակից պատգամախօսին, որ կոչւում է Էվանթային անսութիւն, յարաքերականութեան տեսութիւն, ատոմային էներգիա, երթիկ կամ արքանակ, ինչպէս կ'ուզէք։

Եւ անհամեստութիւն կը համարուի, եթէ ասեմ, որ այսօրուայ մարդը առաւել բարդ կառուցուածք ունի, քան Դանեմարքայի արքայազնը։ Այդ զէպքում արտայայտուեմ աւելի համեստ․ մի՞թէ մենք աւելի բարդ չենք, քան նոյն այդ արքայազնի զրուցակիցները՝ զերեզմանափորը կամ խեղկատակը։ Դոնէ պիտի ամաչել այդ զերեզմանափորից ու խեղկատակից եւ 20րդ դարի բանաստեղծութիւնը չըմբռնել իբրեւ խաղիկ — ջան-գիւլումների բազմաշար-կութիւն։ Խորալներ են զօղանքում մեր հոգում, իսկ մեզ ուզում են հանգիջ

պատճառով նախարարության նույնպիսի մարտի է մեղ տալու
 ցում, իսկ մեղ խորհուրդ են առնել զնալ պարային հրապարակ. սիմֆոնիա-
 ների են ծարարի մեր ակադեմիկոս, իսկ մեր նոյն այդ ակադեմիկոս քաջում են
 չենց ա լը պատճառով են ակադեմիկոս քաջելով ստիպում լսել հովուական
 ա լը շուրի, որ լնդամենը երկու ծակ ունի՝ մէկը անունը «Բոյզ», միւսի մա-
 կանունը՝ «Սիրտ»:

Վաղուց է եկել ժամանակը մտածող-մտաւորական — իմացականու-
 րէամբ լիզուց հերոսի՝ լինի զա քնարական հերոս թէ հերոս վէպ ու վիպա-
 կի: Ու եթէ այսօրէն դատենք՝ արժի արդեօք այնքան շատ խօսել ժողովրդ-
 դական բանասիրութիւնից օգտուելու, զա մշակելու-վերամշակելու անհրա-
 ժեշտութեան մասին: Բանասիրութիւնն ունի իր անկրկնելի հմայքն ու հա-
 րթաութիւնը: Եւ ամէն ազգի զրոյ էլ, ծնունդով եւ մինչեւ մեռելու, օգտու-
 է զբանից, ինչպէս օգից: Բայց չմոռանա՞ք նաեւ, որ բանասիրութիւնն
 աւելաւ չի զարգանում, որովհետեւ չի կարողանում (անեկդոտները չհա-
 ւած): Ու եթէ դեռ զարգացող բանասիրութիւն կայ՝ այլ էլ միայն յետա-
 մնաց ազգերի մէջ:

Արդ՝ յարաբերականութեան տեսութեան ազը ծածած, Բվանքային
 տեսութիւնը համառոտ, կիքերնետիկայով կակորդը ողորդած բնութեցողիւ եւ
 բնութեցողիւ ինչպէ՞ս պիտի հողեպէս դոհացնեն քո փոխորային մտածելա-
 կերպով: Գրականութիւնը երկի ու պարի ազգային տեսումով չէ, ոչ էլ հա-
 մերդային գահիւններում օր ու գիշեր ելութ են ունենում նմանատիպ տեսում-
 պըլները միայն...

Ուստի եւ արդի բանաստեղծութիւնը չի կարող լինել հեփիաքամաղա-
 կած, որ նոյնն է, թէ պատմագրական-նկարագրական: Նա պիտի լինի քնա-
 դրական-յուշարարական: Նրա առաւել դիպուկ բնորոշումը, ըստ իս, ճիշդ
 ու ճիշդ համարկում է այն բնութագրին, որ ունի դառնական առակի ան-
 փառն ճոյզը. «Ըստ հոմերոսի գետնին չի դիպցում»։ Այլ կերպ ասած՝ նա
 ալիւս չի կարող լինել դեմոկրատիա — դեմոկրատիա: Նա պիտի զետեղուր գետ-
 նին շրջապատի բարձրանալով կամ խորանալով՝ սաղարթի պէս կամ արձա-
 տի, օդանաւի նման կամ երկրաբանական հորատիչի: Այլեւ տարածուկներ չէ
 նրա մեծութեան յատկանշը, այլ միտածքը կամ սլացքը: Այլեւս պէտք է
 լինել ոչ թէ երկրաչափ կամ աշխարհագրաւ, այլ երկրաբան կամ օդաչու:
 Ոչ թէ փոռել-յնանալ, այլ մտնել տուրքին՝ չրի պէս կամ գաղի նման: Հե-
 տադոսել մութը՝ լինի դա մթնոլորտ կամ բնակիչ, — միեւնոյնն է: Այլ կերպ
 (եւ մասամբ կրկնելով) ասած՝ պէ՛տք է մտնել ոգու ոլորտները, չահագործել
 հոգու հարստութիւնը:

Ինձ կարող են լմբերանել թէկուզ եւ աստուածաշնչեան ծանօթ խոս-
 քով. «Երանի՜ հոգով աղքատներին»։ Հազար երանի, — կ'աւելացնենք ես:
 Հազար երանի, որովհետեւ նրանք երջանիկներն են երջանիկներից. նրանց
 չեն կրծոտում կասկածի արիւնախում առնէտները, նրանց անծանօթ պիտի
 մնայ յիսերիմ անքնութիւնը, ու նրանց մասին կը գրեն նոյնիսկ լրագրերը՝
 իբրեւ... երկարակեցանքի: Բայց, օգտուելով նոյն Աստուածաշնչից, պիտի
 յիշենք, որ Երեմիա մտապարէն ո'չ միայն ի'ր, այլեւ աշխարհիս ամէն մի
 արուեստագէտի բերանով է մրմնջեցել. «Եւ այն մարդն եմ, որ տեսայ տա-
 րապալներ»...

Ով ելումուտ շունի ոգու ոլորտներում, ով չի հաղորդակցուած հոգեկան
 ներամտաւային լարիւրիներին, նա, իմ բարի խորհրդով, ի զուր է հրա-
 ժարուած յանգից ու վանկից, ի զուր է դիմում սպիտակ ու սգաւառ ոտանաւա-

բին, — դրանից նա պիտի վնասուի միայն, աւելին՝ ունեցածն էլ կորցնի։ Իսկ ով յանդգնել ու հճուել է այդ անել՝ թող բարի լինի անուանակոչելու մեր հոգեկան խլրտումները, որ եւ ջանում է անել արդի համաշխարհային պոեզիան։

Ի դէպ՝ այդ համաշխարհային մասին։

Եթէ վերանանք մեր ազգային այն արատից, ինչը կոչւում է «նոստալոգիան», շնք կարող չառել, որ աշխարհի ժողովուրդների շարքում եթէ մենք առաջիններից չենք, ապա, առաւել եւս, վերջիններից էլ չենք։ Երբ կար Նիկուէ ու Տիգրան, մենք ունէինք մեր Արմաւիրն ու Գառնին։ Քրիստոնէութիւնը տարածուեց Հոռոմում, բայց Տրդատը որոշ չափով կանխեց Հոռոմին։ Աշխարհում կար ընդամէնը մի քանի աշուրներ, երբ շուշաղու Մաշտոցը։ «Վերածնունդ» քաղաքը դարեւ յետոյ պիտի ստեղծուէր, իսկ Նարեկացին գրեց իր ծաղերն ու Մատենան։ Գուտեմբերգը գեռ նոր էր գործի դրել իր տպագրական մեքենան, երբ մենք տպեցինք մեր «Պարզատուժար»ը։ Համայնապարտութիւնն էլ ստեղծեցին գերմանացիք, բայց համայնապարտական առաջին երկրի հանրակառքին լծուեցինք նաեւ մենք՝ գերմանացիներից առաջ...

Այո՛, շուշաղուր մեր ազգային դիմանկարի կարեւոր գծերից մէկն է, մեր նկարագրի բարեխառնութիւնը, մեր հոգեյատակը։ «Ձուշաղնա՛լ, ետ չմընա՛լ», — ա՛յս պիտի լինի ամէն մի հայի նշանաբանը՝ ինչ դործի տէր էլ որ լինի։ Ով-ով, բայց մենք իրաւունք չունենք չփոթել մակերես եւ մտկարդակ բառերը։ Մենք պիտի շփոթենք մակերեսի վրայ (չենք էլ կարողանում), բայց մենք պարտաւոր ենք միշտ էլ լինել մակարդակի վրայ՝ համաշխարհայինը։ Ես էլ գիտեմ, որ կամենայն եւ կարենալու նոյնական չեն։ Բայց որեւէ բան կարենալու համար նախ եւ առաջ կամենալ է պէտք, անհրաժեշտութեան գիտակցութիւն, հրամայականի կարիք։ Իսկ ով ունի անհրաժեշտութեան այդ գիտակցութիւնը, ցանկանայ էլ, չի կարողանայ իր ականջները արամազերի չնշտ առնուած — դժուար ծախուող բանասարկութիւններին, անդիտութիւնից ծնուած, տպիւտութեամբ սնուող ասկանքներին, որովհետեւ այդ ականջների պաշտօնն այլ է։ Դարի ժխտը մաղկում է ջնկելով դարի նուազները։ Եւ ով զգում է այդ հրամայականի կարիքը, նա պիտի համոզուած լինի, որ Մաշտոցին էլ երեւի «տառազող» են համարել, ինչպէս որ երէկ-անցեալ օր Տէրեանն էլ ո՛չ միայն «բնագործնակող» էր, այլ նաեւ մինչեւ իսկ «հա՛յ չէր»։

Չպիտի զարմանալ, ոչ էլ զայրանալ՝ յիշելով օր այսպէս դատողներն էլ իրենց տոհմն ու զարմն ունեն։ Մաշտոցի ժամանակ նրանք կոչւում էին Ձուառական, Տէրեանի ժամանակ՝ Թշուառական։ Այս մեծատառուածներին, պէտք է հանդիստ թողնել։ Բայց պէտք է, միաժամանակ, ո՛չ միայն անհանգրատացնել, այլեւ օր ու գիշեր մարտնչել փոքրատառ-հաւաքականի՝ Թշուառութեան դէմ, ի սէր եւ յանուն հարստութեան, ո՛րն հարստութեան, որ բուրս գիտենք — սկսում է փոքրում, — շոռառանք — չափում է մեծում։ Ուստի, շոռառանք նաեւ, որ զմենք մեր իւզով տապկուենքը եթէ փխրափայտութիւն է, ապա փխրափայտութիւնն է Թշուառութեան...

Գրականութիւնը, ինչ ստել կ'ուզի, սպորտ չէ։ Բայց սպորտային որոշ որէնքներ գործում են նաեւ գրականութեան մէջ։ Կան սպորտի ազգային մեքենա, բայց շատ աւելի պակաս, քան միջազգային մեքենա։ Իսկ ունկորդների հաշուեկշիռը ամբողջապէս միջազգային է։ Ով կամենում է կեանքը նուիրել սպորտին՝ պիտի նկատի առնի ա՛յդ հաշուեկշիռը, այն պահանջներն ու նիւշերը, որ ընդհանուր է աշխարհի համար։

Մի՞թէ գրականութիւնը սպորտի շափ էլ չկայ եւ գրողն էլ՝ «ֆիզկուլ-տուրնիկ»ի:

Գրականութիւնը (Թող վերջիւցնի մեծն Տոլստոյը) զլուրջ գիտակցու-թիւնն է լուրջ ժողովրդի, ուստի եւ խաղալ գրականութեան հետ նշանակում է խաղալ ժողովրդի ո՛չ միայն ներկայի, այլեւ ապագայի հետ, է՛լ առաւել մի այնպիսի ժողովրդի, որպիսին է մերը, որի համար գրականութիւնը շատ յաճախ փոխարինել է պետութեան ու ազգային կեանքի վարչութեանը:

Յիշո՛ւմ էք Ձեւերեան կատուին՝ տնկիական սքանչելի հեքիաթի «հե-րոսին», որի ժպիտը մնում էր նոյնիսկ այն ժամանակ, երբ ինքը չգտած էր: Ձեւերեան կատուն սովորական կատու չէ, այլ խորհրդանշելը անուղղելի (ու-րեմն եւ վտանգաւոր) լաւատեսութեան: Ուստի Ձեւերեան կատու լինելը եւ միաժամանակ իրեն արուեստագէտ համարելը անյարիր բաներ են...

Լու է ասել էքզիսիէրին. «Այլիւ, չի նշանակում միմիանց մայիլ» եւ, կ'աւելացնէի ես, հիանալ միմեանցով: Բայց սքանչելի է շարունակութիւնը. «Իրեւ նշանակում է «մայիլ միմեանց մազուքեամբ»: Ուրեմն եւ եկէք քիչ նայենք իրար (ասել է թէ՛ քիչ հիանանք միմիանցով) եւ ջանանք նայել միեւ-նոյն ուղղութեամբ, նո՛յն ուղղութեամբ, որով ընթանում է համաշխարհային արուեստը:

Իսկ ով մայում է այդ ուղղութեամբ, բնականաբար, չի կարող չտեսնել շատ ու շատ բան այն ամէնից, ինչ տեսնում են մայն ուղղութեամբ մայնով միւսները... Նա չի կարող չտեսնել, օրինակ, որ այլեւս չի կարելի ստեղծել, այսպէս ասած, քոմքատմային գրականութիւն, ոտներդ կախես թոնրը, քուրուս վրայ էլ դնես գիրքը՝ մազա-շարագ-աղանգների նման ու... կարգաւ ուտելու պէս:

Ճիշդ է, որ այլեւս չկան թոնրատունն ու քուրսին, առաւել ճիշդ է, որ ամէն բովէ կարող է մեր բերնից հնչել թէ գրականութիւնը պարզապէս վախճի խաղալի՛ք չէ, բայց այնուամենայնիւ, հենց այդ թոնրատնային գրականու-թիւնն է դուր գալիս ո՛չ միայն մեր ընթերցողներից, այլեւ, գծրախաւարար, գրողներից ու քննադատներից շատերին:

Պէտք էլ չէ մեղադրել. այդպիսիք մեղաւոր չեն, մե՛ղք են: Որովհետեւ կենդանի գրականութեան ընթացքին համընթաց լինելը, այսօրուայ մէջ վաղը տեսնելու կարողութիւնը նոյնպէս տաղանդ է, որ շնորհւում է քչերին:

Պէտք չէ մեղադրել, բայց անհրաժեշտ է կրկնելով երրորդել, որ դա ամէնից աւելի բխում է սովորոյթի ուժից: Ձէ՛ որ մենք յաճախ ենք ասում «Տէ՛ր Աստուած»՝ առանց հաւատալու Աստծուն: Դրանից շահում է մեր լե-զուն, բայց սահմանափակում է մեր հոգին, որովհետեւ հենց այդ անասու-ած «Տէր Աստուած»ն է, որ կոչւում է սովորոյթի ուժ կամ իմերցիայի օ-բլեմ: Եւ ճշմարիտ արուեստագէտը նա է, նախ, որ իր առաջնահերթ գործն է համարում ազատուել սովորոյթի այդ ուժից, իմերցիայի այդ օբլեմից, ա-նաստուածի այդ «Տէ՛ր Աստուած»ից, ինչը մեր հոգեւոր ու մտաւոր աշխար-հի ամենազափան բունակալն է, այնպիսի՛ մի բունակալ, որի համեմատու-թեամբ ամենը գաւ է թւում վարութանի առած յանգ-բունակալը:

Այդ բունակալութեան արտայայտութիւններից մէկն էլ այն բանաձե-ւումն է, թէ բանաստեղծութիւնը «գեղեցիկ սուտ է»: Սո՛ւտ է այս «գեղեցիկ սուտը»: Եւ այս սուտ բանաձեւումն էլ խեղդում է բանաստեղծութիւնը՝ նրա սունական պարանոցը, նրա ձեռքն ու ոտքը կապոտելով այնպէս, ինչպէս լի-լիպուտները Գուլիվերին: Եւ կապոտում է ոչ այլ ինչով, քան «գեղեցիկ» բառերի յուլունջաւարով, «բանաստեղծակա՞ն» խօսքերի նարոտով, — մի

բառապաշարով, որ ողորմած հոգի Շչեդրինը բնորոշել է այսպէս, ինչը հա-
յերէն մեծ դժուարութեամբ, երեւի, պիտի թարգմանել — շիլա — շփաթա —
տմաշկոտա — դատարկ — մատակայիմ: Եւ գրեւոր ու գրեւոր են ոտանաւորներ
այնպիսի՝ լպտտուած խօսքերով, որոնք տակմաշ կրկնակօշիկի պէս շարունակ
սայթաքում ու դետնովն են տալիս իրենց, իրենց բանիմաց ընթերցողին ու
սրա համբերութիւնը:

Այսօրինակ «պոեզիան» իսկապէս որ սուտ է, բայց ոչ թէ գեղեցիկ
սուտ, այլ այլանշան սուտ: Մինչդեռ իսկական բանաստեղծութիւն պիտի
զատնայ միայն ճիշդն ու ճշմարիտը, ասողին ու արդարը: Ուստի եւ պիտի
յիշել՝ գեղեցիկը միշտ չէ, որ ասողը է, իսկ ասողը միշտ գեղեցիկ է:

Ուստի եւ պիտի յիշել...

Թոյլ տուէ՛ք յիշել մէկ ուրիշ առասպել-տառակ էլ՝ այս անգամ արաբա-
կան հին գրականութիւնից:

Մէկ անգամ ճամբայ են դնում Արդարութիւնն ու Անարդարութիւնը եւ,
ինչպէս պէտք էր սպասել, նրանց մէջ կոխ է ծագում: Անարդարութիւնն
սպանում է Արդարութեանը եւ որպէսզի յանցագործութեան հետքերը ծած-
կի՝ ողջակիցում է նրա գին: Արդարութեան բարեկամները, երկար որոնում-
ներէից յետոյ, գտնում են նրա աճիւնը եւ այդ մի քուռ մոխրից սարքում են
թանա՛ք: Այն օրից ի վեր, — եղբայանդում է արաբ մեծ իմաստասէրը, —
Արդարութիւնը մեռած է աշխարհում, նա ապրում է միայն գրքերի մէջ...

Առաժժ երկրագունեքը դժուար թէ գոռայ. ՎՄՂ, նա ապրում է աշ-
խարհում: Ուրեմն եւ գիրք գրողներն էլ չպիտի մոռանան, որ Արդարութեան
մոխրէ թանաքով չակերտաւոր թէ անշակերտ, մակդիրաւոր թէ անմակդիր
սուտ դրելը առնուազն անբարոյականութիւն է...

Գեղեցիկի սուտ տեսութիւնից բխում է մէկ ուրիշ յարգահե-
զուկ շարիք էլ՝ այսպէս կոչուած «պարզութիւնը»:

Ձեզեզ-ձգձգելով մենք «պարզ» հոմանիշ դարձրինք «հասարակ»ին,
ինչպէս որ, շա՛տ ասես, «հանրութեան» տեղն էլ զբանցուեց «հասարակու-
թիւնը»: Բայց պարզը հասարակ չէ: Պարզ նշանակում է մաքուր (յիշան՝ պար-
զաջրելը, պարզերեսը, պարզկան՝ իրենց ողջ շքամբով): Իսկ «մաքուր»ն ու
«խորը», «յատակ»ն ու «խորունկ»ը ոչ թէ ազգակից են, այլ մերձաւոր արիւ-
նակից:

Փրողի դերադոյն նպատակն է լինել պարզ, բայց ոչ հասարակ: Ու հան-
րութեանն էլ պարզութիւն է պէտք եւ ոչ թէ հասարակութիւն, մաքրութիւն
եւ ոչ թէ ծանծաղութիւն:

Ուստի եւ գրողը կարող է ունենալ քաղաւմ աստիճան քառեր, բայց ամէ-
նից առաջ ու յետոյ պիտի ունենայ մէկ ամբողջունելի քառ, որ է հասարակը:

Այս մասին որքան շեշտուած, նոյնքան ընդգծուած եմ խօսում ե՛ւս այն
պատճառով, որ «ոնախիւմի մախախիւմներ» ինձ ներշնչած վախի շորս դա-
մերից մէկն էլ հենց այստեղ է: Ես վախեցում եմ, որ մեր երիտասարդու-
թիւնը «մախախիւմներ» կոչը յանկարծ հասկանայ իբր յոնձնարարութիւն
միամտութեան, պարզունակութեան, ֆոլկլորային մտածողութեան, եւ այն
ամենայն շարեաց, ինչից մենք տակաւին չենք աղատուել: Ուստի եւ պիտի
շարունակեմ փարաակել սեփական վախս՝ երիտասարդներին ասելով.

— Հրթուային դարում կարելի է լինել ամէն ինչ, բացի մոմէ թելերով
իկարից.

— Պէտք չէ, ի սէ՛ր Աստուծոյ, աստմայի էներգիայի դարում կրակ ստա-
նալ շփումով.

— Ով կարծում է, թէ անյանդ բանաստեղծութիւն գրել տուաւն զժուար չէ, քան յանդաւորը, նա տակաւին չի գրել ոչ մի՛ բանաստեղծութիւն։

— Ո՛չ միայն անյանդ, այլեւ առանց լսփի գրելու համար տաղանդ ուսնեան չէ քիչ է։ Կէտք է ունենալ եզո՞ր տաղանդ։

— Իսկ եթէ կարծում էք, թէ ունէք (այդ եզո՞ր տաղանդը), ապա մի՛ կարծէք, թէ հասկացող—հմուտ ընթերցողն աւելի դիւրահաւատ է, քան Թոմ—մաս առաքեալը, որ ՎՏէր իմ եւ Աստուած իմ շատաց, մինչեւ որ սեփական մասներով չշօշափեց խաչեալի խոցեալ կողմը։

Ուրեմն՝ հաւատացնելը չէ մեր պարծը, այլ համոզելը։

Եւ քանի որ «Ճախահիմէ»՝ Պրովանսի տրուբադուրներին։

Սրանք տակաւին 13—14րդ դարերում, լինելով ուելի թափառական երգիչ—գուսաններ, քան նստակեաց—մանապիտացած բանաստեղծներ, իրենց արուեստին տուել են մի բնորոշում, որ բանաստեղծութեան բնորոշումների մէջ ճշգրիտ մէկն է, ըստ իս, եթէ ոչ ճշտագոյնը։ Զուարթ գիտութիւն, — այսպէս էին նրանք կոչում բանաստեղծութիւնը։ Խնդրում եմ ուշ դարձնէք, ո՛չ թէ չոր ու ցամաք գիտութիւն, այլ զուարթ գիտութիւն, եւ ո՛չ թէ դուարթ ոչ միքանութիւն (ներեցէք այս նորարարութեան համար) այլ զուարթ գիտութիւն։ Մտովին յիշեցէք աշխարհիս բոլոր մեծ բանաստեղծներին (առտուածաշնչեան Սողոմոնից մինչեւ Բայրոն, Քայսարից մինչեւ Գէօթէ, Նարեկացուց մինչեւ Ռիտմեն, Արուսեակ Ալ Մահարուց մինչեւ Մայս—կովօլի), եւ չէք կարող չընդունել, որ տրուբադուրների կոչման արժանատեւում են «ընտրեալ» միայն, ոչ թէ «կոչեցեալ»։ Բանաստեղծութիւնը այսպիսի կամ զգացմունքի չըմանակում սեղծողները, այդ այսպիսի քանակատեւութիւնից եւ զգացմունքը իմացականութիւնից անջատողները կը դնեն իրենց միմեկի ծիծաղելիութիւնը, եթէ մի պահ մտածեն, որ դա նոյնն է թէ կանացի աշխարհում ընդունում են միայն «աղջիկ»ը, բայց ո՛չ «կին»ը, բայց ո՛չ «մայր»ը։

Արդի բանաստեղծութիւնն, բոտ իս, տուաւն քան զուարթ գիտութիւն է։ Դա է հրամայականը դարի, թելադրանքը ժամանակաշրջանի, պատուէրը 20րդ դարի մարդու։ Պատուէ՛րը։ Եւ պահանջը։ Պարտադրեա՛լ պահանջը։

Մէկ որ ընկել եմ միջնադար, յիշեցնեմ ե՛ւս մի «Ճախահիմէ», թէն զա վերաբերում է ոչ թէ արուեստի, այլ փիլիսոփայութեան պատմութեանը։

Երբ «նոմինալիստ»ների եւ «ռեալիստ»ների սխալաստիկական վէճը երկարաձգուեց այնքան, որ «համը դուրս եկաւ», Թոմա Աբիլինացիներից ու Դոմին Սկոտներից յետոյ եկաւ Նիկողայոս Կուզանցին եւ, զարդացնելով նոմինալիզմը, սկսեց պաշտպանել «գիտական անգիտութեան» տեսութիւնը։ Կարելի է կարծել, թէ անիմատ բառախաղ է դա՝ այդ գիտական անգիտութիւնը։ Բայց դա մի հերոսական քայլ էր մարդկային մտքի պատմութեան մէջ, որովհետեւ չէր նշանակում այլ բան, քան «վի՛րջ սխալաստիկային»։

Այսպիսի մի «անցման հասակ»ի ժամանակաշրջան է ապրում նաեւ արդի բանաստեղծութիւնը (այլուրեք՝ ժողուց, մեղանում՝ նո՛ր — նո՛ր), որ «գիտական անգիտութեան» դէմ կարող է դնել իր «բանաստեղծական անբանաստեղծութիւնը» (եթէ կարելի է այսպէս ասել)։ Եւ դա էլ՝ այս «բանաստեղծական անբանաստեղծութիւն» էլ, ո՛չ անիմատ բառախաղ է, ո՛չ էլ ունի իմաստը «անբանաստեղծական բանաստեղծութեան»։ Դա նոյնպէս այլ բան չի նշանակում, քան «վի՛րջ սխալաստիկային», այն սխալաստիկային,

օրինակի համար, որ սկսել էր բանավիճել (յիշում եմ այդպիսի մի հլուրջ բանավիճակ), թէ կարելի է արդեօք զործածել... իզուկան յանգը:

Որ բանաստեղծութիւնը, մանաւանդ արդի բանաստեղծութիւնը (եւ ընդհանրապէս արուեստը) ոչ այլ ինչ է, քան «գոտարթ գիտութիւն» (Բալ-դակն ասում է «մոֆի անլիցուկ»), կարող է վիճարկուել լսկ աստեղ, ուր ծուարել է սխալաստիկան, ու մէկ էլ աստեղ, որտեղ եղը վերցնում — տակը հորթ են ման դալիւ:

Այս պատճառով էլ արդի բանաստեղծութիւնը ինձ պատկերանում է ոչ թէ հարթութեամբ, այլ փլուածֆնիրով: Եթէ փորձենք նկարել նրա յետագիծը, ապա կը տեսնուի ոչ թէ անընդմէջ գիծ, այլ ընդմիջուած գիծ՝ այն, ինչ որ կոչւում է կէտ գիծ: Արանքներ կան ամէն մի գծիկի եւ կէտի միջեւ. դրանք (այդ ընդմիջում-արանքները) հենց այն աւելորդութիւններն են, որոնց մասին է խօսել Մ. Սարեանը, եւ որոնցից ազատագրուելու պատճառ-բանութեամբ է վկայակոչում «սեպիլիզմի ցախահիմքերը»:

Վերջէնք, թէ ինչպէս է Պօ Լոն զնահատում Ձու ծանր հմտութիւնը. «վերահասու լինելով էութեանը՝ նա մտածում է ամուսնային ամուսնային գծերը... նա չի նկատում անհարկութիւն... եւ անտեսում է այն, ինչ չարժի տեսնել»: Արանք-ընդմիջում են գտնում հենց այդ անէականը, անհարկութիւնը եւ չար-ծիմ, այլ կերպ ասած՝ բոլոր աւելորդ մանրամասները (այն, ինչ կարող է պատմուել). բոլոր ծանօթ տեղերը (այն, ինչ ենթադրուում է). մտքից-միտք, պատկերից պատկեր գցուած կեռերն ու ճարմանդները (երեւակայութիւնը, ինչպէս չորը կամ անծերը կապում է երկինքը երկրին. բոլոր անհարկ կա-մուրջ-կամրջակները (միտքը, ինչպէս ստուերը, թռնում է բոլոր ձորերի ու վիհերի վրայով): Այս պատճառով էլ՝ ոչ թէ համատարած հարթութիւն, այլ հարթութիւն փլուածֆնիրով: Այս պատճառով էլ եւ այն, որ արդի բանաս-տեղծութիւնը յաճախ շատերին թւում է խրթին, ոճանց՝ նոյնիսկ անարա-մարանական:

Իւրաքանչիւր ոք իրաւ է իւրովի: Բայց իւրաքանչիւր ոք էլ եթէ պար-տաւոր չէ, ապա ստիպուած է ենթարկուել միեւնոյն յուսկական օրէնքին. «Հարկ լուծանի գործես»: Ուստի եւ արդի բանաստեղծութիւնը ծնունդ է ոչ թէ ինչ-ինչ մարդկանց քմահաճութիւն, այլ «հարկի»՝ այն անհրաժեշտութեան, որ «լուծում»-քանդում է երկկուայ օրէնքը՝ ձեւակերպելով նոր օրէնքներ: Այդ օրէնքներից մէկը, ըստ իս, կարելի է արտայայտել Կիբերնետիկայի լեզ-ւով. «ժամանակակից բանաստեղծը պէտք է ձգտի «նուազագոյն տեղամասի վրայ ստանալ առանկազոյն ինֆորմացիա»՝ չվախենալով ո՛չ խրթին, ո՛չ ան-տրաքանական, ո՛չ էլ անգամ խելացիոր կոչուելուց: Ձէ՞ որ արդի ֆիզիկայի բարձրագոյն ընթերցողին մէն-մենակ է նստած բանաստեղծի սեղանի մօտ: սոյն տեսութիւնը, քալիսոփի կարողանայ լինել ճշմարտ»...

Ծաւովի սեղանը բացում երկարացնում են լսկ այն ժամանակ, երբ ճա-շողները շատ են: Այսօրուայ հաւաքական ընթերցողը (միշտ նկատի ունեմ քարձրագոյն ընթերցողին) մէն-մենակ է նստած բանաստեղծի սեղանի մօտ: էլ ինչո՞ւ. Ժալուածը բացել:

Երկար-բարակ բացատրութիւններ են տալիս միայն հարցաքննուելիս: Բայց բանաստեղծը յանցազործ չէ, ինչպէս որ ընթերցողն էլ վերաքննիչ չէ, որ բացատրութիւններ եւ մանրամասնութիւններ ոտս ստիպմամբ:

Արդի բանաստեղծութիւնը նման է նաեւ այն ճամբորդին, որ հետը վերցնում է ամենակարեւորը տուեալ ճամբորդութեան համար՝ գտանք թող-նելով այն ամէնը, ինչ կարող է հեշտութեամբ գտնել վաղուսում, ցանկացած

կայանում կամ կայարանում՝ «այն ամենի մէջ ամփոփելով այն պիտելիքներն ու պատկերները, որ դիտի (կամ կարող է իմանալ) ընթերցողը, այն խոհերն ու արարածները, որ կարող է ծախել ամէն ոք (որովհետեւ ինքն էլ ունի առատօրէն)»։ այն քարոզներն ու միտումները, որ ոչ ոք չի առնի չրի գնով անգամ (որովհետեւ կուշտուկուտ է դրանցով)։ եւ, վերջապէս, արտայայտական այն ձեւերն ու եղանակները, որոնց յաճախանքից կուշտուկապատուել է ամէն մի գործունեայ ուղեղ, ամէն մի մտածող աչք, ամէն մի բողոքատող ականջ։

Երկրաշարժները անհամեմատ աւելի են յաճախական, քան Հրաբուխները։ Բանաստեղծութեան զոլարթ գիտութիւնը գիտութիւնն է ոչ թէ երկրաշարժների նկարագրութեան, այլ Հրաբուխների գործունէութեան։ Բանաստեղծութեան զարաւոր զարգացումը եկել-հասել է ահա այս սահմանագծին...

Ամէն մարդ ունի մայրամբ։ Բայց արուեստագէտը նա է, ով ունի նաեւ հայեա՛ցք (այս բառի փիլիսոփայական իմաստով), մի հայեացք, որ պիտի նետուած լինի ո՛չ միայն աշխարհի վրայ, այլեւ իր կերած հացի, որ-քան մարդկութեան ճակատագրի տառերի վրայ, նոյնքան էլ փողոցային ցուցանակների։ Իսկ ով ունի այդ հայեացքը, արդէն փնտրում է ոչ թէ կեանք, այլ կեանքի իմաստ։ Նման մէկը արդէն չի կարող չհասկանալ, որ ոչ թէ գրողն է ստեղծում իր խնդիրը, այլ խնդիրն է ստեղծում իր գրողին։ Ուստի եւ այսպիսի մէկի գործը չի կարող նմանուել դեղատան, որտեղ կարելի է դեղ արքեղ ցանկացած գեղատոմսով, դեղաբաժիններն իրար խառնելու ծառայութիւնը։

Ճշմարիտ բանաստեղծ-«բժիշկներին» բուժման եղանակը առաւելապէս «եռմեղսպտիկ-հեփմայիմ» է. ամէն մէկն ունի ի՛ր «գաղտնիքը», բուժման ի՛ր եղանակը, որ կարող է շընդունուել «պաշտօնական բժշկութեան» կամ այս ու այն դիպումաւոր բժիշկ-քննադատ-ընթերցողի կողմից։

Իսկ վերջիններս էլ պիտի խոնարհարար պատասխանել այնպէս, ինչպէս ամերիկեան անուանի գրող Շերվուդ Անդերսոնն է պատասխանել մի քըն-նադատի. «Եթէ դուք գնում էք կայարան, քայց ճանապարհին ուշամուս էք, եւ գնացքը քեթեւանում է որոշ ուղեւորներից, վերջումս ուրիշ ուղեւորների, իսկ դուք չէք հասցնում գնացք մտնել, դրա համար մի՛ նախատէք մեքեմա-վարին»։

Ամէն գրող նախ եւ առաջ ընթերցող է։ Ու ես էլ, իբրեւ այդպիսին, չեմ կարող իմ հերթին, մի երկու խօսք չասել մեր երիտասարդներին, որոնց զարուստը իմ անձնական ուրախութիւնն է եւ որոնց առաջին քայլերի հետա-մտքն եմ։

Ես շատ խօսեցի ընդդէմ հասարակի եւ պարզունակի, ընդդէմ ծամ-ւածի եւ տափակի, ընդդէմ պատմողական-նկարագրական՝ յանուն (կարճ ասեմ) փլուածքների եւ կէտցծի։ Ես, այո՛, սխերմութիւն ունեմ դէպի այն գրողը, որն, իսկի ասած, գրող չէ, այլ քաբտաղար՝ ժողովի արձանագրու-թիւն կազմողի իմաստով։ Ես կարծում եմ, որ արդի գրականութիւնը պիտի համեմատուի ոչ թէ ժողովի արձանագրութեան, այլ այդ արձանագրութեան քաբտաղարի հետ։ Բայց սա բնաւ էլ չի նշանակում, թէ բանը պիտի հասցնել աղապրութեան։ Այս անցանկալի հակումն ու միտումը, ցաւօք, արդէն զգաց-ւում է այնքան, որ ինձ վախ է ներշնչում։ Այսօրինակ բոլոր ոտանաւորները կարելի է առնել մէկ ընդհանուր խորագրի տակ. «Ես տանձ ասեմ, դու գանձ

հասկացիր»։ Իսկ ես սիրելի՛դ իմ, «զանձ» չեմ հասկանայ, եւ քո հտանձքը ո՛չ միայն չի ծախուի, այլ իրբեւ դեղահատ էլ չի կլլուի, որովհետեւ այդ հտանձքը ստեղծուած է ոչ թէ աւելից ու արեւից, այլ թղթից ու մեծամասութեան թանաքից։

Մեզ զգուցցրել է հարթագրութիւնը։ Բայց մեզ նոյնքան էլ պէտք չէ բարդագրութիւնը, եթէ դիտումնաւոր է ու միտումնաւոր։ Ո՛չ հարթագրութիւն, ո՛չ բարդագրութիւն, այլ (այսօր եւ միշտ եւ յաւիտենից յաւիտենանս) մա՛րդագրութիւն՝ մի այնպիսի եղանակով, որի բացատրութեան համար պիտի յիշեմ Ա. Շամիսոյի «Պետէր Ելեմիր» վիպակը։

Այս վիպակում ստեղծուած է մի կերպար, որ կորցրել է իր... ստուերը։ Հե՛շտ չէ նմանուել այս հերոսին, այսինքն՝ կորցնել իր ստուերը, որ անցեալն է, սերունդները դարաւոր շարկապուածութիւնը։ Ինչպէս երեւում է՝ առաւել հեշտ է հակառակը. կորցնել իրեն՝ թողնելով միայն իր ստուերը, առանց դէմքի եւ էութեան, թէ՛ ե՛կ ու ճանաչի մարդուն, ստուերը զանազանիւր ստուերից...

Մեր երիտասարդները զայնակի կարիք չունեն, բայց չէր խանդարի, եթէ նրանց հարսանեկան կնքահայր դառնար նոյն ինքը Ա. Շամիսոն՝ մշտապէս յիշեցնելով, որ մարդ չի կարող ապրել ո՛չ առանց ստուերի, ո՛չ էլ ստուերի պէս։

Բայց եթէ մի պահ մտածենք, զբոկանութեան ինչպէս մկրտութեան, այնպէս էլ հարսանիքի կնքահօր իսկական անունը ինչո՞ւ պիտի լինի ինչ-որ Շամիսօ եւ ոչ թէ... Գննադատ։

Ես այսօր չպիտի հարցնեմ՝ «իսկ ո՞ւր է Լա»։ Իմ այսօրուայ հարցն է՝ «Նա տեսա՞ւ իր տեղը դառնական առասպելի մէջ»։

Այդ տեղը ցոյց տալով էլ ես կը վերջացնեմ իմ խօսքը։

Մերացած Պօ Լուին իշխանի հարցմունքին պատասխանում է. «Լաւ ձիւ կարելի է մանաչել տեսից ու շարժմունքից... Իմ զրդիները շնորհք չի հասնում քարտրագոյն աստիճանի. նրանք կարող են ջոկել լաւ ձիւն՝ մայելով նրան, բայց նրանք չեն կարող համաչել անմահ մտնողը»։

Մեր քննադատութիւնն առայսօր կանգնած է նոյն այդ որդիների մակարակին. նայելով տեսքին ու շարժմունքին՝ նա զանազանում է ձիերի վատն ու լաւը, էպն ու որձը, սհան ու աշխէտը։

Բայց մենք, ինչպէս որ իշխան Մուն, կարիքն ունենք ոչ թէ «լաւ ձիւ», այլ «աննման նժոյղի», իսկ այս վերջինս «այն է, որ ասները գետնիմ չի դիպցնում ու հետք չի քողում, որ խորհրդաւոր է, անըմբռնելի-անըմբռնելի, եւ անշօշափելի, ինչպէս առատոտայ մութը»։

Ուստի եւ մեզ էլ պէտք է մի Զու-Պան-Կաս, որ ճերթափանցում է ու գուրաւորութիւն մէջ։

Ո՛ւր է նա։

Գուցէ նա էլ առայժմ «ցախ ու կանաչեղէն է ծախում»։

Բայց նա շատ է հարկաւոր Մու իշխանին, որ Զինի առասպելայ տիրակալը չէ, այլ իրական — ժամանակակից հայ դրականութիւնը...։

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱՆ

«Գրական Թերթ», 7 Յունուար 1966, № 2

ԳՌՅՈՒԹԵՆԱՊԱՇՏ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ



ԸՆԿԵՐԱՅԻՆ

ՆԵՐԿՅՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Բ.

Ի՞նչ են սակայն այն կացութիւնները, զորս Սարթր կը ձգտի փոխել:

Սարթր կը խորհի, որ գոյութիւն ունեցող այս զանազան կարգերէն ո՛չ մէկը յարմար է մարդկութեան համար: Ո՛չ համայնավարը, ո՛չ ընկերավարը եւ ո՛չ առավարը, — հակառակ անոր, որ Սարթր առժամապէս աւելի մօտ է ժողովրդապետութեան, — եւ ոչ իսկ կրօնական կարգը կամ դրութիւնները. որովհետեւ կեանքի այս բոլոր ուղիները կը կաշկանդեն մարդուն ազատութիւնը եւ ուրեմն պէ՛տք է փշրել զանոնք: Ժիշո աս կ'ըսէ Սարթր իր «Ճամները» (Les Mouches) թատերգութեան մէջ:

Թատերգութեան առանցքը սա է. Գլայթրմէնէսթրա, Արկոսի թագուհին, կը յաջողի իր սիրածին՝ բանակի հրամանատար Ալիսթերի օգնութեամբ սպաննել իր ամուսինը՝ թագաւոր Ակամեմոնոնը: Զոլլուսի եւ սարսափի մթնոլորտի մը մէջ՝ անոնք իրենց ուժը, բռնատիրութիւնը կը պարտադրեն ժողովուրդին: Սարսափի ազդեցութեան տակ հրպատակները կը դաւն, թէ իրենք միւրրճրած են մեղքերու մէջ եւ պէտք է ի-

րենց կեանքը անցընեն անոնց քառութեան հաշուոյն: Իսկ ապաշխարանքը կերպարանափոխուած էր խոշոր ճանճերու, որոնք կը յարձակէին արդէն ողբալի եւ բռնատիրական կեանք մը վարող մարդոց վրայ, յիշեցնելու անոնց մեղքերը:

Ժիւփիթըր, աստուածներուն ամենամեծը, այս բառերով կը խօսի Ալիսթերս թագաւորին, որ յափշտակեց Արկոսի դահլ. «Երկուքս ալ կը պայքարինք կարգի ու օրէնքի համար: Դուն Արկոսի մէջ, իսկ ես՝ աշխարհի: Մէկ խորհրդաւոր բան կայ երկուքս ալ խանգարող, այն՝ որ Ադամի որդիները ազատ են: Անոնք ազատ են, Ալիսթերս, դուն գիտես այդ, եւ այդ գիտեն նաեւ ամո՛ղէ»:

Ալիսթերս կը պատասխանէ.

«Իմ գահակալութեան ի վեր, արարներս եւ խօսքերս սատարած են զիս ստեղծելու: Եւ ո՞վ եմ ես, եթէ չեմ այն սեպուխը, որ ուրիշներ կը զգան ինձի հանդէպ»:

Ժիւփիթըր կ'ըսէ.

«Ալիսթերս, աստուածները ուրիշ առեղծուած մը ունին: Եթէ մարդ մը ա-

զատ է, աստուածները անկարող են ամբողջապես կամ ամբողջով դուրս բերել ինչ-որ մեկը։ Ինչու աստուածները անկարող են ամբողջապես կամ ամբողջով դուրս բերել ինչ-որ մեկը։

Այս թատերգութեամբ Սարթր ցոյց կու տայ, թէ Ակիսթերս սպաննեց Ակամեմոնը, որպէսզի ինք հաստատէ կարգը, եւ որպէսզի նուիրակնացնէ այս կարգը, որմէ ուրիշներ կրնան վախճալ, ան վերահաստատեց օղակաւ մը հաւատքներու, նախապաշարութեան, արարողութիւններու, որ իր հպատակները դործածեն եւ անդի տան իր բռնապետութեան առջեւ՝ բաժնելով իր շար խիղճը։

Պատմութիւնը կ'ըսէ, թէ սպանուած թագաւոր Ակամեմոնի որդիներէն մէկը՝ Օրեսթըս կը փախի եւ դեռ մանուկ՝ կը տարուի Յունաստան, հալածուած այն վախէն, որ բռնատէրը կը սպաննէ զինք։ Մինչ իր քոյրը՝ էլէէթրա, կը մնայ իրեն աղախին կամ գերի՝ իր մօր հոմանի բռնապետին պալատին մէջ։ Օրեսթըս կը մեծնայ, կը վերադառնայ իր ծննդավայրը, որպէսզի իր քոյրը հետ ծրարէ իրենց մօր եւ բռնապետին սպանութիւնը։ Ապանութեան իրադրութեան հետք, Օրեսթըս ազատութեան հերոս կը դառնայ։ Ան, հակառակ իր երիտասարդութեան, յառաջորէն կ'անդրադառնայ իր արարքին, եւ կը հրաւիրէ վիշտի աստուածները — Յանները — որովհետեւ կը կրէ այդ ծանր բռնան պատասխանատուութիւնը։ Մինչդեռ էլէէթրան կը նիւթէ սպանութիւնը՝ առելութեան եւ վրէժ-խնդրութեան պատճառներով միայն։ Սարթր ցոյց կու տայ մեզի Ակիսթերոյ, իրեն զուգարայն բանին, որ ինք պարտադրած էր իր ենթակիներուն։ Ակիսթերոյ համար ամէն ինչ կա՛մ վախի կ'առաջնորդէ, կամ կը բախի վախի ուրուականներու, զորս ինք հնարած էր, սարսափեցնելու համար ուրիշները, երբ անոնց վիշտերը արդէն կերպարանափոխուած էին ճանճերու։ Եւ վախ ոչինչէն ախրնքն՝ ա՛յն պարագութեան, որ շրջապատած է իր անձը։

Ժամանակաւոր բռնապետին դաճն-կէցութենէն ետք, Օրեսթըս կը փորձէ եւ կը դառնայ հոգեկանին, որ ներկայացուած էր ժլատ եւ ճարպիկ աստուծոյ մը կողմէ, որուն միակ մտահոգութիւնը վշտահար ժողովուրդը ազալխարանքի համար ծնրադրած տեսնելն է։ Ան կը դառնայ ամենակարող աստուածութեան եւ չի վարանէր այսպէս խօսելու Ճիւփիթրին։

— Դու աստուածներու աստուածն ես, Ճիւփիթր։ Դու քաղաքն ես քաղաքն, աստղերու, արեւի, քայքայի մարդկային էակներու...։

Ճիւփիթրը կը պատասխանէ։

— Ես քաղաքը չեմ փրկել, աղտոտ խարամ։ Ո՛վ ստեղծեց քեզ ուրեմն։

Օրեսթըս։— Դու աստեղծեցիր։ Քայքայի փրկել չէ որ ազատ ստեղծած ըլլայիր։

Ճիւփիթրը։— Քեզի ազատութիւն տուի, որ ինձի՝ ծառայես։

Օրեսթըս։— Կարելի է։ Սակայն այս ազատութիւնը քեզի դէմ ցցուած է, եւ ո՛չ ես, ո՛չ ալ դու կրնամք փոխել զայն։

Ճիւփիթրը։— Վերջապէս։ Ա՛ս է արդարացումը։

Օրեսթըս։— Ես ներում չեմ խնդրեր, որովհետեւ ես ո՛չ տէրն եմ, ոչ ալ գերին, այլ՝ իմ վայելած ազատութիւնս եմ։

Օրեսթըս զործադրեց հարկ եղած յեղափոխութիւնը՝ կատարեալ եւ բացարձակ ազատութեան մէջ։ Իր ազատութեան վկայութիւնն է այն, որ ինք ո՛չ թէ գէշ, այլ՝ թեթեւցած, հանգստացած զգաց սպաննելէն ետք։ Վրէժի համար չսպաննեց, ոչ ալ դաճակալելու անհուն պապակով։

Կը տեսնենք, որ ան կը մերժէ կառավարել եւ թատերգութեան վերջաւորութեան՝ կը ձգէ իր ծնած քաղաքը, առանց վերադառնալու որեւէ փափաքի։ Ան իր հետը կը կրէ վիշտի աստուածները։— Յանները, որ յարձակեցան քաղաքին վրայ, եւ կը մխրճէ բնակիչները բռնապետութեան infernoին մէջ։

Ազատութեան մէջ օգտնենց, որպէս-
զի պատճէ ոճրագործները, որոնք նուա-
տացոյցին ամբողջ բնակչութիւնը։ Ու-
րիշները հարուածելու փոխարէն, ինչ-
պէս ըրաւ Ալիսթեքս, ան կ'ազատագրէ
զանոնք վախէն։ Կ'ապահովէ իր որմա-
խուցը, անդրադառնալով իր արարքին եւ
կրկնով պատասխանատուութիւնը կոր-
սըած բնկերութեան մը, եւ չի վարա-
նիր ինքզինք ներկել իր մօր եւ անոր սի-
րածին արիւնով։ Օրհնութեա կ'ազատագրէ
ընկերութիւնը երկու անգամ։ Նախ՝ ըն-
նապետին սպանութեամբ հաստատելով
մարդկային բնութեան ազատութիւնը՝
երկրորդ՝ երբ աստուածներու ամենամե-
ծին մարտահրաւէր կը կարդայ, որ ա-
զատէ մարդիկը պատմութեան եւ եր-
կրպագութեան նախապաշարունակէն։

Այսպէս, Սարթր կրօններու մէջ կը
գտնէ սահման մը եւ սահմա մը մարդու
ազատութեան, ինչպէս նաեւ ցոյց
կու տայ ա՛յն, որ ընկերային կարգը կը
հանգչի ուժի, անարդարութեան եւ կաշ-
կանդումի սիւներուն վրայ։

Գոյութենապաշտ մը ըսած է։ — Ա-
սոր համար է, որ գոյութենապաշտու-
թիւնը կը վայելէ թշնամութիւնը բոլոր
անոնց, որոնք հաւա կ'ապրին իրենց
խիղճերուն հետ, որոնց հաւատքը չարն
է եւ սխալը, անոնք՝ որոնք ունին շատ
բարի եւ պարզ խիղճ մը, դիտնականներ,
կրօնականներ, ուղղափառ մարքսիստ-
ներ, անոնք՝ որոնք բարձր գիրքերու կը
տենչան, եւ քաղաքագէտներ, որոնք
կ'երեւակայեն, թէ հասած են հոն, որով-
հետեւ ունին ուրիշներէ աւելի բարձր
արժանիք մը։ Բոլոր ասոնք պահանջը
կը զգան արդարացիելու իրենց գիրքը։
Նուալ կ'ուզեն իրենց ձեռքերը մեղքէն,
ինչպէս ըրաւ Պիլատոս, բայց ինչ ալ ը-
նեն, իրենց ձեռքերէն արիւնը պիտի չան-
հատի։

Սարթր իր առաջին գործերուն մէջ
կը ջանայ վերադարձնել մարդուն յու-
սահատութիւնը, քանզի բոլոր վարդա-
պետութիւնները, եւ ջատագովել ընկե-
րային կարգ մը, զոր մարդիկ կամովին

կ'ընդունին, ներդաշնակ մարդու իրենց
բնութեան, ամբողջական ազատութեան։
Ալ սահմա պէտք չէ դրուի իր մտածումին
կամ հաւատքին, նոյնիսկ իր անհատա-
կանութեան։ Գոյութենապաշտութիւնը
կ'ուզէ, որ մարդ ապրի մարդկութեան
պատկերին մէջ, որպէսզի ան ջնջէ ասա-
ւածը, եթէ Աստուած կայ։ Եթէ Աստ-
ւած է մեր արարիչը, ըստ գոյութենա-
պաշտներուն, անիկա Աստուծոյ համար
վերջ մը չէ, որովհետեւ Ան մեզ ազատ
ստեղծած է։

Բայց ինչպէ՞ս այսպիսի կարգ մը
կրնայ իրականացնել ընկերութիւններու
մէջ, եւ ո՞վ կ'օգնէ անոր իրագործման։

Սարթր կ'ըսէ, թէ դրողը կը հարթէ
ճամբան այս կարգին, ուր ամէն անհա-
տի ազատութիւնը երաշխաւորուած է, եւ
այս կարգը ուժի վրայ չի հանգչիր։ Ան
մանրակրկիտ կերպով կը վերլուծէ դրո-
ղին դերը եւ պատասխանատուութիւնը։

1946ին, Սորպոնի մէջ, UNESCO
խնդրանքով, Սարթրի առած մէկ զատա-
խօսութեան նիւթն էր «Գրողին պատաս-
խանատուութիւնը»։ Ունի նաեւ յօդուած
մը «The Egyptian Writers» թերթին մէջ,
«Գրականութեան ազգայնացումը», հրա-
տարակուած 1955ի Նոյեմբերի թիւով։
Ահաւասիկ զլիսուոր կէտերը, որ կապ
ունին մեր նիւթին հետ։ — Գրողին դե-
րը՝ դէպի անհատին ազատագրումը ուղ-
ղւող ընկերութեան զարգացման ճամ-
բուն վրայ։

Այսպիսի մէջ ո՛ւր որ անարդարու-
թիւն կայ, կ'ըսէ Սարթր, մենք պատաս-
խանատու ենք անոր համար։ Գրողը
պէտք է, որ նախ անուանէ զայն, որով-
հետեւ լեզուն կը բերէ մեզի զազափաբը։
Բան մը անուանելը գոյութիւն կու տայ
այդ բանին, եւ ճշմարիտ կը դարձնէ
զայն։ Ամերիկայի մէջ սեւամորթներուն
հալածանքը, օրինակ, ոչինչ է այնքան
առեւ, որ մէկը չըսէ, թէ սեւամորթներ
կը հալածուին, նոյնիսկ իրենք, սեւա-
մորթները։ Բաւական է, որ մենք հնչենք
բառը, որ հալածանքը գոյութիւն եւ ի-
մասաւ ունենայ։ Գրողը այն միջոցն է,

ուրեմն, որ կ'անուանէ բաները, որպէսզի անոնք գոյութիւն ասեն եւ ուրիշներ դիտակցին անոր: Եւ այնքան ատեն, որ լեզուն կը գործածուի որպէսզի հասաւտէ բաներու գոյութիւնը, գրողը պէտք է դորձածէ իր կերպը շատագոյն մարդուան ազատութիւնը: Մարթը կ'ընդունի, որ միայն լաւ կամ դէշ ոճ գոյութիւն ունի: Լաւ ոճը այն է՝ որ կը պաշտպանէ ազատութիւնը եւ դէշը՝ հակառակը: Գրողը, որ կը պայքարի ուրիշներու ազատութեան համար՝ արժանի է գրողի իր կոչումին:

Եթէ բաղդատենք գրողը քաղաքագետին հետ, կը գտնենք, որ վերջինը ունի ծրագրի մը իրականացումը, որ կ'երաշխաւորէ ազատութիւնը իր տէքերուն առջեւ, բայց ուժէն զատ ուրիշ միջոց չկայ ունենալու այս ազատութիւնը, իսկ ուժը կրնայ նուազեցուիլ, բայց ոչ բնաջընջուիլ: Սրինակ, կարելի է ժողովրդապետութեան թշնամիի մը, որ տարի անոր մէջ: Քաղաքագէտը չ'ընդունիր այդ եւ ամէն դեռ կը ջանայ հեռացնել զայն: Գրողին համար պարագան ճիշդ հակառակն է. ան կը պայքարի, որ ազատութիւնը տնկեցրտականայ, եւ անոր իշխանութիւնը սփռուի առանց ուժի, որովհետեւ ան կը մերժէ բռնութիւնը: Մարթը կ'աւարտէ այս խորհուրդով.

«Եթէ մեծ իրիւ գրողներ կ'ազնւի, որ մեր գործը ըլլայ լաւիմ համար, պէտք է քիչումի կանգնիմք ազատութեան, առանց բռնութեան: Այս է գրողին պատասխանատուութիւնը»:

Ազատութիւնը վտանգուած աշխարհի մը մէջ՝ գրողին պարտականութիւնն է ազատութեան պահպանումը, այլապէս ան յանցաւոր է եւ այլեւս գրող չէ: Գրողին գերը պաշտպանել չէ յաւտենական արժէքները, ինչպէս արդարութիւն, ճշմարտութիւն, դեղեցկութիւն, որովհետեւ ասոնք էութիւններ էին իր գոյութենէն առաջ: Գրողին գործը պահպանելն է ազատութիւնը, միայն շտափելի իրականութիւնը:

Մարթը կը յստակացնէ այս, երբ կ'ը-

սէ, թէ գրողը ազատութիւն կը քարոզէ, բայց չի նշանակեր որ ան կը ձգէ բնադանցական (metaphysical) անհեթեթ ազատութեան որոնումը, որուն մասին բան չենք դիտեր եւ որուն մասին կրնան խօսիլ միայն բնադանցական բանագրութիւնները, առանց քարոզելու կամ պաշտպանելու զայն: Մեր ուզած ազատութիւնը յստակ բան մըն է, ինչպէս՝ տընտալ դաստիարակի մը ուսումնական մակարակը բարձրացնելու հարցը, կամ զօրավիզ կանգնելու ժողովուրդի մը, որ իր իրաւունքները կը պահանջէ:

Ոճի էութիւնը պահպանումն է ազատութեան: Անոր համար է, որ գրողին պատասխանատուութիւնը կախում ունի ժամանակէն եւ վայրէն: Երբ համադրածակցութիւնը տարբեր անձերու միջեւ նուազագոյն է, պատասխանատուութիւնը նուազագոյնի վերածուած կ'ըլլայ: Եւ երբ զօրաւոր հաստատութիւններու կողմէ պաշտպանուած զաղափարներ եւ հաւատքներ կան, այդ պատասխանատուութիւնը բոլորովին անիմաստ կը դառնայ: Միջին դարերուն կրօնական հաւատքները եւ վարդապետութիւնները գերազօր էին եւ երկիր-եկեղեցի պահեցին զանոնք: Գիրքերը չէին շրջագայեր ժողովուրդին մէջ եւ միայն գրողները կը պահպանէին այս հաւատքը. բայց ունէին մեծ արժանիք մը, կ'անուանէին այս արժէքները (value) եւ հաւատքները, կը հաստատէին անոնց գոյութիւնը եւ պատճառ կ'ըլլային, որ ուրիշներ գիտնան, ժառանգեն եւ քննադատեն զանոնք: Այս մարդկային ազատութեան ճամբուն վըրայ առնուած առաջին քայլն էր, հակառակ անոր, որ իրենք չէին անդադառնալ այս ազատութեան:

Մարթը՝ 18րդ դարու գրողները՝ ինչպէս Վոլթերը, Ռուսոն եւ Մոնթեսքիէն կը նկատէ իրեն բաղադրեալները գոտմի դարուն. մաքրագործում՝ հին կարգէն: Սակայն անկէ ետք, 19րդ դարու գրողները ստեղծեցին եւ իրեն իրենց նշանաբանը որդեգրեցին «Արաւստը արւեստին համար» գաղափարը, բայց այս տեսակէտը չի ծառայէր ազատութեան

Հարցին: Անիկա հետաքրքրած էր միայն քաղաքների դասակարգը, որ Հաճոյք կ'առնէր այս տեսակ գրութիւններէն:

Այսօր գրելը կապուած է ժողովրդապետութեան (democracy): Եթէ գրողը ինքզինք ազատօրէն չ'արտայայտեր եւ իր գրութիւնները չ'ուզէր ազատ մարդերու, թող բնաւ չգրէ: Գրողին դիրքը կը պահանջէ մարդկային վիճակի որոշ ձեւ մը, որ բոլոր ընկերութիւններու մէջ չի գտնուիր: Եթէ ընկերութիւնը ճշդ-ւած է, ալ այդ ընկերութեան մէջ բառին բուն առումով գրողներ կամ գրականութիւն չի կրնար աճիլ:

Սարթը կը պնդէ, որ գրողը պէտք չէ ենթարկուի կառավարական կամ նիւթական որեւէ հակակշիռ: Քննադատական գրողը մը պէտք չէ ըլլայ ան: Պէտք է զգայ իր ինքնութիւնը, որովհետեւ պատասխանատու է ամէն ինչի. պատերազմներու ընթացքին՝ պատասխանատու է պարտութիւններու եւ յաղթութիւններու, պատասխանատու է յեղափոխութիւններուն եւ անոնց ձախողութեան, մեղսակից է հալածանքի, եթէ ինք ալ հալածիչներու զաշնակից մը չէ, եւ ասիկա ո՛չ թէ որովհետեւ գրող է, այլ՝ որովհետեւ ազատ մարդ է ամէն բանէ առաջ: Կեանքը եւ գրականութիւնը պէտք է մէկ ու նոյն բանը ըլլան իրեն համար: Գրողը պէտք է պահանջ մը ստեղծէ, որպէսզի գոհացնէ զայն: Թող ստեղծէ ուրեմն ազատութեան պահանջը — ազատութիւնը կը ներփակէ արդարութիւն եւ համեմատութիւն — եւ թող ջանայ գոհացնել այս պահանջները՝ իր արտադրած գործերուն մէջէն:

Գրողի եւ ընկերութեան յարաբերութիւնները այլապէս են եւ արագ — թերթեր, օրաթերթեր, շաբթական նկարներ եւ ռատիոներ: Ընթերցողները եւ ունեկրնդիրները հսկայ թիւ մը կը ներկայացնեն այսօր եւ գրողին պատասխանատուութիւնը աւելցած է, ուրեմն ան իր նախապէս գիտցածէն շատ աւելի բան պէտք է գիտնայ եւ խօսի անոնց մասին:

Սարթը կ'ըսէ, որ ընթերցողները կը պատկանին ընկերութիւնը առաջնորդող

եւ իշխող քաղաքների դասակարգին, ինչպէս բժիշկները, փաստաբանները, պաշտօնեաները, փրոֆեսորները: Բայց այս դասակարգը ներկայիս կ'ենթարկուի վերածնունդի մը՝ իր հիմնականներուն եւ գաղափարներուն վրայ: Կը նկատէ, որ 18րդ դարուն գրողները գրեցին երիտասարդ խաւի մը եւ քննադատեցին այդ օրերու ռեժիմին յոռի կողմերը, բայց առաջ գրողներուն խօսքը կը հանդիպէր քաղաքների դասակարգին, որ կը զոռէ իր վարդապետութիւններն ու գաղափարաբանութիւնները: Գրողը պէտք է ուղղութիւն տայ դէպի մէկ նպատակակէտ — ազատութիւն: Պէտք է հաստատէ եւ զգացնէ ազատութեան անհրաժեշտութիւնը բոլոր անոնց, որոնք կը հալածուին՝ աշխատանքներու, ճնշուած ժողովուրդներու, զբաւուած երկիրներու: Պէտք է մտածանշէ հալածանքը եւ քարոզէ ազատութիւն հոն՝ ուր գոյութիւն չունի անիկա: Բայց առանց ուժի ինչպէ՞ս կրնայ պատահիլ ասիկա:

Այս կէտը տակաւին անյոտակ է Սարթի փիլիսոփայութեան մէջ: Օրինակ, երբ կը կարդանք «Ճանմանք» մէջ, որ Օրենքը կ'ապաւինի ազատութեան, որպէսզի ազատագրէ ժողովուրդը բռնակալին լուծէն, կը գտնենք, որ Սարթը հակառակը կը պնդէ իր գաղափարներուն եւ յօդուածներուն մէջ, հաստատելով, թէ ազատութիւնը դանդաղօրէն կը շահուի: Այս կէտը քննարկուած է քանի մը գոյութենապաշտներու կողմէ, ինչպէս Տիտէ Անդրոյ եւ Պոփերէ, որոնք ըսին, թէ բոլոր այն ապստամբները, որոնք կ'ապստամբին յոյսերով ժողովուրդ՝ ապագայի դաւաճաններն են եւ երբ մարդ կ'ապստամբի, մարդկութեան համար աւելի լաւ նպատակակէտ մը ստանալու համար չէ: Ազատութիւնը պէտք է իրականացուի բոլորին կողմէ եւ այս անդադարձուի կարելի է եղափոխութեամբ (evolution), առանց բռնութեան: Ասոր համար է, որ մենք պէտք է օգտագործենք մեր ազատութիւնը ուրիշներ ապստամբելու նպատակով: Եթէ մարդ ինքնիրեն համար

կ'ընտրէ ազատութիւնը, կը նշանակէ, թէ կ'ընկերակէ բոլոր մարդկութիւնը եւ կը յանձնէ զայն այնպիսի ընկերութեան մը, ուր մեղմէ իւրաքանչիւրը պատասխանատու է ուրիշներու արեան: Այս հիման վրայ է, որ արդարութեան վճիռը պէտք է կառուցուի, թէ՛ ասկէ ետք կայ միայն մէկ ընդունելի ոճիւր — երբ մարդը կը գործածուի իբրեւ առարկայ կամ երբ վտանգուած է իր ազատութիւնը:

Մինչեւ հիմա ըստածներէն յստակօրէն կը հետեւի, թէ զոյութենապաշտութիւնը կը զետեղէ ուժ մը մարդուն վրայ եւ հետեւաբար բարոյադրական (գեղիկալ) փիլիսոփայութիւն մըն է: Կը մերժէ սկզբունքներու բոլոր մակերեսային ուղղափառութիւնները եւ կը պայքարի հասարակին համեմատութեան համար, ինչպէս եւ բարդին, պահանջելով մեղմէ ապրիլ բարոյական կեանք մը, զոր արդէն կը զգանք:

Աշխարհը եւ մարդը իրենք իրենց մէջ անխմտաւ են, բայց նշանակութիւն կը ստանան մարդուն կողմէ անոնց տրուած արժէքով: Ինչ որ կը զատէ մարդը զոյութիւն ունեցող ուրիշ բաներէն՝ իր ազատութիւնն է եւ ընկերութիւնը պէտք է թիկունք կանգնի իր բոլոր անգամներուն ազատութեան, եւ պէտք չէ բռնութիւն բանեցնէ ուրիշ անհատի վրայ:

Գոյութենապաշտութիւնը կը հպարտանայ, թէ ինք ջաղաքներու փիլիսոփայութիւնն է, որովհետեւ ազատութեան նշանակութիւնը առաւելաբար կը սկաւորանայ հսկայ ընկերութիւններու մէջ: Այս փիլիսոփայութիւնը կը ջանայ մարդուն վերադարձնել իր ազատութիւնը եւ վերլուծել մարդը իր իսկական էութեան մէջ: Ընկերութեան կաշկանդումին, հաստատութիւններու, անարդար օրէնքներու, հաւատքներու եւ քանի մը անհատներու նիւթական ուժին իբրեւ հետեւանք ստեղծուած է մթնոլորտը ա'յն ամբողջին, որ կը քաշէ անհատները եւ կը զրկէ զանոնք իրենց սեփական ազատութենէն, իսկական մարդու փոխարէն, այսպէս, զարձնելով զանոնք առարկաներ եւ բռնութիւն: Գրողին պարտական-

ութիւնն է ցոյց տալ մարդուն իր ճշմարիտ արժէքը, իր անկախութիւնը եւ պահանջել ու պաշտպանել զայն, մատնել զայն անո'ր, որ պիտակցութիւն չունի կամ կ'արհամարհէ իր ժամանակնսական էութիւնը — ազատութիւնը:

Բայց կարելի՞ է նման կարգ մը հաստատել մեր ներկայ ընկերութիւններուն մէջ:

Առո՞վ կը սկսի Հեկէլ իր «Դասախօսութիւններ փիլիսոփայութեան պատմութեան վրայ» գործը: «Այնպիսիքները չեն գիտեր, թէ արաւստը ազատ է եւ մարդ՝ իբրեւ մարդ ազատ է: անոնք գիտեն, թէ ինչ միայն մէկը ազատ է, այսինքն՝ բռնապետական կանոնը: Բայց յայնրէ գիտեն, թէ կարգ մը մարդիկ ազատ են, եւ գերաւթիւնը կը շարունակէ գոյութիւն անենալ իրենց համար: Փրիստոնէութիւնը կամաց-կամաց կը բռնայ ցոյց տալ, թէ մարդ իբրեւ մարդ ազատ է»:

Ամէն մարդ չի գիտեր այդ եւ զոյութենապաշտ փիլիսոփաները կը ջանան քարոզել եւ հասնել այն բանին, որ Տասթալեակին հաստատած է իր փապարհներուն ընդմէջէն, այսինքն՝ այն մտածումն է, որ ամէն ինչ տրտմուած է եւ ոչ թէ արդիւրած: Հեկէլ կ'եղբարեանէ. «Աշխարհի պատմութիւնը ազատութեան պատմութիւնն է, եւ այս է տիեզերքի (cosmos) վերջը»: Գոյութենապաշտութիւնը իրապէս փիլիսոփայութիւնն է cosmosի աւարտին:

Երկու նշաններ կան, որոնք կը դուշակեն աշխարհի վերջը: Առաջինը ջրածնային տոմրն է, եւ հրթիռներու հնարումը, որոնց միջոցով գիտնականներ փաստած են, թէ կը հասկնան, կը կռահեն եւ կը կառավարեն բնութեան օրէնքները, կարծես աստուածներ ըլլային, որ ճարպիկօրէն կը ղեկավարեն ճակատագիրը բաղադրեալ տարրերու: Երկրորդ նշանը գոյութենապաշտութիւնն է, երբ կը պնդէ, թէ հասկցած է մարդուն էութիւնը, որ ազատութեան ճիշդ մըն է եւ պէտք չէ թաքնուի կամ ճշդութիւնը սրելէ կերպով. աւելին՝ մարդ պէտք է ըմբռնի-

նէ իր ամբողջական ազատութիւնը, պահպանելով նաեւ ուրիշներուն ազատութիւնը:

Գոյութենապաշտութիւնը կը ջատագովէ ազատութեան վրայ հիմնուած ընկերութիւն մը: Ընկերութիւն մը, որ ազատագրուած է այն ամէնէն, որ բարդուած էին նախկին զարեւուն եւ այս դարուն նկատուած իբրեւ անվերաքննելի ու յաւիտենական ճշմարտութիւն: Ժառանգուած հաւատքներուն եւ օրէնքներուն մէջ՝ գոյութենապաշտութիւնը կը տեսնէ նախկին ռեֆորմներու յոռի կողմերը, որոնք բնօրէն կ'առաջնորդեն մարդը, որ իբրեւ յաւիտենական սուրբ ճշմարտութիւն ընդունի այս բոլորը, առանց քննադատելու կամ հարցումներ ընելու արտօնութեան: Մինչդեռ, ըստ գոյութենապաշտութեան, մենք միայն սխալ տեսութիւնները կ'ընդունինք իբրեւ կարեւոր ճշմարտութիւն: Բայց պէտք է վերադառնանք եւ ապահովենք մեր ազատութիւնը եւ ուրիշներուն ազատութիւնը միաժամանակ:

Այս եզրակացութիւնը, որուն հասած է գոյութենապաշտութիւնը, կը միջնորդէ մեզի այն պէտքին մասին, զոր ջատագովէք Քանթ: Երբ գոյութենապաշտը կ'ըսէ, թէ ինք ազատութիւն կ'ուզէ իւրաքանչիւր անհատի համար, կարծես կը կրկնէ Քանթի առաջադրանքը:

«Վարուէ այնպէս, որ չու վարժուեալ տիկերական քարոյական օրէնք մը»:

Կամ՝

«Վարուէ այնպէս, որ կարծես մարդկութեան հետ կը վերաբերիս ինչպէս ինք անձինք մէջ եւ ուրիշ ամէն մէկուն անձինք մէջ, իբրեւ ճշմարտեմք եւ նաեւ իբրեւ միջոց, բայց երբեք իբրեւ միջոց միայն»:

Վարուիլ ուրիշներու հետ իբրեւ նպատակ, երաշխիքն է եւ ճանաչումը իբրեւ մարդկային արժանիքին: Մեզմէ ո՞վ կ'ուզէ դրժանութիւն իբրեւ միջոց նըպատակի մը, իբրեւ առարկայ մը՝ առանց որեւիցէ ազատութեան: Սակայն Քանթ գիտակից էր այսպիսի բարոյական առանձնիքը իրականութեան դժուարու-

թեան, որովհետեւ մարդ միշտ տրամաբանութեամբ չ'առաջնորդուիր. իր մէջ կան բնական այլ մղումներ, որոնք պէտք է քննուին, պարզուին: Այս է մարդկային կացութիւնը, ի՞նչ պիտի ըլլայ Սարթրի կացութիւնը, եթէ հարցնենք, թէ՛

— Ինչպէ՞ս կրնան այսպիսի հաւատքներ եւ կանոններ մաս կազմել մարդկութեան, եթէ մարդուն էութեան մէջ է ազատութիւն մը ըլլալը:

Գոյութենապաշտութիւնը այնքան զեղչեցիկ երազ մըն է, որ եթէ յաջողի, մարդկութիւնը կ'ունենայ իր ամենամեծ երջանկութիւնը, բայց ի՞նչ կրնայ ըլլալ, տրուած ըլլալով մարդուն բնական միտումները, բնազդները, որոնք չեն կըրնար կառավարուիլ ազատութեամբ, այլ՝ էութիւններով, ինչպէս զազափառարանութիւններ, բանականութեան օրէնքներ, եւ յայտնութիւններ՝ իբրեւ լրացուցիչ տրամաբանութեան, զոր ջնջած է Սարթր: Հոս կրնանք տեսնել Սարթրի նշանակակէտը, երբ կ'ըսէր, թէ էութիւններ պիտի չ'են նախորդեն մարդու գոյութեան: Կարծես ան կը հաւատայ, որ մարդկային բնութիւնը բնականօրէն լաւ է, բարի, եւ ընկերութեան կողմէ այս կաշկանդումներն են, որ մարդը կը դարձնեն չար:

Ասոր համար է, որ Սարթր կը ջատագովէ անհատին ազատութիւնը ընկերութեան մէջ եւ իր ձեռքազատումը այն բոլոր օգակներէն, որ համընթաց չեն իր բնութեան:

Ռուսոյին ըսածը արդեօք հիմնականօրէն տարբեր է Սարթրի ըսածէն. ըստ Ռուսոյի, մարդուն անփականութեան զգացումը աղբիւրն է բոլոր ընկերային եւ քաղաքական շարութիւններուն եւ պայքարներուն: Ասոր համար ան նախընտրեց անձնական անփականութիւններու ոչնչացումը:

Սարթրի նախորդած բոլոր խորհողները անճշկած են այս նշան հարցերուն առջեւ, զորս աշխարհ կը զիմազդուէ այսօր: Իրաւ որ, արեւին տակ նոր բան չկայ:

Խորհողի մը կողմէն առաջարկուած ա-
մէն լուծում քայլ մըն է, ի նպատակ
մարդկութեան յառաջդիմութեան: Բայց
իրապէս մարդկութիւնը կը յառաջդիմէ՞
խորհողներուն առաջարկած լուծումնե-
րով, որոնք կը ջատագովեն անկասկած
վեհ գաղափարներ, եւ որոնք կը ձգտին
աւելի հասկացողութիւն եւ ներդաշնա-
կութիւն բերել անհատներու եւ ժողո-
վուրդներու միջեւ, վերջապէս մը կոխել
մարդկային բոլոր տառապանքներուն,
կամ արդեօք կա՞յ անտեսանելի ձեռք մը,
որ կը կառավարէ մարդկութիւնը եւ կ'ա-
ռաջնորդէ դայն:

Իրականութիւնը, ինչպէս կը տես-
նենք, առայժմ շատ արկախ կը ձգէ մեզ
եւ վարանող՝ այս հարցին առնչու-
թեամբ: Բայց Սարթր կ'որոշանայ գոյու-
թիւնը այսպիսի ուժի մը եւ եթէ բնու-
նի՝ իր փիլիսոփայութեան ամբողջ ա-
պարանքը պիտի քայքայուի: Պէտք չէ
մոռնալ իր նշանաւոր դատակնիքը, որ
կը դնէ ձեռքի թրբի բերնին մէջ. «Ազա-

մի քրդիները ազատ են, Ակիսթերս: Դու
գիտես այդ, եւ այդ գիտեմ մահւ ա-
ն՝Յէ՛ք»:

Եւ Օրեսթիսինը. «Ես ո'չ տէրն եմ,
ո'չ ալ գերին, այլ՝ իմ վայելած ազա-
տութիւնս եմ»:

Մտադրութիւն չունինք մէկ-երկու
նախադասութեամբ խախտելու գոյու-
թենապաշտութիւնը: Ան ունի շատ
մը վեհ գաղափարներ մարդկային
ընկերութեան համար. մա'նականդ ան-
հատներու եւ ժողովուրդներու ազատու-
թեան վրայ բանեցուած ճշումներուն
դէմ ցուցադրած իր դիմագրութեամբ:
Ո՞վ չ'ընդունիր այս: Մեզմէ ո՞վ չի հե-
տապնդեր անկախութիւնը. բայց մենք
կ'ուզենք գայն ամէն մէկուն համար, բա-
նականութեան չըջագիծին մէջ: Եւ կը
տեսնէ հարցը. — ինչպէ՞ս պէտք է բռնենք
ազատութիւնը, ա՛յն՝ որ սահած է նա-
խապատմական մարդուն ձեռքերէն եւ
կ'երեւայ այս դարու սաւառնող երանդ-
ներուն մէջ:

(Շար. 2 եւ վերջ)

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ



ԿՆՈՋ ՄԸ ԿԵԱՆՔԸ



(ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԻ

ԳՐԱԿԱՆ ԺՄՈՒՆԳՈՒԹԵԱՆ

ԸՆԴՄԷՋԷՆ)



Զ. Եսայեան մեր միակ գրադիտուհին է, որուն գործերուն մէջ տիրականը իր անձն է: Որոնոց եւ խորապէս տպաւորուող մտքի տէր, իր գրական նախափորձերէն մինչեւ ամէնէն արժէքաւոր վիպակները՝ ան տեսարար կը կատարէ փնտռութիւն իր եսին, փնտռութիւն երջանկութեան, որ դինք պիտի լիացնէ եւ որուն աղբիւրները իրմէ կը բխին: Շատ կանուխէն զգացած է զօրութիւնը իր ներքին ուժերուն, լուս եւ ինքնամփոփ՝ ականջ տուած է իր որսի ձայնին ու արտայայտած է իր հոգեկան աշխարհը յորդ զգայնութեամբ: Իր գրութիւնները յաւերժօրէն կը պահեն կնիքը իր տպաւորութիւններուն, մտածումներուն, բարդ եւ նուրբ զգացումներուն, յոյզերուն, երազներուն, ապրումներուն: Իր կարեւոր գործերուն մէջ՝ զլիաւոր հերոսները միշտ առանձին ու ներամփոփ են, սակայն անոնք իրենց առանձնութիւնը կը լեցնեն իրենց հոգեկան հարուստ աշխարհին՝ մտերմութեամբ: Արդէն իր «Նոգիւս աքաղաղ» վիպակին մէջ՝ Զ. Եսայեան կը հաստատէ, թէ իր գործերը «յիշատիւն են» ապրումներու արտացոլումն են... առանց ինձ մեռնալ եմ առնում, իսկ «Վերջին քաղաքներ» մէջ՝ կ'ըսէ. «Եւ իմ սիրտս կ'ուզեմ արտայայտել»:

Այս է ահաւասիկ Զ. Եսայեանի գործին իւրաքանչեւ գրողմը. զեզուն սիրտ ունեցող, զօրեղ կենսունակութեան տէր այս կինը կեանքի մէջ յաճախ ինքզինք բռնուած կը գտնէր զգայնութիւններու ցաւաղին ցանցի մը մէջ ու կը զգար, որ ինքզինք արտայայտելու հոգեկան հրամայական պահանջ էր: Վաւերական արժէքը իր գործին՝ իր խուզարկու ալքերուն ներքին հայեցողութիւնն է, իր եսին անվերապահ արտայայտութիւնը իր բազմապիսի երեսներով: Ահա այսպէս, Զ. Եսայեանի անձն ու գործը նոյնացած են ու այդ գործին ուսումնասիրութիւնը մեղի կը ներկայացնէ կնոջ մը կեանքը, ապրումը մեր նորագոյն պատմութեան ամէնէն եղբայրական շրջանին:

digitised by

A.R.A.R.@

Ա.— ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ձ. Եսայեան իր մանկութեան յիշատակներու վերապրումը կ'ընէ «Սիրիկա» պարտէզները» հատորին մէջ:

Մանկութեան տարիներուն, իր փափուկ կազմին պատճառով՝ Չապէլ Թովհանէսեանը եղած է յարատեւ խնամքի կարօտ: Մինչ թաղի երեխաները ճամբաները կամ իրենց տուններու պարտէզներուն մէջ կը խաղային, ան բազմոցին վրայ կ'ընկնէր, մինչեւ վիզը վերմակով ծածկուած, ապակիին մէջէն կը դիտէր դուրսի աշխարհն ու հասակակիցներուն խօլ մրցումները: Այս պարտադիր մեկուսացումը ինք իր մէջ ամփոփուելու, երեւակայութեան քննադատութիւններու ընթացքին կը հրաժարէր մեկուսացումէն հիւսուած: Այս պատմութիւնները իրեն աշխարհի տարբերութիւնները կը ներշնչեն, որ յաճախ կը մոռնայ իր շրջապատը եւ ամբողջովին կ'իյնայ անոնց ազդեցութեան տակ: Իր երեւակայութեան ստեղծած աշխարհը կը դառնայ իրական աշխարհը իրեն համար:

Այսպէս, զրկուած իր հասակակիցներու մտերմութենէն, յաճախ նաեւ տնեցիներու ներկայութենէն, որոնք կը զրազէին եղբայրի գործով եւ կ'աշխատէին առանձին սենեակի մը մէջ, աղջիկները փակուած կը մնար ինք իր մէջ, իր մտնկական յազումներուն եւ յարափոփոխ սպրտումներու աշխարհին մէջ: «Տիրապետ մայրը իմ նստի մայրն էր», կը գրէ ան «Վերջին բաժակը»-ին մէջ, եւ անկէ է, որ կը բխէ իմ երջանկաբխներն ու դժբախտութիւններն, ինչպէս նաեւ իմ մէջս է միայն, որ տալու է եւ օգնութիւն կը գտնէի եւ իմ մէջս է, որ կ'ընտելի այն գեղարուեստը, որ կեանքս պիտի զարդարէր ցերեմանով, լոյսով ու փառով:

Ֆիզիքական աստիճաններ, յաճախակի գլխացաւներն ու տնդը փոքրիկը շատ զգալուն կը դարձնեն: Այս դիւրագգաժութիւնը տակաւ կը գարգացնէ իր խռովութիւնն ու յատուկ շարժ. գգաժութիւնը: Սենեակին աղակիւնն մէջէն դուրսի աշխարհը դիտող աղջկան աչքերը կը շարժուին բնութեան դեղինութիւններէ, լոյսի խաղերէն, ծաղիկներու բուրմունքէն եւ իր կրած տպաւորութիւններէ աշխարհի ուսման կերպով կը յուշեն զինք, որ մերթ կու լայ, մերթ կը խնդայ ու այդ բոլոր գեղեցկութիւնները ընդգրկելու, ի՞նչ դարձնելու բռնութիւն, այլ անզոր տենչանքը զինք խորապէս կը վրդովէ, կը տառապեցնէ:

Բնութիւնը միշտ ալ աւելի կ'երգարէր պիտի ներգործէ իր վրայ: Տերեւներու յարաշարժ եւ կշռաւոր սօսաւիւնը սիրտը պիտի դողացնէ անպատեւելի յուզումով, դէպի հեռուոր հորիզոնը թափող ամպի ծուկները սարսափով պիտի արթնցնեն գիտակցութիւնը իր առանձին գոյութեան անսահման տեղեկութիւն մէջ, դարձնալով երեւելիներու խոռվիչ բուրմունքը, խոնաւութիւնն ու հարաւային քամիի գաղջ ալիքը, օդը յուզող եւ երբեմն անշնչի դարձնող «մթնոլորտային սարսուռ» զինք պիտի հասցնեն զարմարագոյն գերազգոտութեան: Ձ. Եսայեան միակ գրագիտուհին է, որ անբաղդատելի ներութեամբ նկարագրած է «պոլսական տենդը»՝ Ֆիզիքական յուզումը ի տես բնութեան հրաշալիքներուն: Ինչպէս կը խոստովանի «Հնգիս արագընդ» մէջ, «աշխարհիս վրայ ոչ մի փառքի մէջ թերեւս գարնան խոռվիչ չունի այս գերտունդը եւ հիւսնապիւն հաղորդակցութիւնը մարդոց ներքին էութեան հետ»:

Փոքրիկ Զապէլը իր ապրումներուն մասին ընդհանրապէս քար լուծ թիւն կը պահէ: Այդ ստորիքին անսովոր հպարտութիւն մը պատճառ կ'ըլլայ, որ իր զգացումներուն մասին մեծերուն ոչինչ յայտնէ: Թերեւս ալ պատճառը դիւրագոյաց խառնուածքներու յատուկ լուակեացութիւն մըն է, իր հոգիին խորերէն բխող զգացումները իրեն պահելու միտում մը, խրոչելով չըջապատի անհասկացողութենէն եւ մա'նաւանդ հեզեանքէն:

Ան շատ կանուխէն կը զգայ ծնողքին նիւթական դժուարութիւնները, կը լսէ զեղբայրներուն մօրաքորներուն եւ զամուսններուն պատմութիւնները վարպետին անասելի խորհախոթութիւններուն մասին ու ծուարած իր հոգեկան աշխարհին մէջ, հետզհետէ կը զգայ խուշ կուտակումը ա'յն կատաղի ցասումին, որ հետագային քանիցս պիտի պոռթկայ ի տես մարդկային ընկերութեան անարգար կարգ ու սարքին:

Բ. — ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ

Միշտ ինձմեքի կարօտ երեխան վերջապէս կ'առողջանայ ու տարիներու պարտադրուած անշարժութեան կը յաջորդէ իսկ շրջան մը, որ տիրական էր «կեանքը լիութի վայելելու մասնաւոր տրամադրութիւն մը, որ արբեցութեան մը պէտ կը շլացնէր գիտ երբեմն» («Վերջին քաժակը»):

Բաղձոցին անկիւնէն ազատագրուած աղջիկը անսպառ կենսունակութեամբ կը մագլցի ծառեր, կը շուրջի պատերու, կը ցատկէ դրացիներու պարտէզները, կը փնտռէ իր տարեկիցները եւ եռանդով կը նետուի անոնց խաղերուն մէջ: Անսանձ ուժերու մզումով ան մերթ աներեւակայեւ լիօրէն յանդուգն է, երբ սարսափահար երեխաներու աչքին առջեւ ծաղիկներով կը դարձարէ քնացող վարժապետը եւ թաղում կը սարքէ («Սիլիւտարի պարտէզները»), մերթ երազկետ ու դողդոջ է (երբ ժօրաքորը անուշահոտի սրուակներէն սպրդող խառն բուրումներու տարտամ հոտը հոգին կը պարուրէ դերագոյն զգայնութիւններով. բուրումները կը վերածուին անտէլքներու եւ անբոռչ երաժշտութեան մը ու ան կը տեսնէ ու կը լսէ այնպիսի բաներ, որոնք որեւէ կապ չունին անմիջական իրականութեան հետ («Սիլիւտարի պարտէզները»), մերթ խիզախօրէն հպարտ է (երբ կը կրէ անարգար պատիժներ ու զրկանքներ, սակայն ո'չ կը զանգատի մեծերուն, ոչ ալ կը դաւաճանէ խաղընկերներուն), միշտ եւ ամէնուրեք կը բողբոջ անարգարութեան ու խտրական ռզիլի դէմ, կը պաշտպանէ տկարները եւ յաճախ իր անձը վտանգելու իսկ գնով կ'աւանջուի բուռն արտայայտութիւններ, կը կազմակերպէ ըմբոստական շարժումներ (երբ զպրօցական շրջանին կը պոռթկայ ձրի աշակերտներու հանդէպ ցոյց տրուած վերաբերումին դէմ, կը յարձակի աղքատիկ աղջկան մը ցուրտէն վիրաւոր մատները քանակոծող ուսուցչուհիին վրայ, կը յափշտակէ հարուստ աղջկան կեռասները, տեսնելով զամուսնի անկէպէտ իրերէն ջուրերը վազող աղքատ աղջկան («Սիլիւտարի պարտէզները»):

Իր հարազատներն ու ուսուցիչները չէին ըմբռնիր Զապէլի հագին խռճովով հանտարմարանական շարժումներուն եւ արարքներուն համար, Սակայն ուրիշներու կարծիքը ազդեցութիւն չէր ընդ ներքին, յաճախ անգիտակից մղումներու ենթակայ աղջկան վրայ:

Պատանի Զապէլը հազիւ մէկ-երկու մտերիմներ ունէր: Իր կանխահաս խելացութիւնը, դատելու կարողութիւնը գիճէ կը մեկուսացնէ իր շրջապատը:

digitised by

A.R.A.R.@

տէն եւ կը զգայ, որ առանձին է: Միւս կողմէ՝ իր մէջ եռացող բուռն զգացումները, յանկարծակի եւ անսպասելի կերպով կը տիրապետեն սրտին եւ ան յաճախ կարիքը կը զգայ մեկուսանալու եւ իր մէջ յայտնուող տարտամ, բայց յամառ յուզումներուն հետ գէժ առ դէժ ըլլալու, անոնց էութիւնը որոշելու, հոգեկան հաշուեյարգար ընելու:

Շատ կանուխէն ի յայտ կու գայ Ջապէշի դիմադրականութեան զօրաւոր ընդունակութիւնը: Երբ իր անհատական մղումները արդէն քննարու հանդիպին, աննկուն պայքար կը մղէ ու նահանջելը մտքէն իսկ չ'անցնէր: Իսկ պարտութեան պարագային՝ իր պատեանին մէջ չի քաշուիր, այլ անմիջապէս նոր պայքարի կը ձեռնարկէ: Կարծես պայքարելը հոգեկան անհրաժեշտութիւն է իրեն համար. իր մէջ եռացող ուժերը կը կուտակուին ու կը պոսթկան բռնան թափով: Պայքարելու կամքը ա՛յնքան զօրաւոր է, որ նոյնիսկ երբ դուրսի զգացումը արթնայ մէջը, լուի մեղմութիւն եւ վշտակցութիւն չ'առաջացներ, այլ տառապանքը կ'ըլլայ ա՛յնքան խորունկ, որ չկարենալով

●դիմանալ, ան կը դործէ ա՛յնպիսի արարք մը, որ արդահատելի երեւոյթը մէկ անգամ բնդիւշա չէզոքացնէ:

Ջապէշի գործելու, ինքզինք արտայայտելու ախարժակը կարելի չէր գտնել: Երբ պատանեկութեան չրջանին ծանրօրէն կը հիւանդանայ ու ասին մը մահուան ողբերգութիւն տակ կ'իյնայ, իր զօրեղ խռոնուածքը հեռու կը դնէ համակերպումի, յոյսը զերազոյն էակի մը կապելու ենթակայութիւնը: Ընդհանրապէս, այդ օրերուն գրուած արձակ բանաստեղծութեան մը մէջ կ'ըսէ.

«Ո՛վ մահ, որ ծներ ես ինձ հետ, որ եպեր ես իմ երկուտրեակը, կ'ուզեմ քեզ փանջնալ ու մայիլ քու աչքերուդ շեշտ փայտածնով:

«Մի սպաննար ինձ քրպէս ինձ անձնօք պատուես, դուն կաս, քրովհետեւ ես կամ, ու առանց ինձ դու սին ստուեր մըն ես, ծիծաղելի խրտուիլակ»:

Այս արձակ բանաստեղծութիւնը կը վերջանայ հեռեւեալ խօսքերով. «Եւ ես կը յաղթեմ քեզ փայնակ մահուանս քովէն»:

Գ.— ՈՒՍԱՆՈՂ ՈՒԹԻՒՆ

Ջապէշ Յովհաննէսեան կանուխէն սկսած է դրել: Դպրոցին մէջ Հայերէն շարագրութեան ուսուցիչը դինք անընդունակ աշակերտ կ'որակէ: Պատճառը այն է, որ կեղծ ոտմանքի դմբ ա՛յնքան տիրական էր այդ շրջանին Պոլսոյ մէջ, որ դպրոցականները կանուխէն կը մարդուէին այդ ուղղութեամբ. շարագրութեան ընթացիկ նիւթերն էին, օրինակ՝ «Հիւժարտէ բըռնըւած երիտասարդ մը, որ հրաժեշտ կ'առնէ կեանքէն», կամ «Ողբ՝ վաղա՛մեռիկ աղջկայ մը մասին»: Այս լալկան ոտմանքի դմբ չէր ազդեր Ջապէշ Յովհաննէսեանի վրայ եւ ան «Հետեւողական դիմադրութիւն» ցոյց կու տար:

Ջապէշ անխոնջ կարդացող էր: Կը կարդար հայերէն եւ Փրանսերէն հին եւ նոր դրականութիւն: Մտաւորական մղումներն ունեցող ընկերուհիներուն հետ անյադօրէն կը կարդար մանաւանդ Տիկ. Տիւսարի դիրքերը եւ պայքար կը մղէր այն արգելիքներուն դէմ, որ յետմնաց մտայնութեամբ քաղքենի հասարակութիւնը ճնշի կերպով կը դնէր ամէնուն վրայ: Պայքար կը մղէր կեղծիքի եւ քծիքի դէմ, խաբէութեան եւ սուտի դէմ, «չափաւած մեւաւած» բարոյականութեան դէմ, «օրհնեալ տարադով» (հարուստ) բարձր դասակարգին (ամբարշտական ընտանիքներու մուսորդներուն եւ սե-

դանտուրներուն) շտապուած մեծարանքին դէմ եւ կը պահանջէր, որ մարդիկ ըլլան ինքնաբերական, սրտաւ, կարեկից ու մարդկային վերաբերում ցոյց տան իրարու հանդէպ:

Իր առաջին գրութիւնները Ա. Զօպանեանի «Ծաղիկ»ին մէջ ա՛յնքան հետաքրքրութիւն ստեղծեցին, ներքին զգացումներու թելադրանքով յառաջացող գրիչը ա՛յնքան թարմութիւն բերաւ, դեռաւոր աղջկան հոգեկան փոթորիկէն ժայթքող շատրուանը յուզմունքի եւ գեղեցկութեան» ա՛յնքան ակնբախ էր, որ իսկոյն մամուլի միջոցով հանդանակութիւն կաղժակէր պըւեցաւ: Եւ Սէլամազը, Սկիւտար ծնած բանուորի աղջիկը ճամբայ ելաւ դէպի Փարիզ, Սորպոնի գրական դասընթացներուն հետեւելու եւ բնատուր ժիրքերը զարգացնելու համար:

Երբ տասնեոթ տարեկան Զօպէլ Յովհաննէսեանը Փարիզ ոտք դրաւ, իր իսկ բնորոշումով, հետեւեալ հոգեմիճակը ունէր. «Եւմ ախորժակս մեծ էր, ձգտումներս բազմազան եւ իմ լարուած էութիւնս առիթ կը փնտռէր ինքզինքը արտայայտելու շտապութեամբ եւ հրաշքով» («Սիլիխտարի պարտէզները»):

Դարավերջի Փարիզի հայ ուսանողութիւնը, — ինչպէս կը նկարագրէ Վեդդ համարներուն մէջ, — ամեկարագրելի քնառութեամբ մէջ կ'ապրէր: Շատեր յուսահատած էին, ոմանք հակառակն եւ կցկտուր հոգեմիճակներու մէջ կը տապալկէին, ոմանք հիւանդագին մեծամոլութենէ կը տառապէին, սակայն յաճախիկ անկարողութիւնը իրենց թոյլէր տակաւ կը կասեցնէր ու թեւերը կը խորտակէր, ոմանք ա՛յնքան անօթի էին, որ կը մըղւէին գողութիւն ընելու կամ նուաւտացուցիչ առաջարկներ ընդունելու, սակայն կային քիչեր ալ, որ կը յամուէին մաքառել մեծ քաղաքի անստուգութեան դէմ: Այդ քիչերէն եղաւ Զօպէլ Յովհաննէսեանը:

Այդ գրկանքներով լեցուն շրջանին իր փրկութեան լատը եղաւ գրականութեան մուրիումը, ինչպէս մասնաւորապէս արժանապատուութեան գիտակցութիւնը, ներքին մեծ հպարտութիւնը: Կարիքը Զօպէլի հոգին կը լեցնէր անհանդուրժելի անձկութեամբ, քանի որ աղքատութիւնը հաւատար էր տկարութեան, անկարողութեան եւ մարդիկ իրենք իրենց իրաւունք կու տային չբաւորին վրայէն կոխել անցնելու: Սակայն պայքարելու ընդունակ երիտասարդութիւն տոկաց ու ո՛չ միայն մնաց կանգուն ի պին մեծ գոհողութիւններու, այլեւ հակառակ շրջապատի անտարբերութեան, յամառեցաւ գրելը մեռքը պահել:

Այդ օրերուն մասին կը գրէ. «Մենք մեր սրտերուն, մեր կեանքին մոխումովը սպառնեցանք, մեծ-մեծ երազներ մեզ գիմովցուցին, մեզ խանդավառեցին ու ես իսկ շատ անգամ գեղեցիկ պատրանքներով թաքտեցայ» («Կեզդ համնաքներ»):

Այդ պատրանքներէն մէկը եղաւ իր ամուսնութիւնը նկարիչ Տիգրան Եսայանի հետ: Այս ամուսնութիւնը «Ժամանակաւոր կայեկոտութեան» մըն էր, անմիջական տպաւորութեան մը արդիւնքը: Սէրը իրեն համար աստիճանական կուտակում մըն էր հրաշքներու, երազներու, գորովանքի, միմյնեւ լրումի գագաթը՝ գերագոյն պահ մը, ուրկէ ետք կայ աստիճանական գումաքափումը զգացումներուն: Մէրն ու մայրութիւնը չկրցան բերել իրեն այն քաղցր անդորրութիւնն ու հոգեկան ներդաշնակութիւնը, որ կը լեցնեն կիներու մեծամասնութեան սրտերը բերկրանքով ու բարութեամբ: Ինչպէս կը գրէ «Հոգիս ախորհալիս մէջ». «Ամէն քան կ'անցնի, ամէն քան կը մարի,

ու մեր փոխադարձ զգացումներն ալ չէին կարող իրենց վախճանին չի հասնիլ: Ո՞վ էր յանցաւոր: Ոչ ես եւ ոչ ինքը աղաւաղաբար...»:

Ամուսնութեան ծախողութեան պատճառներէն պէտք է նկատել նաեւ նիւթական դժուարութիւնները, թշուառութիւնը, անասուգութիւնը, անձկութեամբ լեցուն օրերը: Միւս կողմէ՝ Զապէլի հօգոր անհասկանութիւնը ենթակայութիւն չէր կրնար ճանչնալ: Ինչպէս կը տեսնենք «Մեկիմա Նաւրի հանըմ»-ին եւ «Բաղը»-ին մէջ, ան նոյնիսկ արհամարհանք ունի այն կիներուն հանդէպ, որոնց կեանքի գերագոյն նպատակն ու երջանկութիւնը իրենց դուրսուն վերեւ տըր մը ունենալուն մէջ կը կայանայ, մա՛նաւանդ՝ որ այրերը իրեն համար զամբիտ եւ անգիտակ եմ խնայեցող եւ մանուկներու նման... կը խնայեցող եւ կը սմէին այն վայրկեաններուն, որ քէտէ էր որ խրախուսութեամբ բռնանային եւ կը ցրտանային այն ժամերուն, երբ պէտք էր որ մեղմանային վստահութիւն յայտնող հազարգուկանութեամբ մը» («Անձկութեան ժամեր»):

Զապէլ կը հաւատար, որ կիներ պէտք է կարենայ ինքզինքն թաւարարել, կատարելագոյն ինքնաբերել: Բայց եւ ա՛յ քէ եմքալայ ուրիշի մը: Կի՛ն մը կը դուրսի կրտսերական սարուկ բլլալէ, կը ներկայանայ իրեն արժանապատուութեան տէր գիտակից ու ազատ անհատ մը, երբ իր երջանկութիւնը կ'որոշէ ի՛ր սեփական ուժերով եւ իրմէ՛ր թափ միջոցներով: Վերջին քաժակը իր մէջ կը մանրամասնէ. «Ես կը սիրեմ եւ կ'ամուսնաւորեմ իմ զգացումիս մէջ, ինչպէս քրքուրը իր հիւսած բաժնովն մէջ եւ կը պարուրուիմ անով: Անկիւս կը դառնայ իմ նոր աշխարհս, իմ նոր օրէնքս ու երջանկութիւնս կը քաղեմ իմ խորքերէս: Իմ հոգիիս մէջ է, որ կը բխին անոր վնաս աղբիւրները, իմ հոգիիս մէջ է, որ կը ծաղկին անոր գեղեցկագոյն ծաղիկները...: Եւ ինչ որ զիս ամէնէն աւելի կը տխրացնէ, այն ամէն պահու նոր եւ քանկագին զգայնութիւններս են, որ կը գտնեմ ինքզինքիս մէջ»:

Զապէլի սարած կեանքը ցոյց կու տայ, որ սերը իրեն համար գեղեցկութիւն եւ արբեցում հաւաքել է եւ տեսնուելու է ա՛յնքան, որքան մեղուին ծաղկէ ծաղիկ թուկոտիլն ու նեկտար հաւաքելը: Զապէլի հոգին ծաղաւր ունի մեծ զգացումներու, մեծ յուզումներու, մեծ խանդալաւաւութիւններու, մեծ գոհալիքներու, մեծ տառապանքներու: Այս հոգեվիճակը պատճառ եղաւ, որ սիրտը թափառի մէկէն միւսը, առանց կարենալ մէկու մը վրայ երկար առեմ կեդրանանալու: Մէկը իր ուշադրութիւնը դրանց իր տապանդով, մէկը՝ իր հոգիի գեղեցկութեամբ, մէկը՝ ուշադրաւ յայտարարութեամբ մը, մէկն ալ իր տառապելու կարողութեամբ եւ ասոնք աղբիւր դարձան մեծ յուզումներու, բուռն զգացումներու, դորովանքի եւ երբեմն ալ տառապանքի:

Իր սերերը յաճախ ռամբօթիք բնոյթ ունին. ի՛նք կը կաղապարէ ու կը ձեւաւորէ իր սիրած անհատները՝ իր ներքին էութեան յատուկ օրէնքներով: Ինչպէս կը բացատրէ վերջին քաժակը իր մէջ. «Ես իմ մէջէս կը քաշէի այն յատկութիւնները, որոնցմով կը զարգարէի այս կամ այն անձը. ես կը կազմէի իտեալ մը եւ կը հիմանայի իմ կազմած եւ զարգարած տիպարիս վրայ. ինքնախաբէութիւնը ա՛յնքան կատարեալ կ'ըլլար, որ առաջին օրերը բոլորովին անճանաչող կ'ըլլայի իմ աւրախութեանս, կարծես թեւեր կը ստանայի, կարծես իմ շուրջս բոլոր արգելքները կ'անհետանային, կարծես կեանքս կը լուսաւորուէր իր սեփական արեւով, քայց այդ բոլորը պատրանք... եւ յուսախաբութիւնը չէր ուշանալ, եւ, այն մարդը, որ կը կարծէի սիրել,

քորիկներ ունեցած է: Բայց տարբերութիւնը այն է, որ ամէն մարդ կամ ամէն կին չի նանչնար իր հագին, յստակ կերպով չ'անգրադառնար անոր քաղձանքներուն եւ առանձին օրէնքներուն եւ կայր՝ ինքզինքին համար, աններող եւ խիստ է ուրիշներուն նկատմամբ»:

Իր *կեանքի ուղիին մասին Զ. Շալեան անվերապահ կը յայտարարէ*. «Կը տեսնէի այն կինը, որուն սկզբունքը գոյութիւն ունէր իմ էութեանս տարրերուն մէջ, շէնք աւ գորսւոր, կրակի պէս սաստիկ ու փոքորիկի մը պէս մրրկող, որուն հոգեկան ուժին փարթաւութիւնը զարմացում եւ հիացում պիտի պատճառէր»:

Իսկ «Վերջին րաժակը»-ին մէջ *կ'ընդունի, որ կեանքի պայմանագրական հղբերը իրեն համար գոյութիւն չունին*. «Իմ կենսութիւնս եւ հարուստ անհատականութիւնս երբեմն դժկամակութեամբ կը սահմանափակուէր եւ ժայթքումներու, ռատումներու աննպատակ քաղձանքներ երազանքի մէջ կը պահէին զիս... Տափակ ու միօրինակ կեանքը, առանց յազումի եւ առանց կլեկէի անպատի պէս ամուլ եւ ճանճարացուցիչ կը թուէր ինծի»:

Սակայն Զ. Շալեանի փոքորկալից կեանքը երբեք գոեկութեան չըյանգնցաւ: Շնորհիւ գեղեցիկը տեսնելու «ընտան տրամադրութեան», հոգեկան անսովոր յանդգնութեան, հպարտութեան, (եւս կանգուն եւ հպարտ անցեր էի կեանքի բոլոր դերակցներէն: Գետնաբար նուաստութիւնը չէր խոնարհած երբեք իմ գլուխս» (Վերջին րաժակը): Իր «սոյթաբուսներն» անգամ բարձրացան հասարակէն վեր եւ իրեն համար դարձան «հրաշագեղ երազներ», երբ իր հոգին ազատեցաւ առօրեային միօրեանկութենէն եւ ջերմացաւ իր իսկ ստեղծած հրաշքներով, տեսիլքներով, իր էութեան խորքերուն մէջ հիւսուած ապրումներով: Եւս իմ հոգւոյս մէջ որոնեցի եւ գտայ այն գոհարմարը, որոնցմով զարդարուեցաւ կեանքս, եւ քանիցս յաղթանակեցի ժամանակին եւ միջոցին, քանի որ պահեր եղան, ցաւի կամ ուրախութեան քանի որ միջոցին հոգիս քեզաբախումները զգացի յաւիտեանկանութեան մէջ» (Վերջին րաժակը):

Զ. Շալեանի համար մարդիկ ոչ միայն խաղալիք են իրենց ներքին կիրքերուն, հզօր ու հաւասարակ զգացումներուն, այլեւ անողոք նախատարականութեան մը: Ինչպէս «Վերջին րաժակը»-ին մէջ կը հաստատէ. «Երբ լաւ կամ գէշ վճռական րան մը պիտի պատահի մեր կեանքին մէջ, կարծես անկիւ նախաանհամեայ մըն է ու ամէն ինչ, նայնիսկ աննշան դիպումը, օտար պատահարները կը միանան, կը հանդիպին իրարու եւ կը նպաստեն անոր յառաջ գալուն»:

Զ. Շալեանի վէպերուն հերոսուհիները զոհեր են տնտրոջ ճակատագրականութեան: Կեանքի այս անիմապի օրէնքը սիրողները իրարմէ կը բաժնէ ու պատրանաթափ կ'ընէ: Իր թուր հերոսուհիներն ալ տուեալները ունին երջանկութիւն գտնելու, սակայն փոխանակ իրենց ունեցածը նուիրաբերելու, միշտ պահանջելու են, միշտ դժգոհ, միշտ կ'արհամարհեն իրենց սպասած երջանկութիւնը եւ կը ձգտին հասնիլ հոն, ուր միայն հիասթափութիւն պիտի գտնեն: Երբ անոնք վերջապէս կը սթափին եւ կ'ուզեն եւս դառնալ իրենց բռնած սխալ ուղիէն, ցաւով կ'անդրադառնան, որ այլեւս կարելի չէ կեանքը վերականգնել: Այսպէս ալ պիտի ըլլար իր՝ Զապէս Շալեանի կեանքը, ինչպէս պիտի տեսնենք իր յաջորդական փուլերուն մէջ:

(Շար. 1)

ՍՈՆԱ ԶԷԹԻԼԵԱՆ

digitised by

A.R.A.R.@

ԷՕԺԵՆ ԻՈՆԵՍԻԶՕ

Թ Ա Տ Ր Ո Ն

Ե Ի

ՀԱԿԱ - ԹԱՏՐՈՆ

ԳՐԵՑ՝

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻ



Իոնեսքոյի քննադատական խորք ունեցող ամէնէն բացորոշ, իր քննադատներուն դէմ ուղղակիօրէն յարձակողական բնոյթ կրող թատերադէպն է «Պատրաստաբանութիւնը կամ հովիւիմ գետնախիւծը» (L'Impromptu de l'Alma, ou Le Caméléon du Berger), որ գրուած է 1955ին, Փարիզի մէջ եւ առաջին անգամ բեմադրուած է 1956ի Փետրուարին, Շամ Գ'լիլիգի Սքիւտիօ անուն թատրոնին մէջ: Սկսելով նոյնիսկ իր խորագրէն, Իոնեսքո կը յայտարարէ իր հաւատքը ա'յն իրողութեան հանդէպ, որ յառաջապահները պարզապէս աւանդութիւնը վերանորոգող գրողներ են — ակնարկութիւնը որոշապէս կ'երթայ Մոլիէրի «L'Impromptu de Versailles» եւ Ժիրոմոուի «L'Impromptu de Paris» դարձերուն —: Մոլիէրի նման, Իոնեսքո բեմ կը բարձրանայ, գրելու համար թատերգութիւն մը, քնացած վիճակի մէջ, ձեռին ունենալով դիզաձեւ ձայրով գրիչ մը: Հոն, իրեն այցի կու գան երեք զարդացած բժիշկներ, որոնք հազած են ճիշդ Մոլիէրի «Որեւակայալամ հիւանդը» թատերգութեան մէջ երեւցող բժիշկներու նման եւ երեքն ալ կը կոչուին Բարթոլիմէոս — Բարթոլիմէոս Ա., Բարթոլիմէոս Բ. եւ Բարթոլիմէոս Գ.: Իոնեսքո այս եւրեք բժիշկներէն առաջինին կը բացատրէ, որ ինք գրելու վրայ է թատերգութիւն

մը, զոր պիտի կոչէ «Հովիւիմ գետնախիւծը», եւ որ յօրինուած է իրական գուրդիպութեան մը վրայ: «Ժամանակին, մեծ գիւղաքաղաքի մը մէջ, ճամբուն մէջտեղ, ամառուան ընթացքին, կէսօրէ ետք ժամը 3ին, տեսայ հովիւ մը, որ կը համբուրէր գետնախիւծ մը... Իրապէս, շատ սրտազրաւ տեսարան մըն էր պարզապէս: Որոշեցի զայն վերածել ողբերգական գաւելտի մը»: Բայց անշուշտ, այս բոլորը պարզապէս պատրուակ է, մեկնակէտը իր գրելիք թատրոնին: Իրականութեան մէջ, Իոնեսքո կը բացատրէ, որ անկէա պիտի ըլլայ թատերգութեան արուեստի մասին իր ունեցած գաղափարները արտայայտող թատերադէպ մը: «Եթէ կ'ուզես, կրնաս ըսել, որ ես եմ հովիւը, իսկ թատրոնը՝ գետնախիւծը: Որովհետեւ ես ընդունկած եմ թատերական ասպարէզը եւ, անշուշտ, թատրոնը կը փոխուի, որովհետեւ թատրոնը կեանքն իսկ է»:

Այս նախաբանէն ետք, Իոնեսքո կը

digitised by

A.R.A.R.@

կարգայ իր գրածը, որ կրկնութիւնն է մինչ այդ բեմին վրայ ներկայացուած գէպքերուն. աւելի՛ ճիշդ՝ Իոնեսքօ կը փորձէ տիպարային պատկերացումը ընել այդ բոլորին: Այդ միջոցին, վրայ կը հասնի երկրորդ Բարթողիմէոսը, որ կու գայ կրկնելով առաջինին խօսքերը: Կը հասնի երրորդ Բարթողիմէոսը, որ կ'ընէ առաջին երկուքին յար եւ նման արարքներ, կը կրկնէ նոյն խօսքերը եւ կը խնդրէ Իոնեսքոյէն կարգաւ գրած Թատերգութիւնը: Իոնեսքօ կը սկսի կարգաւ նոյն նախաբանը, գուռը նորէն կը զարնուի եւ կը Թուի հաստատուած բլլալ անկողնի շրջանակ (cercle vicieux) մը, որ պիտի տեսէ յաւիտեան, բայց դուռը զարնողը ներս չ'ընդունաւիք եւ մի՛նարանութիւնները կը սկսին: Նրեք բժիշկները պաշտպաններն են կէս-գոյտեթեան պաշտ եւ կէս-Պրեիսթեան Թատերական տեսութեան, յագեցած պատրանքներովը Ատամովի, որ Արիստոտելէն առաջ գիտեր ըրած էր արիստոտելեան սկզբունքներուն, պատրանքներովը Սարթիի, եւ, անշուշտ աճէն բանէ վեր՝ Իոնեսքոյի մօտեայաւորակ սեւ գազանին (bête noire), այսինքն՝ Պրեիսթի:

Իոնեսքօ բժիշկներու պատնասած ամբողջական ապուրթնէն կ'ազատագրուի իր սենեկապանուհիին մօտեցով, որ ամբողջ Թատերգութեան ընթացքին կը Թակէր դուռը: Այս կէտը Թատերգութեան մէջ կը մարմնացնէ հասարակաց զգայնութիւնն ու անխորհուրդ գոյութիւնը: Իոնեսքօ կը վերադառնէ իր հակադէմոսը եւ կը խոստովանի իր Թատերգարի ճակատագիրը: Ան կ'այսպէսն երեք քննադատները ա'յն յանցանքով, որ անոնք շատ վարդաբուն եւ չըջագայտութեան յատուկ զգեստներ հագած են, մինչ՝

«Փնմադատը պէտք է քացատրէ եւ ոչ թէ օտնամնէ... ան պէտք է դատէ զորք մը՝ անոր հայրաքանդած սեփական եզրերուն հիմամբ, համաձայն Եղիս օրէնքներուն, որ կը քննադատէ արուեստագէտին արտայայտութիւնը, համաձայն իւրաքանչիւր գործի սեփական ա-

ռասպելին, քափանցելով իւրաքանչիւրին յատուկ ներաշխարհը: Ոչ ոք կրնայ քիմիագիտական օրէնքներով մօտեմալ երաժշտական արուեստին, եւ ոչ մէկը կրնայ կեցեցեցեցութիւնը դասելով նկարչական եւ նարատարգիտական չափանիշներով... Ինչ կը վերաբերի ինձի, կը հաւատամ ազգային ազգատութեան եւ կը ցախմ անոր համար: Ասիկա իրաւ է եւ կրնայ իրքեւ նիւթ ծառայել քաղաքին: Ես կը հաւատամ նաեւ հարուստներու ունեցած հոգեբան եւ անկուրքիւններուն, բայց իմ պարագայիս ոչ ազգային դժբախտութիւնը եւ ոչ ալ հարուստին տխրութիւնը նիւթ կը հայրաքանդութեան ինձի: Ինձի համար քաղաքը աշխարհի ցալացումն է բեմին վրայ. իմ երազներուն, անկուրքեան, մութ փափակներուն եւ ներքին հակադրութիւններուն մէջն է, որ կը փնտռեմ քաղաքագութիւններուն քեման: Բայց քանի որ առանձին չեմ աշխարհի վրայ, ինչպէս յետ մէկը առանձին չէ այստեղ — ուրեմն, մեզմէ իւրաքանչիւրը, իր էութեան այնքան մէջ, ուրիշ յետ մէկուն հալածումն է: — Այսպէս, ուրեմն, իմ երազներս, փափակներս, անկուրքեան եւ մզմաւանդ միայն ինձի չեն պատկանիր. անոնք մտն մըն են նախահայրերուն ժառանգութենէն, շատ հին պատմաստ մը, ուր մարդկութիւնը միշտ իրաւատէր է»:

Այս կէտին վրայ Իոնեսքոյի աշխարհահայեցողը կը գտնայ աւելի եւ աւելի քրճական: Ան կը սկսի շահերտել ամբարկացի եւ գերմանացի հեղինակութիւններու անունները, եւ վերջապէս հարց կը դնէ, թէ իրապէս ինչպիսիքն կը մօտենա՞յ պէտք եղած լրջութեամբ: Ան կ'անգրադատնայ, որ ինչպէս է ի'ր իսկ շինած ծուղակին մէջ եւ կը գտնուի ուսուցողական (didactic) դառնալու վտանգաւոր կոչութեան մը առջեւ: Ան ինչպիսիք կ'արգարացնէ ա'յն բանին համար, որ, իր պարագային, քաղաքութիւն մը եղած է եւ ոչ թէ օրէնք մը, փոս մը՝ Պրեիսթի «Բացառութիւնը եւ օրէնքը Թատերգութեան մէջ»:

«Գիտնալիւծին պատրաստաբանա-

քիւնը» մեզ կը փոխադրէ վարդապետական եւ քաղաքական թատրոնի վերադարձներուն, որոնց մասին Քեննէթ Թեմանի հետ ունեցած բանավէճը աւելի ուշ պիտի դառնար փայլուն, բայց ոչ մէկ ձեռով կեդրոնական արժէք ներկայացնող դրուագ մը: Իոնեսքոյի դէմ կատարուած մեծագոյն յարձակումները կազմակերպուած էին ա՛յն քննադատներուն կողմէ, որոնք զինք նախապէս կը նկատէին նոր յառաջապահներու վարպետը եւ այդ մասին գրած էին Սարթրի «Լէ քամ մոտեն» եւ «Թէաքր Փոփիլէր» հանդէսներու էջերուն մէջ: Պարբերաթերթի մը (Թուագրուած 1 Մարտ 1956) մէջ լոյս տեսած «Աքսոնները» եւ «Գետնափնիքի» պատրաստարարութիւնը՝ Թատերգութիւններուն նուիրուած նշմարը երբեք զուգորդելու թիւն մը չի կազմեր Ատամովի լոյս բնծայած «Թատրոն, դրամ, քաղաքականութիւն» խորագիրը կրող յոգեածին հետ, ուր ան յայտնապէս կը խոստովանի իր սխալը, զոր գործած է՝ ցարդ ներկայացուցած Թատերգութիւններէն դուրս ձգելով ընկերային թեման. այդ Թատերգութիւնները կոչուած էին ունեւարու պատմական եւ ընկերաբանական խորք մը: Պէտք չէ զարմանալ, որ Մորիս Բընէտի ներկայացուցած «Աքսոնները», փոխանակ արժանանալու անվերապահ գնահատանքի՝ առիթ տուին հետեւեալ հարցումին. «Ինչո՞ւ, ուրեմն, այս բոլորով հանդերձ, մենք մեզ «խառնած» պիտի գգանք: Անո՛ր համար, որ մենք մղուած ենք հետաքրքրուելու բաներով, որոնք հիմնականին մէջ քնաւ կապ չունին մեզի հետ: Այս Թատերգութիւնը առարկայական ճշմարտութեան մը կը համապատասխանէ ա՛յնքան, որքան անոր քնարերգական խոստովանութեան տեսութիւնը: Աւելի քան Իոնեսքոն ինքը, մե՛նք է, որ պէտք ունինք հաստատուել այն վարկածին, որ կ'ըսէ. «Մէկը ամբողջ մարդկութիւնն է»: Բայց այն հին պատրանքը չի կրնար այլեւս լիցնել այս թատրոնին բաց ձգած տեղը: Թատրոնը երաժշտութեան վերածելը վերջին երազն է մանր քաղքենիներու, ու

որոնց սահմանումը Կորբէ տուած է հետեւեալ ձեւով. «Մարդ մը, որուն Ոստրնայութիւնը կ'երթայ իր անձին»:

Այսպէս, պայքարը միացած էր պատմական, ընկերաբանական, դիւցազնեղական, քնարերգական եւ բանաստեղծական թատրոնին միջեւ, վերածուելով երազներու, տրամադրութեան եւ լինելութեան թատրոնին: Յաջորդ էջերուն մէջ պիտի անդրադառնանք ժամանակակից թատրոնի արծարծած այս երկու հիմնական տեսակէտներուն: Այստեղ պէտք է մատնանշուի, որ Իոնեսքոյի եւ Պրեթի, ու այս վերջինին նոր հետեւորդին՝ Ատամովի ըմբռնողութեանց ուղիները կը բաժնուին ճի՛շդ այդ կէտէն, ուր Իոնեսքոն ինք կը մտնէ ընդունելու եւ յաջողելու աշխարհահայեացքին մէջ — ահաւասիկ կէտ մը, զոր հակառակորդները կ'ընդունին իրեն. փաստ ա՛յն իրողութեան, որ քաղքենիները ի վերջոյ ճանչցած են իրենց անկուսային տեսակէտներուն լաւագոյն արտայայտիչը եղող մարդը:

Ո՛չ միայն Ֆրանսայի, այլեւ ուրիշ քաղաքներու մէջ եւս, Իոնեսքոյի Թատերախաղերուն ներկայացումները աւելի յաճախակի դարձան: Միւս կողմէ, անպակաս չէին նաեւ դաշթակղութիւնները, ինչպէս էր պարագան Պրիւքսէլի մէջ, ուր հանդիսականները «Իտալ» Թատերախաղի կատարման ընթացքին իրենց գրած եւ պահանջներին, եւ գլխաւոր դերակատարը ստիպուեցաւ խոյս տալ կողմնակի դուռնէ մը: Այսուհանդերձ, անոնք անպասելի յաջողութիւններ արձանագրեցին Եւրոպայի ու Փոլանտիոյ մէջ, ուր «Աքսոնները» Թատերախաղը բեմադրուեցաւ առաջացած տարիքով երկու դերասաններու կողմէ, բանուորական տարազով, «Ճաղատ երգչուի» Թատերախաղին առաջին ծախող ներկայացումին հետեւող վեց տարիներուն ընթացքին, Իոնեսքոն բաւական ճամբայ կտրած էր: Ընդունուած հեղինակ մը ըլլալով՝ ան պարագայեալ կարգ մը տարօրինակ արկածախնդրութիւններով, որոնք կրնային իրեն նիւթ ծառա-

յէլ իր թատերախաղերէն մէկուն: 1957 Մայիսին, Լոնտոնի կարգ մը թերթերը տեղեկացուցին, թէ Ռինտոօրի զուգահեռ գտնուելու եւ տասը այլ հիւրեր, վերջերս, Փարիզի մէջ, արժանթիւնի միջոցառումներ տուելու պիտի հրապարակուէին: Անշուքեանի տունը ներկայ եղած էին աշխատող ներկայացման մը, եւ կ'աւելցնէ, թէ թատերախաղը բեմադրած էր ինքը՝ Իոնեսքո, Փիլա Պուլէզի կողմէ յորինուած յատուկ երաժշտութեամբ մը, որուն կ'ընկերակցէր հեղինակը: Լոնտոնի օրաթերթերը սկսան խորհրդածութիւններ հրատարակել այն կարեւորութեան վրայ, որ խաղը, թերեւս կարելի ըլլար ներկայացնել Լոնտոնի մէջ, բայց, ինչպէս նշեց թերթերէն մէկը՝ «Այս մէկը քիչ մը գլխացաւ պիտի պատճառէ Լորա Չամպրէյնի»: Նոյն օրը, 30 Մայիս 1957ին, «Երեկոյեան Լուրեր» թերթը նոյնիսկ խօսեցաւ Ռինտոօրի զբոսահիւր մասին, մերժած ըլլալով արտօնութիւնը Լոնտոնի մէջ պատկեր թատերախաղի մը ներկայացումին: Սակայն, համաձայն «Օրական Նամական» թերթին, Իոնեսքոյի թատերախաղը շատ խանդավառած է թէ՛ զուգահեռ եւ թէ՛ զբոսահիւր:

Իրականութեան մէջ, Իոնեսքոյի երկրորդ «Խնկրամփիլ» թատերախաղը անուղղակի, բայց ուր եւ ամբողջովին անպիտան, խմբային կատակ մըն է, կարճ ակնարկներով, որուն մէջ տանտիկինը կը խօսի հեղինակին եւ զերասանուհիի մը հետ, թէ ինչ կրնան ներկայացնել, որպէսզի զուարճանան դուքսը եւ դքսուհին: Այս իրողութիւնը ցոյց կու տայ մեղի Իոնեսքոյի մէկ խօսակցութիւնը՝ իր դործին մասին, եւ կու տայ դաժամար մը կատակերգութեան ու ոգրերգութեան էությունը ընդգրկող իր նախասիրած թեմային մասին: Երբ տանտիկինը

նր կ'առաջարկէ Իոնեսքոյին ներկայացրեալ «տխուր թատերախաղ մը, նման այդ նոր տրամաներուն, ինչպէս է Պէթէթի եւ Սոֆոքլէսի հետ, որոնք կրնան լացնել ժողովուրդը», ան կը պատասխանէ.

«Երբեմն, տիկին, կատակերգութիւնները աւելի կը լացնեն ժողովուրդը, քան տրամանները... Իմ կատակերգութիւններս այդ նկարագիրը անցնող քատերգութիւններ են: Երբ կ'ուզեմ աղբերգութիւն մը գրել՝ կը խնայեմ գիրքի, երբ կատակերգութիւն մը գրեմ՝ կը լացնեմ»: Կայ նաեւ շատ հաճելի բայց եւ անիմաստ տարբերակ մը անգլիական պատմութեան մասին, դիտուած Փրանսացիի մը կողմէ, ոգիներու շուրջ անհասկացողութիւններու նոյնքան յատկանշական յանդիմանութիւն մը: — Երբ տանտիկինին կողմէ իրեն կը հրաժեշտէր զատաթ մը ուիսքի, հեղինակը, ինքը կ'ըսէ, թէ ատկա ճիւղ է, մինչ դերասանուհին համին կը նայի ու կը մըմնէ, թէ պիտի տխրէին է: Երբ հեղինակը քաղաքավարութենէ մղուած, կու գայ մատուցուածք ընդունելու իբրեւ ուիսքի, միաներբ, կրկին քաղաքավար ըլլալու համար, կ'ընդունին իրարու մեկնաբանութիւնները՝ աւելի բարդացնելով անորոշութիւնը: Խօսակցութիւնը, որ կ'ըրնար զուարճացնել արքայական հիւրերը, ի վերջոյ կ'աւարտի կատարեալ անելով մը, եւ թատերախաղը կ'եզրափակուի սպասուհիին չեմբղանքներով: «Խլմնիկ Սքոմտըրտ» թերթին համաձայն, թատերադեր Մարսէլ Աշարին տիկինը, բեմադրութենէն ետք ըստ. «Իոնեսքոն միայն կրնար ձեռնարկած ըլլալ նման փափուկ նիւթի մը»: Առանձնաշնորհաւ հիւրերէն ուրիշ մը՝ Մալվատոր Տայի, պարզապէս նշեց, թէ «շատ ցնցել է»:

(Շար. 5)



Հելարներ

Տ Ե Ր Ո Ղ Ո Ր Մ Ե Ա'...

«Երիտասարդ Հայ» երկարաթաթերթի թիւ 37 համարին մէջ, Պարոյր Սեւակի մահուան առթիւ, Վահէ Օշականի ստորագրութեամբ «Սեւակէն ետք» խորագրեալ յօդուած մը կարգացինք, բայց ցաւօք, խորագրին հետ ենթադրելի նիւթէն աւելի՝ Վահէ Օշականին հանդիպեցանք հորէն: Եղբարախո բանաստեղծին եղբրական մահը առիթի մը վերածուած է յօդուածին մէջ ու յօդուածագիրը ալ ու ձախ վճիռներ արձակած է, կտտարած է ակնարկութիւններ, որոնք ի շարքի հասեալ մարդու մը անունին դիմաց առնուաղն զարմանալի կը թուին:

«Սեւակէն ետք» մեծ տոկոսով Սեւակին հետ աղերս շունչի եւ առհասարակ քիչ կապ՝ զրականութեան հետ: Կը սկսի արկածին մասին «սակաման» մը վկայութիւնը՝ պատմել, եւ պատմութիւնը հաղիւ վերջացուցած՝ թուղթին կը յանձնէ այդ պահուն միտքը յաճախած ամէն ինչ, առանց կարգի, զարգացումի, խորացումի, հիմնաւորումի, առանց հակակշռի, ուղղւած, խառնիխառն, ընդամենը երկու էջի մէջ երկու տասնեակ քմայքներ ու քմահաճ տեսակէտներ հանդիսադրելով:

«Սեւակէն ետք» գրութեան մէջ, ընթերցողը կը հանդիպի «Էկեսարացի ճաղատ հոգարարձուին», ու երկրորդ հերոսի մը՝ Գառնիկ աղային, որ խնդումներէս սերվիտ կը սպասէ, յետոյ երեսփոխանի շնթէօրին, վարժապետի կոորին, մազերը ճերմկած հարուստին: Դեռ կը տեսնէ շնթիւնը չորցած խմբագիրներ, կնիկէն փախած աւ կազմակերպութեան մը մէջ ապաստանած կէս-մտաւարականներ (ա՛խ, մեր զեկալարները, զոմէ մեքընս մը աւանանային):

«Գոնէ՛»: Բայց տղամա՛րդ տղամարդը երբեք չ'արտօներ ինքն իրեն նման «ստացուած քներու» մասին զեկուցում տալու, տղամարդը երբեք թո՛ւլ չի տար ինքն իրեն նման զեկուցումներ ունկնդրելու: Մենք պարզապէս կը ցաւինք նման հետաքրքրութիւններով հետաքրքրուող անձերուն հաշուոյն:

Իր միւս ախուժախերուն քով՝ աւելի բախտաւոր չէ Վահէ Օշական: Սեւակի առիթով, կ'ըսէ օրինակ.

«Սո՛ւտ է Սփիւտփի աղիխարշ գգացականութիւնը իր մահուան առթիւ: Պարզ շանագործումն է որ կ'ըլլայ իր ժողովրդականութեան»:

Բայց ինչո՞ւ սուտ պիտի ըլլայ եւ ինչո՞ւ այդպէս պիտի ըլլայ: Մարդիկ շանթարող լուրէն շանթահարուեցան ա՛յնչափով, որ կը սիրէին բանաստեղծը, կտպուած էին անոր, կը հպարտանային տուածով, կը հաւատաւորն տալիքին: Վերջին հաշուով, Սեւակի ժողովրդականութիւնը շահագործելու յանցանքով ամբաստանուածները այն նոյն մարդերն են, որոնք ժողովրդականացուցին Սեւակը: Կը թուի, թէ Վահէ Օշական մօտէն չի հետե-

ւիր հայ գրականութեան տօրեային եւ ամբողջութիւն մը արժանաւորապէս բնագործելու փոխարէն՝ ամբողջէն կ'անջատէ մասնակի երեւոյթ մը եւ... կը պոռթկայ:

Իր ձգած աննպաստ տպաւորութիւնը աւելի կը հիմնաւորէ Օշական, երբ կը գրէ:

«Իրականութիւնը այն է որ ցարդ Սեւակի մասին ոչ մէկ լարջ ու-
առմամբսիրութիւն չէ ստորագրած ոեւէ մտաւորական: Հետեւաբար չենք
գիտեր ով է իրապէս, ի՞նչ կ'արժէ ան»:

Իրականութիւնը այդ չէ՛: Տասնեակ դէմքեր, քննադատներ, բանաս-
տեղծներ, բանասէրներ յօդուած գրած են, բան ըսած են Պարոյր Սեւակի
մասին, գրած են մենագրութիւններ՝ (Սողոմոն Սողոմոնեան), բանասիրական
հատորներ՝ «Պարոյր Սեւակի չափածոյի բառապաշարը» (Արտ. Պապոյեան),
«Պարոյր Սեւակի կենսամատենագիտութիւնը» (Ն. Յովսէփեան), «մասնակի
ուսումնասիրութիւններ» «Անկախի զանգակատուն» պոեմի ոգնակա առանձ-
նայատկութիւնների մասին» (Վարազ Առաքելեան), «Ոգնաբանութիւն եւ վար-
տեւութիւն» (Մ. Աղաբաբեան), «Պարոյր Սեւակի սիրային պոեմները» (Ն.
Յովսէփեան), «Ամենից կրտսերը» (Գ. Մահարի), «Անկախութիւն, ճշ-
մարտութիւն, տաղանդ» (Մ. Աթաբեկեան), եւ դեռ Թաճրաղեանի, Վ. Խե-
չումեանի, Բ. Յովսէփեանի, Ա. Արիստակէսեանի եւ տասնեակ ուրիշներու
կողմէ ստորագրուած տասնեակ գրութիւններ:

Այս բոլորին անտեղեակ մարդը միայն կրնայ համարձակիլ ըսել, որ
«ցարդ Սեւակի մասին ոչ մէկ լուրջ ուսումնասիրութիւն չէ ստորագրած
ոեւէ մտաւորական»: Համարձակութիւն կ'ուզէ նոյնպէս լրջութենէ զուրկ
համարել վերոյիշեալ մտաւորականներուն գրական ու գիտական ճիշդ: Իսկ
եթէ Վահէ Օշական Սփիւռքի գրողներուն կ'ուզէ խօսքը, այդ պարագային՝
ո՞ր օրունան սղառած էր ի՞նչ, այսպիսի արտունջներ դուրս շտալու համար:
Բայց մենք երբեք չենք ուզեր այսպէս ըմբռնել խնդիրը, երբեք չենք ուզեր
Վահէ Օշականը տեսնել հայ մտաւորականութիւնը երկու հատուածի, արեւ-
ւելահայ եւ արեւմտահայ խումբերու բաժնելու նեղմտութեան մէջ: Իրական-
ապագային է, որ Վահէ Օշական չի ճանչնար վերոյիշեալ գործերը եւ իր
կամ անոնց բացակայութեան վճիռներ կ'արձակէ:

Եւրոպական գրականութենէն հաւաքած իր ծանօթութիւնները հայե-
րէն խմբագրած եւ հայ մարդոց հասցէագրած ատեն, Վահէ Օշական դեռ
կրնայ իր մտքերը խորհրդաւորութիւններով օժտել, բայց կը կարծենք,
թէ հայ գրականութեան պարագային աւելի զգոյշ ըլլալը աւելի՛ ուղիղ կը
համեմատի իր ծանօթութիւններուն:

Վերի մէջբերումին մէջ դեռ կայ ուրիշ խոստովանութիւն մը, որ բո-
լորովին խոտոր կը համեմատի Վահէ Օշականին շինել ուզած առասպելին,
ա՛յն առասպելին, որ իբր թէ աէր է մտաւորական անկախութեան մը: Ան-
շուշտ, ո՛չ ոք կրնայ դէմ ըլլալ նման կեցութեան մը, մտաւորական անկա-
խութեան համար դրօշակ պարզած բոլոր անձերուն հանդէպ յարգանք ու-
նինք մենք, մեր մօտ ըլլան անոնք թէ հեռու հեռաւոր երկիրներու տակ:
Բայց մտաւորական անկախութիւնը այնքան թեթեւ հասկացողութիւն չէ եւ
ընթացիկ արտունջներուն դէմ հանդիսադրուած հերոսութիւնները մտաւորա-
կան անկախութեան լուրջ նշաններ չեն: Աւելի խորունկ խորք մը ունի ա-
նիկա, ճիշդով, աշխատանքով, տոնջանքով, պատասխանատուութեամբ ու
տրամաբանութեամբ գլուխ բերուելիք հարստութիւն է: Խնդիրը այդպէս չի

ներկայանալ Վահէ Օշականին, իր անկախութեան տենչը մակերեսային մա-
կարդակ մը ունի զարգեալ, զուրկ է լուրջ հիմքէ, ինչպէ՞ս կրնայ լուրջ
հիմք ունենալ իր «անկախութիւնը», երբ նոյնիսկ Սեւակի պարագային կը
սպասէ որ ուրիշներ ուսումնասիրութիւն գրեն, որպէսզի յետոյ միայն հաս-
կրնայ, թէ «ով է իրապէս, ի՞նչ կ'արժէ» Սեւակ:

«Վա՛յ այն բանաստեղծին որ հանրային դէմք կը դառնայ», կ'ըսէ
նոյն յոգնածին մէջ:

Բայց ինչո՞ւ վա՛յ այն բանաստեղծին, որ հանրային դէմք կը դառ-
նայ: Ձարենց, օրինակ, քսան տարեկանին արդէն հանրային դէմք էր, Վա-
րուժան՝ քսանըհինգին, Սեւակ՝ երեսունին:

Վա՛յ եղաւ իրենց:

Վա՛յ մը կա՛յ անշուշտ գրականութեան մէջ ու վայր չի կրնար չփաթ-
թելիլ այն բանաստեղծին գլխուն, որ դէմք դառնալու համար խորամանկո-
րէն զիջումներ կ'ընէ հանրութեան: Երկու կարծիք չի կրնար գոյութիւն ու-
նենալ հոս: Մենք լրիւ կը բաժնենք Վահէ Օշականի նաեւ ա՛յն պնդումը,
բոս որ ուժ՝

«Հայ ժողովուրդը բանաստեղծի պէտք չունի բնաւ, եթէ միայն հան-
դէսներու արտասանութեան միւսքի կը կարօտի: Հայ բանաստեղծն ալ պէտք
չունի հայ ժողովուրդին, եթէ անոր գիրկընդխառնումը պիտի արգիլէ իր
մտածումի արտայայտութեան ազատութիւնը»:

Ի հարկէ՛: Եւ իրաւամբ, վա՛յ այն ժողովուրդին, որ միայն նման պա-
հերու պէտքը կը զգայ բանաստեղծութեան եւ նաեւ վա՛յ այն բանաստեղծին,
որ ստրկամտութիւնը կը հասցնէ այդ աստիճանին:

Բայց կարելի չէ ըսել, որ հանգչսի մը մէջ արտասանուած բանաս-
տեղծութիւնը ծափահարողները ամբողջներ են անպայման եւ կրկնէ՞ս հաստ-
րակութեան չափ բան չեն հասկնար բանաստեղծութենէն, կա՛մ՝ արտա-
սանուող բանաստեղծը բանաստեղծութիւն գրած է ծափահարուելու մեղա-
ւոր ցանկութեամբ: Յիշեցինք Ձարենցը, Վարուժանը, Սեւակը: Ծարուհա-
կելով յիշենք նոյնպէս Ձարենցի «Սումա», Վարուժանի «Հայնոյանէ»-ը, Սե-
ւակի «Անլոնի զանգակատուն» պոեմին ընտիր հատուածները: Անդիմադ-
րելի է առաջինին դահլիճութեան տենղը, Վարուժանի «Հայնոյանէ»-ը կըր-
նայ ալեկոծել ա՛նդամ ամէնէն անմշակ մարդը, Սեւակի «Անլոնի զանգա-
կատուն»-ը չի կրնար անտարբեր ձգել մէկ միլիոնին սուղը ապրող միւս մի-
լիոնին վերաւոր սիրտը, մեռելներուն մէջ կանգնած ու Սեւակի բերնով ա-
ղօթող կէ՛ս մեռելին սա աղաղակը:

— Տէր ոգորմեա՛,
Առաւել քան երբեւիցէ,
Եւ առաւել քան այլուրեք
Տէր ոգորմեա՛...

Տէր ոգորմեա՛ նաեւ մէկ միլիոն մարդկային էակներուն տրամբ խը-
տացնող այս պայթուցիկ տողերուն բովանդակած ապրումին անմասն մնա-
ցող մարդերուն, Տէր ոգորմեա՛ կրկին, ու վա՛յ տանք կրկին, ու շարունա-
կենք եւ հարց տանք...—

Երբ այս ընտիրները՝ Ձարենց, Վարուժան, Սեւակ իրենց անձը կ'ըն-
ծալարեւելին տղատութեան դաժան աստծոյն, կը հայհոյէին իրենց աղիւսա-

կան թուրքերուն բռնանդակ թափով, կամ անապատ փոխադրուած կ'աղաղակէին դառնագոյն իրենց աղօթքը, հանդէսներու մէջ արտասանուելու յետին մի'տք կը փառասիրէին, թէ թէժ կրակներու կ'ուխտէին իրենց անձը, կը հայհոյէին, հայհոյելու պէս կ'ազօթէին, որովհետեւ ուրիշ բան չէին կրնար բնել, չէին կրնար զօպել իրենց տարերքը, չէին կրնար չարարուիլ, չարարել: Ինչո՞ւ հայ ժողովուրդը պէտք պիտի չունենայ իր խորունկ ետին մէջ թաքնուած զօրութիւնները լոյսին հանող բանաստեղծներուն եւ ինչո՞ւ վայ այն բանաստեղծին, որ այս պայմաններով ժողովրդական կը դառնայ:

Հանրային դէմք դարձած գրողներուն դէմ արտասանուած վայը անհեթեթ համարող վերի արագ փորձը մտածել չի տար ի հարկէ, որ մենք հանրային դէմք դարձած գրողները միայն գրող կը համարենք եւ մեծ համարում չունինք հանրային դէմք չդարձած տաղանդներուն հանդէպ: Ինտրա հանրային դէմք չէր իր ողջուցը, ու չդարձաւ նաեւ յետ մահու: Նոյնը եւ Յակոբ Օշական: Բայց այդ հանդամանքը բնաւ պատճառ մը չէ, որ անոնք դադրին բացարձակ մեծութիւններ բլլալէ, անկրկնելի ու պաշտելի՝ բլլալէ: Ըսել կ'ուզենք՝ թէ՛ հանրային դէմք դարձածը կրնայ մեծ բլլալ, թէ այն միւսը, որ հանրային դէմք չէ եւ թերեւս պիտի չբլլայ երբեք: Գրողին համար կայ միայն մէկ պայման, ըսելիք ունենալու պայմանը, ո՞՞ւն ունենալու պայմանը, էջերուն մէջ ապրող բան մը ապրեցնելու պայմանը: Ատկէ դատ՝ զրակահոութիւնը կը մերժէ սահմանադէմը, սահմանափակումները, սահմանումներու նեղմտութիւնը:

Հանրային դէմք դարձած գրողներու հասցէին արտասանած իր վային պէ՛տ՝ Վահէ Օշական ունի նաեւ ուրիշ վայ-պայման մը, — քմբաստութիւնը: Ըստ իրեն, գրողին ու հանրութեան միջեւ պէտք չէ կապ գոյութիւն ունենալ, գրողը, ամէն գնով, պէտք է բժրոստանայ հանրութեան դէմ, հանրային կարգին, կանոնին, օրէնքին, օրինաչափութիւններուն դէմ, հակառակ պայուպային՝ չիք գրող: Այս բացարձակութիւնը դարձեալ կը սահմանափակէ զրակահոութեան բժրոնումը, կը զրկէ զայն այլադանութեան անհրաժեշտութիւնէն, կը մատնէ, ինչպէս պիտի ըսէր եղբորաբայտ Սեւակ, զազանային ճակատագրի մը, նոյնանմանութեան աղէտին: Մեծարենց, օրինակ, բժրոստ չէր, բնութեան ձայներուն, գոյներուն, երանգներուն մէջ տարրալուծուած խառնուածքի մը բխումն էր իր ամբողջ գործը, բայց կրնա՞ք ըսել, որ բանաստեղծ չէր երէկ եւ բանաստեղծ չէ այսօր ու դուրս կը մնայ մեր զգայնութեան ծիրէն:

Վ. Օշականի տեսակէտները հաստատուն հիմք չունին, իրականութեանց խորունկ ալբերէն չեն դար, ապրուած եւ ապա իր էութեան մաս կազմած բլլալու հանգամանք մը չունին, դիւրութեամբ որդեգրուած բաներ են մեծ մասամբ, որդեգրուած է մահաւանդ բժրոստութեան իր մարտահրաւէրը: Այս կապակցութեամբ ի՞նչ աւելի բան կ'ըսէ Վահէ Օշական, քան, օրինակ, Ն. Սարաֆեանը, որ ուղիղ քառասուն տարի առաջ իր սերունդին համար կ'ըսէր. «Այս սեռումը պէտք է աւելի առաջ տանի իր աշխատանքը, քառտագրելու իսկական լուսնակալումն ու կրօնական մտայնութեանն եւ դնելու զայն մտածման նշգրիտ նամբում վրայ»: Կ'ուզէք այդքան հեռուններ մի երթաք, քիչ մը միայն ետ գացէք ու «Բագինձի ա'յս թիւին մէջ կարդացէք Սարթի հիմնական պաղափարները ընդգծող յօդուածը (էջ 56-63) եւ արդէն կը կշտանաք բժրոստութիւնը ջատագովող մտքերով: Կայ սահման պղտիկ տարբերութիւն մը վերոյիշեալ դէմքերուն եւ անոնց արձա-

«Սուտ է ըսելը, թէ մենք գրականութիւնը կը սիրենք, աւաւմասէր
ենք, գգայուն ենք, եւ այլն»:

Այս ընդհանրացումը, իր կարգին, կը կարծենք, թէ ունի դարձնալ դուռ ենթակայական բնոյթ մը: Վաճէ Օչական վերի Հասարակ յայտարարը կազմած է անպայման իրրու գրականութիւն մէջտեղ նետուած կարգ մը խնդրամենքու հանդէպ մարդոց յայտնաբերած ցուրտ վերաբերումէն: Ձենք ուզեր այդ մասին ծանրանալ, բայց նաեւ չենք կրնար մեր պատմութիւնը եւ ի ծանոսութիւն հայ գրականութեան պատմութիւնը վկայականչելով չչնշտնի կրկին, որ մեր փողովուրդը սիրած է ու կը սիրէ գիրը, զայամբ եւ տաւ-թաբը, պայմանաւ, որ գիրը պայթուցիկ նիւթ մը բովանդակէ, զաշումբ արեան մէջ թափխուած բլլայ եւ տաւթաբը շնչաւորութիւնն իր արարչագործ դորութեամբ: Եթէ փողովուրդը չի սիրեր միայն զթուղթ ու թանաք՝ բլլալու դատաւարատուած գրական սեւաղբութիւնները, յամենայնդէպ, մեղաւորը ինք չէ, կր կարծենք:

Վերջացնելէ առաջ, այսինքն՝ «Սեւակէն իմ» հասնելէ առաջ, կ'ուզէինք ընթերցողին Հաղորդել Սեւակի կարեւոր երեք գործերուն մասին կատարուած Վ. Ոչականի հաշույնարդարքը —

«ՄԱՐԳԸ ԱՓԻ ՄԷՋ».

«Հատոր մը՝ ուր Սեւակ անկեղծ բայց ազգարդին ճիգը կը թափէ ա-
գառուելու իր հայտութեանն ու իր ենթակայական անձն, փշոյնու կեղծ պատ-
ւանդամը ու ռստելու մօր, աւելի բարձր ծիրի մը վրայ»:

«ԱՆԼՈՒԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ»

«Ի՞նչ է ի վերջոյ «Անլուէլի գանգաղատուն»ը, բայց եթէ խուժանի հ-
րախին նետուած հին ու մաշած ծամուզ»:

«ԱՍՅԱԹ՝ ՆՈՎԱ»

«Նայն նկատողութիւնը կարելի է ընել «Սպաշար-Նովա» մեմբերութեան մասին, որ զգացական կամ արտա-ակադեմական չեզումներ երբեմն կը տը-կարացնեն առաջ, ուժիզ զնացք քանստիրական մտածումին»:

Գիտի ըսինք միայն, որ այս ձևի տողեր գրելը այլևս համարձակու-
թեան հարց չէ, շարժառիթը գրական չէ, ուրիշ է շարժառիթը, որուն չնեք
ուզեր անդրադառնալ։ Միայն չհասցնուիք։ Սեւակի գլառասկի անգնենիք չէ։
Մենք Աստուծոյ Որդւոյն ղէմ գրտած գիրքերն անգամ հանձնոյցով կարգա-
ցած ենք։ Կ'ըսենք զիրեքը, մարդկային միտքը, հոգին, լիցիւրը հոր լոր-
սերու առջև բացող երկաթաշունչ ու տրամբանեալ, արդումները եւ ո՛չ թէ
մերկապարանոց յայտարարութիւնները, վերէն, քրիստոնէական արժանաւոր վը-
ճիւնները, որոնք կրտսն արժանուի, սեւէ միւսէն։ Ե՛ն

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

- ՄԻՋԵՐԿԻՐԱԿԱՆ (Բանաստեղծություններ), Ն. Սա-
րափեան, Պէյրուք, 1971
- ԶՐՈՅՑ (Դ. հատոր), Կ. Փօլատեան, Պէյրուք,
1971

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

ԽՈՍՐՈՎ ԱՍՈՅԵԱՆ

ԿԷՏԵՐ...

(Բանաստեղծություններ)

پاكين
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد اרתين كارنيك قزاقچيان

PAKINE

REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

ԲԱԿԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԴՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՆ ԱՐՊԻՆՍԵՐ

ՀԱՐԻՋ ԽՄԱԳԻՐ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՄԱԳԻՐ

Գ. ՄԱՊԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄԵՐ

Յ. ԴԵՂԱՐԳ

Տ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

Ն. ՊԱՐԹԵԻՍԵԱՆ

Ժ. ԱԹԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄԵՐԵՆ

† ԵՒ ՊՅՈՒՆՆԵԱՆ

Խմբագրություն հասցե

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

Հեռաձայնի թիվ 296898

ՏԳ. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

digitised by

A.R.A.R.@

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՐԱՆԱՆ	22 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	8 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՅԱՌ	2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան կապէր--

G. SASSOUNI

Rue Sélim Boustani
Beyrouth - Liban

digitised by

A.R.A.R.@